



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4576

II my h

291-99-8
S-46

1874

2010

2002

Мерт-Зел

град, 22-го июля

1874

№ 44

Ն. ՏԵՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՓՈՔՐԱՀԱՍԱԿ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԲ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ

Այբուբենից յետոյ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԿՐՈՐԴ տիպ.



Լրացրած այլ և այլ փոփոխություններով, յօդուածներով և
պատկերներով.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Въ Типографіи Амбарцума Эмфиадзіанъ и К^о.

1874



49.99-8

5-46

arm.
448.

448.

491.99-8
5-46

Ն. ՏԷՐ ՂԵՒՈՆԵՐԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՓՈՔՐԱՀԱՍԱԿ

ԻՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՆՍՐ

N. Des Ghevondian,

Second Livre de lecture en arménien,
pour les jeunes enfants.

3^e éd.

Paris, 1876

Impr. Imprimeries de la



Երևանի մեջ և Երևանի մեջ
ստորագրված է

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Въ Типографіи Амбарцума Эмфиаджянцѣ

1874



arm.
448.

448.

491.99-8
5-46

Ն. ՏԵՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՓՈՔՐԱՀԱՍԱԿ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԻ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ

Ա. յ ք ո չ ք ե ն ի ց յ ե տ ո յ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԿՐՈՐԴ տ ի պ.



Իրացրած՝ այլ եւ այլ փոփոխութիւններով, յօդուածներով եւ
պատկերներով:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ВЪ ТИПОГРАФИИ АМБАРЦУМА ЭНФИДЖИАНЦЪ К-о.

1874



ՆՈՐԻՆ

ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ

ՎԻՃԱԿԱՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ

ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

L

ՆՈՐԱՆԻՑ ԿԱԶՄՈՒՍԻՍ ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՏՓԻԽՈՒՄ

Խորին յարգանքով

ՆՈՐԻՆ

Աշխատասիրողը

Дозволено цензурою, г. Тифлисъ. 19 Июля 1874 года.

49808- ԵՖ



36388-66

Ա Ռ Ա Զ Ա Ռ Ա Ն

Մայրենի լեզուի երկրորդ մասը կազմելիս մենք հետևեցինք ուշիսկու մետոդային: Մենք մեր նպատակին չէինք հասնիլ, եթէ կուրորէն հետեւելով ռուսականին՝ ճիշտ բառացի թարգմանութեամբ մի գիրք լոյս ընծայէինք, այդ պատճառով կարելի եղածին չափ յարմարեցրինք նորան հայկական կեանքին, մանաւանդ գրքի երկրորդ հատուածը, որի բովանդակութիւնը աւելի կրօնական լինելով կատարելապէս հայացնելու կարօտ էր: Ուրեմն մենք ոչ թէ թարգմանեցինք, այլ թարգմանելով կազմեցինք—փոխադրեցինք (переработать):

Մայրենի լեզուի երկրորդ տարին երեք հատուած է բաժանուիմ: Առաջին երկու հատուածները կազմում են բուն ընթերցարանը, իսկ երրորդում սխտէմատիքական ձևով դասաւորուած են բերանացի և գրաւոր կրթութեան օրինակներ:

Առաջին հատուածում, որ կոչվում է **շ ու ը ը** և մ օ տ ը յօդուածների դասաւորութիւնը հիմնուած է տեղի վերայ, երկրորդ հատուածում, որ կոչվում է **տ ա ը ու ա յ** և **դ ա ն ա կ ն եր**, հիմքը կղև է ժամանակը:

Գրքի երեք մասն էլ միևնոյն ժամանակ պիտի ուսուցանել: Գլխաւոր հիմքը պէտք է լինի առաջին հատուածը, ուր առարկաները դասաւորուած են իրանց տեղին համեմատ: Այս հատուածի մէջ կէնդրոն է ընդունվում աշակերտը և ուսումնաւորանք, որից յետոյ չրջանք սկսվում է ընդարձակուիլ մինչև այն պահին և քաղաքը, ուր ապրում է մանուկը: Առաջին հատուածում, բացի չափաբերական կտորները, գլխաւոր տեղը բռնում են, այսպէս ասած, էական—գործնական յօդուածները, որպիսիք են: Մեր **ուսումնաւորանք**, **դասատու**, **հագնելիք**, **ամանեղէններ** և այլն: Այս գործնական յօդուածները միմիայն ընթերցանութեան համար չեն, այլ նորանք պիտի ծա-

ապեն իրեն նիւթ ուսուցչի զբուցադրութեան իւր սաների հետ, և որքան կարևոր է սորանց կանոնաւոր ընթերցումը, նոյնքան ևս կարևոր է բերանացի խօսակցութիւնը նորանց բովանդակութիւնից առած: Առաջ, քանի որ աշակերտը դեռ աղատօրէն է կարող բացաղբել իւր կարդացածը, սկստ է ուսուցիչը նախ ինքը խօսի այն առարկայի վերայ, որը դասի նիւթ է լինելու: Իսկ յետոյ երբ աշակերտը փոքր ինչ աւելի կըզարգանայ, կարելի է նախ կարդայնել աշակերտին և ապա պահանջել, որ կարդացածը իւր բառերով բացաղբի: Այնուհետև ուսուցիչը առաջարկում է հարցեր, դասի բովանդակութեան համեմատ, և այդ հարցերին աշակերտները պատասխանում են ընդարձակ նախադասութեամբ (կատարեալ պատասխանով): Միանգամ ընդ միշտ նկատում ենք, որ մեր ուսուցիչները զլսաւոր ուշադրութիւն դարձնեն այս բանի վերայ և դասից առաջ մտածեն, թէ ինչպիսի հարցեր պիտի առաջարկեն, որ դասի բովանդակութիւնը կատարելապէս պատասխանի, որովհետև սորա մէջն է զլսաւոր հմտութիւնը: Առհասարակ պէտք է խմացած, որ պատմողական բովանդակութեամբ յօդուածները բացաղբութեան ժամանակ հարցմունքները որքան կարելի է պէտք է քիչ լինին, և այն իսկ երբ աշակերտը պատմելիս զանց է աւելում մի նշանաւոր կէտ, կամ շիտիւմ է մտքերը: Իսկ զործնական կտորների բացաղբութեան ժամանակ, երբ մի առարկայ նկարագրւում է ամենայն կողմից—գննւում է—հարցմունքները կարևորեն, որովհետև այդ զննողութիւնը հարցութեամբ պատասխանով է լինում: Այնպէս որքան որքան օգուտն արան վերնագրով յօդուածը: Զբուցադրելուց և կարգաւորելուց, ուսուցիչը հարցնում է. Ո՞վ է լինում ուսումնարանում, որտեղ է նստում ուսուցիչը, որտեղ են նստում աշակերտները, ինչ կայ ուսուցչի մօտ, ինչով են զրում զբաղատալակի վերայ, ինչ տախտակներ են զրած աշակերտների առաջ և այլն: Յետոյ հարցերը բարդւում են. որտեղ են նստում ուսուցիչը և աշակերտները, ինչ կայ ուսուցչի մօտ և աշակերտների առաջ, ինչով են զրում զբաղատալակի և քարտատալակի վերայ: Յարցմունքներով յօդուածի նիւթ կգած առարկան բացաղբելուց յետոյ, պէտք է համեմատել նորան ուրիշ առարկայի հետ, ցայ

տալ, թէ ինչ յատկութիւններով նոքա նման են միմեանց և ինչով—զանազան, որքան հնարաւոր է այդ բանը: Իւրաքանչիւր զործնական կտորի մօտ զրուած է մի կամ մի քանի ոտանաւոր կամ առակ, որոնք վերաբերում են նոյն կտորին և նորա բովանդակութիւնը աշակերտի մտքում աւելի հիմնաւորապէս արմատացնելուն են նպաստում:

Գրքի երկրորդ հատուածը կարգալիս պէտք է հետևել, որ ընթերցանելի յօդուածը համապատասխանի այն ժամանակի և այն տօնի հետ, որը դասի նիւթ է եղել: Երկրորդ հատուածում ևս պիտի մի և նոյն մետօղը, պահպանել, ինչոր առաջինում:

Երրորդ հատուածը բովանդակում է իւր մէջ բերանացի և գրաւոր կրթութեան օրինակներ, որոնց նպատակն է նախապատրաստել աշակերտներին ապագայում տրամաբանական և քերականական կուրսը սխառմատիքաբար հետաւելու: Նոյնպէս գրաւոր աշխատութեան ընտելացնելով, նոյնա մէջ ուղիղ և զբաղմունքներն խօսելու և գրելու ընդունակութիւնը զարգացնել: Միայն այս կրթութիւնները պէտք է անցնել կից ընթերցանութեան հետ, որ մի գուցէ նորանից բաժանելով մեքենայական ձև ստանանար և սովորուէր մոռացուելու համար: Նշմարելով, որ աշակերտը արդէն ծանօթ է առարկային, կրթութիւնները սկսվում են նորա զանազան յատկութիւններից (քերականական լեզուով խօսելով—ածական անուններից) ապա գալիս է նոյն փոփոխութիւնը, գործողութիւնները, և վերջապէս № 25 պարզ նախադասութիւնը իւր ընդարձակութեանն է հասնում:—Իհարկ է, ուսուցիչը կրթութիւնները կարող է սկսել, որտեղից յարմար համարի:—№ 27-ից գալիս են քանի մի նիւթեր (թէմաներ) զրաւոր աշխատանքի (չարադրութեան) համար: Ուսուցիչը իւր կողմից այդպիսի նիւթեր գրքի միջից պիտի ընտրի ըստ կարելոյն շատ և առաջարկի աշակերտաց, չարադրութեան համար:

Մենք աշխատելիք, որ զրքի երկրորդ տպադրութիւնը աղատ լինի մինչև այժմ նշմարուած պակասութիւններից, բացի սորանից աւելացրինք քանի մի կարևոր յօդուածներ և պատկերներ:

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Եւրդը եւ վօտը:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՈՒՄ ԵՒ ՏԱՆԸ:

Ուսուցիչը պարանոսով:

Եղբայրն ուսումնարանից եկաւ տուն:

Նորա փոքրիկ քոյրը հարցրեց, թէ դուք ուսումնա-
րանում ինչէք անում:

Մայր. լեզ. ր. տ. Ն. Տ.—Ղ.

Եղբայրն էլ պատմեց բոլորը, ինչոր ուսումնարանում պատահում է:

Ուսուցիչը նստում է աթոռի վերայ, սեղանի մօտ: Աշակերտները նստում են նստարանների վերայ: Ուսուցչի մօտ դրած է մէկ մեծ գրատախտակ: Գրատախտակի վերայ գրում են կաւիճով: Աշակերտների առաջ դրած են քարե տախտակներ: Քարե տախտակների վերայ գրում են քարե գրչով: Ուսուցիչը ուսուցանում է: Աշակերտները ուսանում են: Ուսուցիչը դաս է հարցնում: Աշակերտները պատասխանում են: Աշակերտներից մէկ քանիսը զրում են, միւսները կարդում են, իսկ ոմանք նկարում են:

Այսպէս է լինում եւ ծեր ուսումնարանում. պատմեցէք:

Մանկական ակնոց:

Մանուկը ասաց իւր հօրը. «հայրիկ, գնիր ինձ համար ակնոց. ես էլ քեզպէս կամենում եմ կարդալ:

— Լաւ, պատասխանեց հայրը, ես կ'գնեմ քեզ համար ակնոց, միայն մանկական—եւ գնեց նորա համար այբբենարան:

Աքաղաղը և մարգարտի հատիկը:

Աղբանոցում քջուջ անելիս քաղաղը գտաւ մի մարգարտի հատիկ, և ասում է՝ այս ինչ անպէտք բան է. յիմարութիւն չ'է, որ սորան այնպէս թանկ են գնահատում: Զմարիտ, ես աւելի ուրախ կ'լինեի, եթէ մի ցորենի հատիկ գտնէի. նա, թէև այնքան գեղեցիկ չէ, բայց կշտացնող է:

Հրաւեր դէպի ուսումնարան:

Հաւը խօսեցաւ, օրը բացուեցաւ. արեւն էլ վաղուց ելաւ, բարձրացաւ: Խելօք մանուկներ, շուտ հագնուեցէք, շուտով դասատուն՝ դուք հաւաքուեցէք:

Մարդ և անասուն, գաղան և թռչուն, ամենքն էլ իրանց գործին են գնում: միջիւնը բերնով կերակուր տանում, մեղուն ծաղկիցը հիւթեր է ծծում:

Պաշտը գոյն զգոյն ծաղկով զարդարուած, մարգագետինը փանաչ հագնուած, անտառն ձմեռուայ քնից արթնացած՝ իւր տերեւները շարժում է կամաց:

Ձկնորսներն իրանց ուռկանն են քաշում, հնձողներն իրանց մանգաղը շարժում . . . — Դուք էլ, մանուկներ, ձեր գրքերն առէք. Աստուած ծուլութիւն չէ սիրում երբէք:

Առաւօտեան ճառագայթները:

Կարմիր արեւը բարձրացաւ երկինքը և սկսեց ցրուել դէպի ամենայն կողմեր իւր ոսկեփայլ ճառագայթները, որ արթնացնէ երկիրը:

Առաջին ճառագայթը թռաւ—ընկաւ արտուտի վերայ: Արտոյտը թըրպըրտաց, թափ տուեց թւերը, դուրս թռաւ բնից, շատ ու շատ բարձրացաւ և երգեց իւր գեղեցիկ երգը. Ա՛խ, ինչքան լաւ է առաւօտեան պարզ և թարմ օդի մէջ թռչիլը, ինչպէս լաւ, ինչպէս ազատ է:

Երկրորդ ճառագայթն ընկաւ նապաստակի վերայ: Նապաստակն ականջները շարժեց և ուրախ ուրախ թռչկոտաց ցօղապատ մարգագետիններում. — վազեց — գնաց նախաճաշիկ անելու հիւթալի խոտերով:

երրորդ ճառագայթը մտաւ հաւաքունը: Աքաղաղը թափահարեց իւր թւերը և երդեց. «Ծնւ—ղընւ—ղընւ: Հաւերը ցած եկան թառերից, կրկնուցին, սկսեցին քջքջէլ աղբը և ճիճուններ ուրնել:

Չորրորդ ճառագայթը ընկաւ փեթակի վերայ: Մեղուն գուրս սողաց իւր մոմեղէն խցից, կանգնեց փեթակի դրան առաջ, ուղղեց իւր թւերը և բզկարով թռաւ—գնաց մեղր հաւաքելու հոտաւէտ ծաղիկներից:

Հինգերորդ ճառագայթը մտաւ մանկանոցը և ընկաւ փոքրիկ ծոյլ մանուկի անկողնու վերայ՝ ու սկսեց ուղղակի նորա աչքերը ծակծրկել. բայց նա դարձաւ միւս կողքի վերայ և նորից քնեց:

Ի՞նչպէս կանէր աշխատասերը:

Ամեն բան իրան տեղը:

Սարգիսը, հենց վեր էր կենում թէ չէ, սկսում էր իւր բաները որոնել. նորա մէկ գուլպան աթոռի վերայ էր լինում, միւսը սեղանի տակը, կոշիկի մի հատը մահ—ճակալի տակ վայր ընկած, իսկ միւսը սենեակումն էլ չէր լինում: Ման էր գալիս Սարգիսը ամենայն առաւօտ, այս կողմն այն կողմն էր ընկնում և միշտ դասից ուշանում էր:

Ի՞նչպիսի երեխայ էր Սարգիսը:

Գրատախտակ:

Գրատախտակը շինում է ատաղձագործը փայտից և ներկարարը ներկում է նորան սև գունով: Նա քառանկիւնի ձև ունի և դրած է շարժական ոտների վերայ կամ կախած է պատից: Գրատախտակը միշտ դասատանն է մնում: Նորա վերայ գրում են կաւիճով:

Այսպէս է եւ ձեր գրատախտակը. Համեմատեցէք:

Քարետախտակ:

Քարետախտակը կտրում են քարաշները շերտաքարից, իսկ հիւսնը նորան դնում է փայտէ շրջանակում: Քարետախտակները դրած են գրասեղանների վերայ՝ աշակերտների առաջ: Աշակերտները իրանց քարետախտակները հետները տուն են տանում: Քարետախտակի վերայ գրում են քարեգրչով:

Այսպէս են եւ ձեր քարետախտակները. Համեմատեցէք քարետախտակը գրատախտակի հետ:

Վայ այն մարդուն, ով ոչ ոքի բարութիւն չէ անում:

«Գրիգոր, շնորհիւ, խնդրեմ, քո մատիւրը:» Գրիգորը պատասխանում է: «Քոնը կարող ես բանեցնել, իմն ինձ հարկաւոր է:»

«Գրիգոր, օղնիր ինձ, որ գրքերս պայուսակիս մէջ դարսեմ:»

Գրիգորը պատասխանում է. «Ե՛հ, գրքերը քոնն են, ինքդ կարող ես դարսել:»

Սիրում էին արդեօք ընկերները Գրիգորին:

Մեր դասատուներ:

Մեր դասատուներ մի մեծ սենեակ է: Այս սենեակում կայ յատակ, առաստաղ և չորս պատ, որոնցից երկուսը երկար են, իսկ երկուսը կարճ: Առաստաղը սալիտակացրած է, յատակը ներկած է դեղին գունով, պատերին կպցրած են կանաչ պատուտներ: Պատերում շինած են դռներ և լուսա-

մուտներ: Լուսամուտներից մտնում է լոյսը, իսկ դռներից մտնում են մարդիկ: Սենեակի մի անկիւնում դրած է վառարան, երկրորդում՝ պահարան դասական առարկաների համար, իսկ երրորդում՝ գրատախտակ: Սենեակի մէջ տեղում շարած են նստարաններ աշակերտների համար, իսկ նստարանների առաջ դրած է սեղան և աթոռ ու սուղջի համար:

Հացն ուտելով, բանն անելով:

Վաղուց է, որ երեխան լուսամուտի առաջ նստած պտորաստում է իւր դասերը և շատ ժամանակ է, որ փայլուն արևը դրսից նորան հրաւիրում է. «Բաւական չէ, ինչ կարդացիր, վեր կաց, խաղերդ սկսիր»: Իսկ երեխան արեգակին պատասխանում է: Ո՛չ, պայծառ արևիկ, ո՛չ. այժմ խաղն միջոց չունիմ. թո՛ղ, առաջ դասերս վերջացնեմ»: «

Երեխան գրում է ու կարդում. իսկ պատուհանի տակ, ձղան վերայ նստած, սիրուն թռչունն է երգում և միշտ այս բանն է ասում. «Բաւական չէ, ինչ կարդացիր, վերկաց, խաղերդ սկսիր»: Իսկ մանուկը թռչունին պատասխանում է. «Ո՛չ, սիրուն թռչնակս, ո՛չ. այժմ խաղն միջոց չունիմ, թող առաջ գործս վերջացնեմ»: «

Մանուկը դարձեալ նստած է գիրքը առաջին և լուսամուտին էլ չէ նայում. իսկ պարտիզի կարմիր կեռասը ականջի տակ միշտ ասում է. «Բաւական չէ, ինչ կարդացիր, վերկաց, խաղերդ սկսիր»: Մանուկը կեռասին պատասխանում է. «Ո՛չ, իմ քաղցրատես կեռաս, Ո՛չ. այժմ խաղն միջոց չունիմ, թո՛ղ առաջ դասերս վերջացնեմ»: «

Մանուկը կարդաց և գրեց, բոլոր գործը վերջացրեց, գրքերն արկղն մէջը դրեց, ապա դէպի այգին վազեց և համարձակ ձայնով զոչեց. «Ս.յն ո՞վ էր, որ ինձ հրաւիրում էր»: Արեգակը այժմ նորա համար աւելի լաւ էր փայլում. փոքրիկ թռչնակը իւր երգը նորան էր նուիրում. իսկ կեռասինն ծիծաղաղէմ քաղցրիկ պտուղ էր ընծայում:

Տ ա ն ը:

Քոյրը եղբորը հարցրեց, թէ քեզ համար ո՞րտեղ է լաւ, տանը, թէ ուսումնարանում: «Ուսումնարանն էլ վատ չէ, պտուտսխանեց եղբայրը. բայց տունն աւելի լաւ է: Տանն են իմ հայրս ու մայրս, եղբայրներս ու քոյրերս: Հայրս մեզ համար աշխատում է, մայրս կառավարում է տունը: Աղախներ լուանում է մեր շորերը, իսկ մանուկները ուսանում են կամ խաղում: Տանը ամեն բան ինձ ծանօթ է՝ սեղանները, աթոռները և պահարանները: Ես վազվզում եմ ամեն սենեակներում: Մտնում եմ առանձնատնեակը՝ հօրս մօտ, ննջարանը՝ մօրս մօտ. ես մտնում եմ դահլիճը և ընդունարանը, մտնում եմ և խոհանոցը, ուր ճաշեց առաջ այնպիսի գեղեցիկ անուշահոտութիւն է բուրում, և մառանը, ուր կեռերի վերայ կախած են շատ պատուական իրեղէններ: Տանը առաւօտեան մենք նախաճաշիկ ենք անում, կէսօրին ճաշում ենք, երեկոյեան ընթրիք ենք անում, իսկ գիշերը հանգիստ քնում ենք մեր մահճակալների վերայ: «

Դուր ինչէր անում տանը, պտուտեցէք եւ համեմատեցէք:



Մեր տունը:

Մեր տունը փոքր է: Նա միայնակ է և ունի ութը սենյակ. դահլիճ, բնդուհարան, սեղանատուն, ննջարան, մանկանոց, առանձնասենյակ, նախասենյակ և խոհանոց: Դահլիճը ամենամեծ սենյակն է, իսկ նախասենյակը ամենից փոքրը: Մանկանոցը առանձնապես մեզ համար է — այնտեղ մենք պատրաստում ենք մեր դասերը: Նա ունի չորս լուսամուտ և երկու դուռը: Մեր սենյակը շատ լոյս է, որովհետև պատուհանները մեծմեծ են: Սենյակի մէջ անկիւնում վառարանն է շինած, իսկ միւս անկիւնում դրած է մեր գրքերի և թղթերի պահարանը: Սենյակում կայ մէկ սեղան և մի քանի աթոռներ: Պատերի վերայ կախոտած են շատ կենդանիների և բոյսերի նկարներ. նորանք մեզ հարկաւորվում են դասներս պատրաստելու ժամանակ:

Խ Ր Ճ Ի Թ:

Կէս զիշերին պայծառ լուսինն
Երկնքումը բարձրացաւ,
Աղօտ ճաճանչները սփռեց
Եւ խրճիթը լոյս առաւ:

Փոքրիկ խուղէր, վատարկ ցեխից
Անշքապէս նա շինած,
Մի դուռն ունէր ցած և նեղլիկ
Եւ մի երզիկ էլ բացած:

Լուսնիակի աղօտ լոյսը
Երզիկիցը ներս թափանցեց
Եւ նայողի աչքի առաջ
Այս տեսարանը բացեց.

Խրճիթի մէջ, երզիկի տակը
Կողոր հնոց կար շինած,
Նորա շուրջը երեք հոգի
Գործը ձեռքին նստոտած:

Պառաւ կինը ճախարակը
Վարպետութեամբ պտտում էր,
Արագ արագ նա կազմում էր
Բրթէ թեւից վիլաներ:

Համեստադէմ կոյս աղջիկը
Սանդերքն առաջը դրած
Հանդարտութեամբ բուրդ էր գզում
Իւր մայրիկի մօտ նստած:

Երիտասարդ տղամարդը
Արագ արագ տաշում էր,
Եւ մի ժամից ողջ գութանը
Վաղուան համար պատրաստ էր:

Հաւը խօսեց: Պառաւն մեղմով
Չեռքի քուլան վերջացրեց.
— Կէս զիշերը վաղուց անցաւ,
Պէտք է քնել, նա ասեց:

Անցան ժամեր: Եւ խրճիթում

Խոր լուսթիւն էր տիրել,

իսկ աղջիկըն արիաջան

Քնիցը վեր էր կացել:

Լուսամուտից նա դուրս նայեց

եւ շրթունքը մեղմ խաղաց.

Արշալոյսը նոր բացվում էր,

կուժն ուսեց, ջուրը գնաց:

Խորճի ներսը:

Ցած խորճի մէջ, որի պատուհանները բաց էին, մութ գիշերին մէկ ձիթի ձրագ էր այրվում: Հնոցի (օջաղի) թոյլ կրակը կամ բոլորովին հանգչում էր, կամ իւր աղօտ լուսով լուսաւորում էր ծխից դեղնած պատերը: Խորճի շատ մաքուր աւելած էր. լուսամուտի կտաւէ վարագոյրը մթութեան մէջ սպիտակին էր տալիս. յատակը կոկած էր, առաստաղի գերանները երևում էին. սենեակի մէջ տեղը մեծ հնոց կար շինած, իսկ պատի մէջը մի փոքրիկ վառարան: Արևմտեան պատի մօտ երկար տախտ էր կապած և նորա վերայ հին կապերտներ էին սփռած, իսկ հիւսիսային պատի մօտ դրած էր մէկ մահճակալ, որից բարձր, սիւնի վերայ՝ կախէր արած քաջ գիւղացու փայլուն զէնքերը:

Այժմ օրէնք չէ:

Մկրտիչը ներս վազեց այգին, խեց իւր քոյր Սաթի-նիկի ձեռքից տիկինը և սկսեց վազվզել այգումը, նստած իւր փայտէ ձիու վերայ: Սաթինիկը կանգնած լաց էր լինում: Մկրտիչ մեծ եղբայր վահանը դուրս վազեց տանից:

վահանը կամեցաւ ինքը խաղալ, այս պատճառով խեց Մկրտիչի ձեռքից տիկինն էլ, ձին էլ: Մկրտիչը գնաց, գանգատուեցաւ հօրը. իսկ հայրը, լուսամուտի առաջ նստած՝ բոլորը տեսել էր:

Ի՞նչ ասաց Մկրտիչին հայրը.

Ի՛նչպէս են շինում տները:

I.

Փայտէ տները շինում են հիւսնները գերաններից: Քարէ տները շինում են որմնադիրները աղիւսից կամ տաշած քարից: Ամենից առաջ հիմքն են դնում: Հիմքի վերայ բարձրացնում են պատերը: Պատերի մէջ թողնում են բացուածներ՝ դռների և լուսամուտների համար: Երբոր պատերը բարձրացնում՝ պրծնում են, ապա զցում են նորանց վերայ գերաններ, իսկ գերանների վերայ կոճեր: Յետոյ նորա վերայ շինում են կտուրը: Կտուրը թեքուած է լինում, որ անձրևների ջուրը վերան չ'կանգնի: Կտուրները ծածկում են հողով, երկաթով կամ ծղօտով: Ո՞րտեղ էք տեսել դուք ծղօտէ կտուրներ:

II.

Տունը դրսից պատրաստ է, բայց նորա ներսից դեռ էլ չատ գործ կայ: Պէտք է յատակը և առաստաղը տախտակել, վառարանները պատրաստել, դռները կախել. լուսամուտների փեղկերը հագցնել: Պէտք է պատերը կամ ներկել կամ թուղթ կպցնել: Երբոր տունը պատրաստվում է, նորա մէջ բերում՝ դարսում են զանազան կարասիներ, և ամանեղէններ. յետոյ կանչում են քահանային: Քահանան

օրհնում է տունը և այնուհետև սկսում են նորա մէջ բնակուիլ:

Պատմեցէք մի առ մի, թէ ինչպէս են շինում տունը:

Մեր ընտանիքը:

Մեր ընտանիքը փոքր է: Ես ունիմ հայր և մայր, երկու եղբայր և երկու քոյր. ես ամենից մեծն եմ: Մենք ունինք էլ մի պառաւ տաս: Նա շատ սակաւ է տանից դուրս գալիս, այն էլ ժամ է գնում: Նա մեզ շատ է սիրում և փայտաշէն է:

Իմ հայրս շատ է աշխատում. նորա աշխատանքովն ենք կերակրվում և հագնվում մենք ամենքս: Մենք առանց նորան ինչպէս կարող ենք ապրել, ասում է շատ անգամ մայրս:

Մայրս տնտեսութիւն է անում. նա հրամայում է ձաշ և ընթրիք պատրաստել. նա գնում է ներքնատունը և մառանը: Բայց որ խմանաս, թէ ես ինչպէս սիրում եմ նորա հետ մառան գնալը: Ամբողջ օրը մայրս մեզ համար հոգում և շորեր է կարում: Նա սովորեցնում է մեզ խաչակնքել և աղօթել: Մենք երեկոյեանները քնելիս միշտ աղօթում ենք:

Ես մէկ փոքրիկ քոյր էլ ունեի, բայց նորան տարան գերեզմանատուն և դրեցին կանաչ բլրակի տակ: Մայրս մինչև այսօր լաց է լինում մեր փոքրիկ Նղիսաբէթի վերայ:

Որոնցիցէ բաղկանում են ընտանիքը: Համեմատեցէք մեր պատմածը կարդացածներիդ հետ:

Հինգերորդ պատուիրանը:

Պատուիր քո հօրը և քո մօրը, որ քեզ բարի լինի և որ երկայնակեաց լինիս երկրի վերայ:

Մայրը և որդիքը:

— Ի՞նչե, մայր իմ, զու անդադար Մեր քրոջ անունն ես յիշում:

Լաւ երկրում է մեր էլիզան,

Դու ինքդ ես մեզ ասում:

«Ա՛խ, ես գիտեմ, լաւ երկրում է,

Բայց այնտեղ ո՛չ հովիտ կայ,

Ո՛չ ծաղիկ, ո՛չ խոտ հոտաւէտ,

Ո՛չ թիթեռներ գարունքուայ:»

— Մայրիկ, մայրիկ, երկնքումը

Հրեշտակներն են երգ երգում,

Կարմրազգեստ զօրք է ընթանում,

Աստղերն ուրախ են ծնմում:

Բայց ա՛խ, այնտեղ նա մայր չունի,

Որ լուսամուտից նայէր,

Թէ ինչպէս նա ծաղկի փունջեր

Կանաչ հովտից կ'քաղէր:

Որքի օրը սե է:

Նիկողայոսը ներս վազեց իրանց հարեանի տուն և տեսաւ, որ այնտեղ շատ անկարգ է. երեխայքը կեղտոտ, շորները պատռտուած, գլուխների մազերը գճճուած և չսանրած: Փոքրերը վեր էին թափած կեղտոտ յատակի վերայ, ուրիշ երկուսն էլ կռվում էին, իսկ ամենից մեծը հիւանդ պառկած էր և ոչոք չկար, որ նորան նայէր, խնամք տանէր: Այս ամենը տեսնելով, Նիկողայոսը միտքը բերեց, որ իւր հարեանի կինը մօտ օրերում վախճանուել է, մտաբերեց և իւր մօրը, վազեց իրանց տուն և փաթաթուեցաւ իւր ծնողի վզով:

Ի՞նչէ անում, մայրը իւր որդոց համար:

Դ ե ղ:

Հայկանուշի մայրը հիւանդացաւ և բժիշկը նորա համար դառը դեղ պատրաստեց: Աղջիկը տեսաւ, որ մայրը դժուարութեամբ է խմում և ասաց նորան. «Սիրելի մայրիկ, տո՛ւր ես քո փոխանակ խմեմ դեղը:

Օրօրոցի երգ:

Ննջեր, որդեակ իմ սիրուն,
Ննջեր հանգիստ դու ի քուն.
Քեզ ծծմայր ես վարձեցի
Արծիւ, արև ու քամի:
Արծիւն իւր բունը թռաւ.
Արևն սարից անցկացաւ.
Քամին երեք օրեց յետ
Իւր մօր մօտ վազեց վէտ վէտ:
Մայրը դարձաւ դէպ' նորան,
Դիտե՛ր իմ դու այսքան.
Աստղերի հետ իր կովում
Թէ ծովերը տատանում:
— Ես ծովերը չեմ շարժել,
Աստղերին ձեռք չեմ տուել.
Քնքոյշ մանկան հսկեցի,
Իւր օրրանը շարժեցի:

Պ ա մ ը:

Պապը սաստիկ ծերացել էր: Նորա աչքերը լաւ չէին տեսնում, ականջները ծանրացել էին. նորա ձեռները և ոտները ծերութիւնից դողդողում էին, այնպէս որ գդալը

բերանը տանելիս կերակուրը կաթկաթեցնում էր:

Այս բանը դուր չ'էր գալիս նորա որդուն ու հարսին: Նորանք ծերին իրանց հետ միւլնոյն սեղանի վերայ չէին նրստեցնում, այլ մի անկիւնում առանձին տեղ էին տալիս հաց ուտելու և կաւէ աճանով (քրեղանով) էին կերակրում խեղճին: Մի անգամ հաց ուտելիս ծերի ձեռքերը դողդողացին, ամանը վերընկաւ, կոտրուեցաւ: Շատ սաստիկ բարկացան հարսն ու որդին խեղճ ծերի վերայ և այնուհետև փայտէ աճանով (կիւշով) էին կերակուր տալիս նորան:

Ծեր մարդը մի թռռն ունէր: Միանգամ նա նստած յատակի վերայ տաշեղները միմեանց հետ յարմարեցնելով՝ կարծես մի բան էր շինում:

Մայրը հարցրեց նորան, թէ ի՞նչ ես շինում, որդիս — Ես փայտէ աճան եմ շինում, որ երբ դու և հայրիկս ծերանաք, նորանով կերակուր ուտեցնեմ ձեզ:

Հայրն ու մայրը նայեցան միմեանց երեսի և ամօթից կարմրատակեցան: Նորանք այնուհետև սկսեցին ծերին շատ պատուով պահել:

Պատուիր ծերին, որ ծերանաս: Ծերանաս, ծերի պատիւն խմանաս:

Ուտելիք և խմելիք:

Առանց ուտելիքի մարդս քաղցածութիւնից՝ իսկ առանց խմելիքի ծարաւութիւնից կ'մեռնէր: Մարդս իբրև ուտելիք գործ է ածում բուսեղէն, մսեղէն և աղ: Նա խմում է ջուր, թէյ, սուրճ, զինի, քարեջուր: Ամենա-

Հարկաւոր ուտելիքը հացն է: Ամենակարեւոր և առողջա-
րար խմելքը ջուրն է:

Դուք ինչ էք ուտում եւ ինչ էք խմում:



Հ ա ց:

Հացը թխում են կամ տանտիկները կամ հաց-
թուխները: Հացը թխում են խմորից: Խմորը հունցում են
ալւերից, ջրից և խաշեց: Ալւերը աղում է ջրաղացականը ջրա-
ղացում ցորենից: Գորենը հասնում է արտերում, հասկերի
մէջ: Գլուղացիք դաշտը մշակում են, նոքա հերկում են
հողը—ցեղ են անում, յետոյ ցելումը սերմում են ցորեն և
ուրիշ հացահատիկներ: Իսկ Աստուած աճեցնում է նորանց:
Աստուած ուղարկում է ամառ, ջերմութիւն, անձրեւ և
փայլուն արեւ:

Ի՞նչից եւ ինչպէս է պատրաստվում հացը:

Ձ ու ր:

Անջուր չէ կարող ապրել ամենափոքր միջատը, չէ
կորոշ աճել ամենափոքր բոյսը:

Անջուր տեղերում միայն քար ու աւաղ է երևում:
Այսպիսի տեղերը ասվում են անապատ: Զուրը լինում է
աղբիւրներում ջրհորներում, գետերում, լճերում և ծո-
վերում: Մովային ջրերը դառն են և աղի: Գետերի և մի
քանի լճերի ջրերը քաղցրահամ են: Լաւ ջուրը պարզ է
լինում և թափանցիկ. նա ոչ հոտ է ունենում, ոչ համ:

Տաքութիւնից ջուրը եւ է զալիս ու գոլորշանում.
ցրտից սառչում ու սառուց է դառնում:

Դուք ինչպիսի ջուր էք խմում. ջուրն ինչ տեղերում է լինում.

Ձ ր ա ղ ա ց:

Ջուրը նաւից արշաւելով

կատաղաբար ձայն է հանում,

եւ ջրաղացի յատակի տակ

կարծես ամպեր են որոտում:

Անիւնների խիստ շարժուելուց

Ամբողջ յատակն է դողդողում,

եւ երկանի պտրտուելուց

Փոքրիկ լեզուակը չըխկըխկում:

Նա շարժւում է օրօրուելով

եւ լեք տաշտի բերանն շարժում,

Որից վերին երկանի մէջ

Մաքուր ցորեն է կաթկաթում:

Իսկ քարի տակ մանրուելով

Ալւեր դարձած ամբարն թափվում

եւ ջրաղացը գեղեցկապէս

Խրքե ծերուկ ալեզարդում:

Կ ր ա կ:

Սիմներ գնաց դաշտը: Շատ ցուրտ էր և անձրեւ էր
զալիս. նա դողդողում էր ամբողջ մարմնով: Սիմներ մտաւ.

Մայր. լեզ. բ. տ. Ն. Տ.—Ղ.



անտառը, չոր ճախեր ժողովեց, ջեբից հրահանք հանեց, զարկեց կայծաքարին և կրակ արեց: Նա տաքացաւ, շորերը ցամաքեցրեց և իւր չոր հացի կտորը տաքացրեց, կերաւ: Կրակի առաջ նստած Սիմոնը մտածում էր՝ «ինչ լաւ բան է կրակը. առանց նորան ոչ հաց կարելի է թխել, ոչ կերակուր եփել և ոչ տաքանալ: Տեւ, որքան գործ է շինվում դարբնոցում և գործարաններում: Նթէ կրակը չլինէր, մենք երկաթից ինչպէս պիտի շինէինք պայտեր, խովի, կացին և ուրիշ շատ բաներ: Ճշմարիտ, թէև երբեմն կրակից մենք վնաս ենք ստանում, բայց այդ էլ մեր անզգուշութիւնից, մեր յիմար անհոգութիւնից: Մենք արեգակիցն էլ ենք տաքանում. նա էլ կրակի նման այրվում է երկնքում: Առանց արեգակի ոչինչ չէր աճիլ՝ ոչ դաշտերում, ոչ անտառներում և ոչ պարտէզներում, և բոլոր կենդանիք ու մարդիկ կ'մեռնէին քաղցածութիւնից: Իսկ այժմ Աստուծոյ ողորմութեամբ ապահով ապրում ենք:

Հ ա գ ն ե լ ի ք:

Հագնելքը կարում են քաթանից, մահուդից, զանազան կտորներից և կաշուից:

Քաթանից կարում են սպիտակեղէններ: Քաթանը գործում են թելից: Թելը մանում են կանեփից կամ վուշից: Կանեփը և վուշը աճում են դաշտերում և պարտէզներում:

Չիթը նոյնպէս թելերից են գործում: Չիթի թելը բաժանակից են մանում:

Մահուդէ և բրդէ ապրանքները շինում են բրդէ թելից գործարաններում: Բուրդը խուզում են ոչխարներից:

Մետաքսեղէն ապրանքները մետաքսից են գործում: Մետաքսը շերամներն են պատրաստում:

Կօշիկները, ծուղերը, հողաթափները և միւս ոտնամանները կարում են կօշիկարները կաշուից: Մաշկեղէն ապրանքները պատրաստում են կաշեգործները ձիւ, եղան, ոչխարի և այծի կաշուից:

Մուշտակները կարում են ծոները մաղեղէնից: Մաղեղէնը ստացվում է թաւամաղ զազանների արջի, աղուէսի, կղնաքիսի մորթուց:

Դուք ինչ էք հաղնում. — Ո՞վ է կարել ձեր շորերը եւ ինչից:

Շապիկը ինչպէս աճեց դաշտումը

Փոքրիկ Հայկանուշը տեսաւ, որ իւր հայրը դաշտումը բռնով մանր ու փայլուն սերմեր էր ցանում, և հարցրեց. «Հայրիկ, այդ ի՞նչ ես անում:» — «Առջ եմ ցանում, անշիկս, որ քեզ ու Բարսեղի համար շապիկ դուրս գայ:» Հայկանուշը մտածման մէջ ընկաւ: Նա երբեք չէր տեսած, որ շապիկները աճեն դաշտումը:

Երկու շաբաթից յետոյ ցելը ծածկուեցաւ կանաչ մետաքսեայ խտտերով և Հայկանուշը մտածեց. «Ի՞նչ լաւ կ'լինէր, եթէ ես այսպիսի շապիկ ունենայի:» Մի քանի անգամ Հայկանուշի մայրը և քոյրերը գնացին արտք քաղհանելու և ամեն անգամ ասում էին նորան, թէ շատ լաւ շապիկ պէտք է ունենաս: Անցաւ էլի մի քանի շաբաթ: Կանաչը բարձրացաւ, ցողունների գլուխներին կապտադոյն ծաղիկներ երևեցան: «Ի՞մ եղբայր Բարսեղ եւ քեզի նման են սորանք, մտածեց Հայկանուշը. բայց այդպիսի շապիկ ես ոչ ոքի հազին չեմ տեսել:»

Երբոր ծաղիկները վայր թափուեցան, նորանց տեղը մրնացին կանաչ և կոլոր գլուխներ: Երբոր գլուխները փոքր ինչ կարմրեցան ու չորացան, Հայկանուշի մայրը և քոյրե-

31388-60



ըլ արմատից փետեցին նորանց, խուրձեր կապեցին ու կոթերի վերայ կանգնեցրին, որ չորանան:

II.

Վուշի խուրձերը չորացան, նորանց գլուխները կտրեցին, կալեցին և պահեցին, իսկ կոթերը թրջոց դրին առուակի մէջ, վերան էլ քարեր դարսեցին, որ ջրի երեսը չանի:—Հայկանուշը տխուր նայում էր, թէ ինչպէս են իւր շապիկը ջրումը խեղտում. իսկ քոյրերը նորան նորից ասացին, թէ ի՞նչ գեղեցիկ շապիկ ես ունենալու:

Երկու շաբաթից յետոյ վուշը ջրից հանեցին, չորացրին և սկսեցին առաջ փայտով թակել կալում, իսկ յետոյ զոգոցով բազում, այնպէս որ խեղճ վուշն չփերը բոլորը դուրս թափուեցան: Գղելուց յետոյ սկսեցին երկաթէ սանդղեքով անցկացնել, մինչև որ նա փափկեց և դարձաւ իբրև մետաքս: «Ի՞նչ գեղեցիկ շապիկ ես ունենալու», ասացին նորից Հայկանուշն քոյրերը: Բայց Հայկանուշը մտածում էր. «Այդ է՞նչ տեսակ շապիկ է. կասես թէ մեր Բարսեղի շէկ մազերը լինի»:

III.

Չմեռուայ երկար գիշերներն եկան: Հայկանուշն քոյրերը ճախարակները սարքեցին և սկսեցին վուշից թել մանել: ՊԱՅԱ թել է, իսկ շապիկը որն է՞—մտածում էր Հայկանուշը:

Անցկացաւ ձմեռը, դարունը և ամառը.—աշունը սկսուեցաւ: Հայրը ոտայնը սարքեց խրճիթում, նորա վերայ հինաճ արեց և սկսեց գործել: Մաքուրը սառանի նման անցուղարձ էր անում թելերի միջով և

Հայկանուշը տեսնում էր, թէ ի՞նչպէս թելերից քաթան է շինվում: Երբոր քաթանը պատրաստուեցաւ՝ պրծաւ, նորան ցրտի տակ սառցրին և ձիւնի վերայ փուեցին, իսկ դարնանը ձգեցին կանաչ խոտերի վերայ, արևի տակը և վերան էլ ջուր ցանեցին: Քաթանը փոքր առ փոքր սպիտակեց ինչպէս ձիւն:

Ելե ցրտից,—ձմեռնացաւ: Մայրը քաթանից շապիկներ ձևեց և Հայկանուշն քոյրերը սկսեցին կտրել, այնպէս որ ջրօրհնէքին նա և իւր եղբայր Բարսեղը հագան ձիւնի պէս սպիտակ շապիկներ:

Ո՞վ է շինել ձեր շապիկը եւ ինչից:

Որբ Յովհաննէսը:

Յովհաննէսի հայրն ու մայրն մեռան և նա մնաց որբ—անտէր: Ոչոք չ'կար, որ նորան ուտացներ, խմացներ. ոչոք չ'կար, որ խեղճ որբին հագցներ, տաքացներ: Նորա գլուխը գզգզվում էր ու չ'սանդղած, նորա շորերը կեղտոտուած ու պատռուած: Ո՞վ խեղճ որբին կ'զգուէ, ո՞վ նորան զիշերները կ'պարկեցնէ, կ'աղօթէ ու կ'քնացնէ: Ո՞վ նորան չարից կ'զգուշացնէ, խելք, զխոռթիւն կ'ուսուցանէ:

Ի՞նչ կանէին Յովհաննէսի համար նորա ծնողները, եթէ կնիդանի լինէին:

Սեղան և աթոռ:

Սեղանը շինում է ատաղձագործը փայտից: Նա ունի երեսի տախտակ, արկղ և ոտներ: Երեսի տախտակը քառանկիւնի կամ կոյր է լինում:

Աթոռը նոյնպէս շինում է ատաղձագործը փայտից: Աթոռը ունի թիկունք, նստարան և ոտներ: Նստարանը լե-

նում է կամ հասարակ փայտեայ, կամ հիւսած ծղօտից
և կամ որպիսի և իցէ պատտառից:

Համեմատեցէք սեղանը անոռի հետ:
մտայնի մ գրաստի մտայնի մտայնի մ
գտնողիսս պցոյս

Ամանեղէններ:

Ամանեղէնները շինում են փայտից, կաւից, ապակուց,
երկաթից և պղնձից:

Փայտից շինում են փայտէ գաւաթներ, տախառներ,
տաշտեր, խոնջաներ, դեփուրներ, շերեփներ և գդալներ:
Տակառները շինում են տախառագործերը, իսկ միւս աման-
ները—խառառները:

Բրուտները հասարակ կաւից շինում են խեցեղէններ՝
ծաղկամաններ, կժեր, սափորներ, հասարակ գաւաթներ,
թեփշիներ, կովկիթներ, կճուճներ, կարասներ . . . Ազ-
նիւ կաւից գործարաններում պատրաստում են պատուական
ամանեղէններ՝ ազնիւ թեփշիներ, գաւաթներ, պնակներ,
թէանոցներ, (չայնիկներ) սկուտղեր (բլուզներ) . . .

Ապակուց ապակու գործարաններում շինում են բա-
ժակներ, շէշեր, գրափինկաներ . . .

Երկաթից, չուգունից և ժեշտից շինում են մեծ մեծ
կաթսաներ, սրճամաններ, չափեր, կովկիթներ . . .

Պղնձից պղնձագործները շինում են հեշտանոններ,
կաթսաներ, պղնձէ թեփշիներ, գաւաթներ, մեծամեծ
սփնիներ, թաւաներ, կովկիթներ, պղնձէ կժեր, շերեփներ,
չափեր . . .

Պղնձէ ամանները կլեկողները կլեկում են: Առանց կլեկի
ամանը թիւնաւոր կանաչով ծածկվում է:

Ի՞նչից են շինում ամանեղէնները:—Ի՞նչ ամաններ են շինում
փայտից, կաւից, ապակուց, երկաթից եւ պղնձից:

Ինչ կ'ցանես այն կ'հնձես:

Աղուէսը բարեկամացաւ կռունկի հետ և նորան իւր
մօտ ճաշի հրաւիրեց. «Ն'կ, խնդրում եմ, իմ թանկագին
բարեկամ, եկ, տես քեզ ինչ պատիւ եմ տալիս:

Կռունկը եկաւ: Աղուէսը եփել էր կերակուրը, մի
երկու գդալ ածել էր թեփշու մէջ և հրաւիրում էր կը-
ռունկին. հրամայեցէ՛ք, հրամայեցէ՛ք, կեր, սիրելի բարե-
կամ, շատ պատուական եփած է: Կռունկը իւր երկար
կտուցով շատ կտկրտացրեց այն տափակ թեփշուն, բայց
բերանը բան չընկաւ: Աղուէսը գլուխը կախած լիզեց ամենը:
Նրբոր կերաւ, վերջացրեց, ասաց կռունկին. ներքի, բարե-
կամ, ուրիշ բան չունիմ, որով կարողանայի քեզ պա-
տիւ տալ:

«Շնորհակալ եմ, բարեկամ—ասաց կռունկը—խնդրեմ
վաղը ինձ մօտ շնորհ բերէ՛ք ճաշի:»

Միւս օրը աղուէսը դնաց կռունկի մօտ: Կռունկը կե-
րակուրը եփել էր և ածել մի նեղաբերան ամանի մէջ, այն-
պէս որ միայն իւր երկար կտուցը կ'մտնէր նորա մէջ:
Կռունկը ամանը դրեց սեղանի վերայ և հրաւիրում էր
աղուէսին. «Համեցէ՛ք, մօտ եկ, աղուէս եղբայր, կեր,
պատուական կերակուր է: Աղուէսը շատ պտրտեց,
այս կողմն—այն կողմն ընկաւ, ամանը դրոյից լիզեց,
շատ էլ հոտ քաշեց, բայց բերանը ոչինչ չ'մտաւ: Իսկ
կռունկը իւր երկար ու կեռ կտուցով կերակուրը հանում
էր և ուտում: Նրբոր կերաւ, վերջացրեց, յետ դարձաւ և
ասաց իւր հիւրին. «Ներքի, պատուական բարեկամ, սո-
րանից աւելի ուրիշ կերակուր չունիմ, որ կարողանայի
քեզ հիւրասիրել:» Աղուէսը քաղցած վտրով ու նեղա-

ցած տուճ դարձաւ և սորանով նորանց բարեկամութիւնն էլ վերջացաւ:

Եղբայր Յովհաննէսը և քոյր Վարդուհին:

Ա.

Երկու որբ, Յովհաննէսը և նորա քոյր Վարդուհին, հեռու ճանապարհ էին գնում՝ մի ընդարձակ դաշտով: Եղանակը շատ տաք էր. արեգակը այրում էր նորանց: Յովհաննէսը ծարաւ էր: Քոյր իմ Վարդուհի, ես ծարաւ եմ, Զուր եմ ուզում:—Սպասի՛ր, եղբայր, շուտով Զրհորին կը հասնենք: Գնում են—

Բայց արեն բարձրից կրակ է թափում,
եւ խեղճ որբերին այրում, խորովում:

Զրհորն էլ, կարծես, դեռ շատ հեռու էր,
Գնում են՝ գնում, նորան չեն հասնում:

Յանկարծ Յովհաննէսը տեսնում է մի ձիու սմբակ ճանապարհի մօտ ընկած, որի մէջը անձրեւաջրով լիքն էր: Յովհաննէսը կամեցաւ նորանով մեղմել իւր ծաւրաւը:

«Քոյր իմ Վարդուհի, ահա Զուր, կայ, թող ես այս սմբակից խմեմ»—Ո՛չ, եղբայր, մի՛ խմիր, թէ չէ, քուռակ կ'դառնաս: Յովհաննէսը ախ քաշեց և նորից առաջ գնացին: Գնում են—

Բայց արեն բարձրից կրակ է թափում
եւ խեղճ որբերին այրում, խորովում:

Զրհորն էլ, կարծես, դեռ շատ հեռու էր,
Գնում են՝ գնում, նորան չեն հասնում:

Յովհաննէսը տեսնում է մի կովի կճղակ ճանապարհի մօտ ընկած, որ անձրեւի ջրով լիքն էր. նա կամենում է

նորանով մեղմել իւր ծարաւը:

«Քոյր իմ Վարդուհի, ահա Զուր, թող խմեմ այս կճղակից:—Ո՛չ, եղբայր, մի՛ խմիր, թէ չէ հորթ կ'դառնաս— և նորանք առաջ գնացին: Գնում են—

Բայց արեն բարձրից կրակ է թափում,
եւ խեղճ որբերին այրում, խորովում:

Զրհորն էլ, կարծես, դեռ շատ հեռու էր,
Գնում են՝ գնում, նորան չեն հասնում:

Վերջապէս Յովհաննէսը տեսաւ մի ոչխարի կճղակ ճանապարհի մօտ ընկած՝ անձրեւի ջրով լիքը: Նա էլ չհարցրեց իւր քրոջը, մի փոքր յետ մնաց, վերառաւ կրճղակը և բոլորը խմեց:

Բ.

Վարդուհին յետ նայեցաւ և տեսաւ՝ որ եղբայրը չէ երևում. նա բարձր ձայնով կանչեց, բայց փոխանակ Յովհաննէսի՝ նորա մօտ վազեց մէկ սպիտակ գառը: Վարդուհին իմացաւ թէ սա ի՛նչ գառն է և սաստիկ արտասուեցաւ: Բայց էլ ձար չ'կար: Նա առաջ գնաց գառան հետ:

Ճանապարհին նորանց պատահեցաւ մի պարոն. «Սի՛րուն աղջկի, ծախի՛ր այդ գառը ինձ վերայ»,—ասաց նա: Վարդուհին պատասխանեց. «Ո՛չ, պարոն, այս գառը ծախու չէ. սա ոչ թէ իսկական գառն է, այլ իմ հարազատ եղբայրս է:»

Պարոնը խղճաց նորանց վերայ և երկուսին էլ վերառաւ իւր մօտ. յետոյ նա պսակուեցաւ Վարդուհու վերայ, իսկ գառանը պահեց—պահպանեց: Նորանք շատ երջանիկ էին ապրում: Բարի մարդիկը նորանց վերայ նայելով ուրախանում էին, իսկ չարերը—նախանձվում էին: Ամենից աւելի նախանձվում էր նորանց հարեան մի չար պառաւ: Նա միտք

ունէր իւր աղջկը պարոնին կնութեան տալ, բայց իւր մտադրութիւնը չ'կատարուեցաւ: Այս պատճառով պառաւր մտածեց վարդուհուն փորձանքի մէջ ձգել: Իւր նպատակին հասնելու համար՝ նա սկսեց հետեւել նորան ամենայն տեղ: Մի օր վարդուհին գնաց գետի ափը զբօսնելու: Պառաւր, որ ծածուկ գնում էր նորա յետեւից, բռնեց նորան, կապեց վզեցը մի մեծ քար և գցեց գետը: Յետոյ նորա շորերը հաղցրեց իւր աղջկան և ուղարկեց պարոնի ապարանքը: Նորան ոչոք չ'ձանաչեց. նոյն իսկ պարոնը խաբուեցաւ: Միայն գառն էր խմանում ամեն բան. նա ոչ ուտում էր, ոչ խմում, միշտ վազվզում էր գետի ափերում և ցաւալի կերպով մայում էր:

Գ.

Նոր տիրուհին տեսաւ, որ գառը շատ է գոռում—գոչում, վախեցաւ, որ չ'լինի թէ պարոնը հասկանայ իւր խաղախութիւնը այս պատճառով գնաց նորա մօտ և խնդրեց, որ գառանը մորթել տայ: Պարոնը զարմացաւ. «Այս ինչ բան է—մտածում էր նա—իմ կինը շատ սիրում էր այս գառանը, իսկ այժմ խնդրում է, որ մորթել տամ:» Այսու ամենայնիւ նա համաձայնեցաւ: Պառաւր աղջկը հրամայեց, որ դանակները սրեն, հնոց պատրաստեն և կաթսաներով մնի համար ջուր տաքացնեն: Գառը հասկացաւ, որ ինքն էլ երկար ժամանակ չէ կարող ապրել, վազեց գետի ափը և ողբալի ձայնով երգեց:

Վարդուհի, իմ քուրիկ,
ինձ կամենում են մորթել.
Բարձր հնոց են շինել,
Մեծ կաթսաներ են դրել,
Դանակ ու դաշնակ սրել:

Վարդուհին ջրի տակից եղբօրը պատասխանում է.

Ա՛խ, սիրելի Յովհաննէս,
Ծանր քարը վիզս կտրեց,
Թաւշեայ խոտ ձեռքիս աճեց,
Մանր աւազ կուրծքս ծածկեց:
Վարդուհին թող զոհ լինի,
Քո փոխանակ նա մեռնի,
Միայն թէ քո լաց ու կոծ,
Քո մահուան լուրն չըլտի:
Չար պառաւն ինձ գետ ձգեց,
Փեսաս ու տունրս խլեց.
Մի՛թէ այնքան անգութէ,
Որ եղբօրս էլ կ'մորթէ . . .

Պարոնը շատ հեռու չէր. նա լսեց՝ ինչպէս վարդուհին և իւր եղբայրը խօսում էին միմեանց հետ, և կանչեց իւր մարդկանցը.

Հաւաքուեցէ՛ք, հաւաքուեցէ՛ք, ծառաներ,
Եւ ձգեցէ՛ք իմ մետաքսեայ ուռկաններ:

Մարդիկը հաւաքուեցան, ուռկանները ձգեցին և վարդուհուն հանեցին: Նորա պարանոցի թուր կտրեցին, պարզ ջրում լողացրին և վերան մաքուր սաւան ձգեցին: Վարդուհին ուշքի եկաւ և առաջուանից աւելի գեղեցկացաւ: Նա փաթաթուեցաւ գառանը և կամենում էր համբուրել նորան: Բայց գառն էլ գառը չէր, այլ Յովհաննէս էր դարձել: Պարոնը տարաւ նորանց տուն և այնուհետև նորանք երեքը միասին առաջուանից աւելի երջանիկ սկսեցին ապրել. իսկ պառաւի աղջկան ծառաները մորակով տանից դուրս արին:

Տ Ն Ա Յ Ի Ն Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն Ե Ր :



Շ ն ի կ :

Ապա՛, սիրուն շնիկ, կարգա՛, թէ ի՞նչ է գրած իմ գրքումը, —ասաց Հայկը իւր փոքրիկ շանը: Շունը մօտեցաւ գրքին, հոտոտեց ու հեռացաւ: Պի՛նչ իմ բանն է գիր կարդալը —ասաց նա—ես տունը կ'պահպանեմ, գիշերները չեմ քնիլ ու միշտ կ'հաջեմ գայլերին կ'վախեցնեմ, որսի կ'գնամ, նապաստակ կ'բռնեմ, բաղեր կ'գտնեմ—իմ կողմից սա էլ բաւական է:

Պանասէր շունը:

Շունը շանը հիւր կանչեց: Պժամանակ չունիմ:—Ի՞նչ գործ ունիս: ՊՎաղը իմ տէրս գնում է խոտ հնձելու, պէտք է նորա առաջից հաջելով գնամ:

Ո Ր Ա :

Իմ հօրեղբայրս ունի հրացան և որսի պարի, և շատ որսի շներ: Մօտ օրերումս հօրեղբայրս վերառաւ իւր հրացանը և ասաց ՊՆ'կ ինձ հետ որսի գնանք: Աղուէսը մեր հաւանոցից դարձեալ երկու հաւ է զողացել. ես կամենում եմ նորան սպանել: Մենք գնացինք և վերառանք հետներս երկու քերծէ և մէկ որսորդ շուն: Քերծէները շուտով գտան գազանի հետքը և մօտան անտառը: Մենք միայն նորանց հաջելու ձայնն էինք լսում:

Նստենք այս թփի տակ—ասաց հօր եղբայրս—իմ խելօք քերծէներս այս բոպէիս դուրս կ'հանեն դէպի մեզ աղուէսը:

Նստեցանք և սպասեցինք: Շները շատ հեռուից էին հաջում: Ես կարծեցի, թէ նորանք երբեք չեն յետ դառնալ: Բայց ահա հաջողը քիչ քիչ մօտեցաւ . . . յանկարծ թփերի տակից դուրս ընկաւ մի նապաստակ և մի շիկագոյն աղուէս նորա յետևից: Հօրեղբայրս հրացանը արձակեց և աղուէսը թրրալըրտաց, իսկ նապաստակը վախեցաւ, ականջները մէջքին կպցրեց, գետնից կպաւ ու տեղեցը չ'շարժուեցաւ: Մենք նորան ողջ ողջ բռնեցինք և բերինք տուն: Ես հիմայ էլ կերակրում եմ նորան կաղամբով:



Կ ա տ ո լ :

Փիշիկ, փիշիկ, դու չար փոքրիկ, շատ սիրուն ես, խորամանկ ես, մետաքսապատ թաթեր ունիս, սուր եղունկով մատներ ունիս: Ականջներդ շուտ են լսում, մեծ աչքերդ մթնում փայլում, երկար բեխերդ ոլորած, խեղճ՝ մկներին մահ էս նիւթում:

Քո ընկերիդ երբ տեսնում ես, պոչդ այս—այն կողմն ես շարժում, մէջքդ ծալում—կռացնում, աչքերդ փակ մրուցնում, բայց թէ յանկարծ մի խեղճ մուկիկ մի անկիւնից լոյս է ընկնում, քո պողպատեայ թաթիկներով զլխին խփում ես, սպանում:

Երկու մկներ:

Փոքրիկ մուկը մեծին ասաց, ի՞նչքան չար և ժխտ է մեր տանուտէրը. տունը կատուներով լցրել է, այս բաւական չէ, ամենայն տեղ էլ թափարդներ է դրել և ամեն կերպով կամենում է մեզ ջնջել: Միթէ մեզ շատ բան է հարկաւոր. մի կտոր ճարպ, քիչ հացի փշրանք, մի քանի հատիկներ ինձ բաւական է:

— Ճամարիտ է, պատասխանեց մեծ մուկը, մեզ ամեն միսիս քիչ է հարկաւոր, բայց մենք էլ քիչ չ'ենք:



Մ կ ն ե ր .

Հաւաքուեցան մկները իրանց բնի առաջ, մեծերը և փոքրերը: Նորանց աչքերը սև սև էին, թաթերը փոքրիկ, առամները սուր սուր, ականջները դիք ցցուած, իսկ ազիները երկար, կախ ընկած:

Հաւաքուեցան, խորհուրդ արին—մտածեցին թէ ի՞նչ պէս անեն, որ չոր հացի կտորը բունը քաշեն:

Օ՛, զգուշացէ՛ք, ընկերներ, ձեր բարեկամ փիսօն ձեզ նից հեռու չէ. նա ձեզ շատ սիրում է, միշտ ցանկանում է իւր փոքրիկ թաթով ձեր մէջքը քորիլ, ձեր պոչից բռնել, կաշիներդ քաշել:

Համեմատացէ՛ր կատուն մկան հետ:

Մկան համար կատուն էլ գազան է:

Մուկիկը վազեց մեծ մկան մօտ և ասաց նորան. բարեկամ, բարի համբաւ կայ, լսե՛ք ես. ասում են, որ կատուն առիւծի ճանկն է ընկել: Փառք Աստուծոյ, մենք այսուհետև շատ հանգիստ կ'ընենք:

Մեծ մուկը պատասխանեց. «Շատ մի՛ ուրախանար, աչքի լոյս, և իզուր յոյսեր մի՛ կապիր. թէ որ բանը կռուի հասաւ, հաւատա՛, որ առիւծը կենդանի չ'մնայ. կատուից դօրեղ գազան չկայ»:

Գայլը և կատուն.

Գայլը անառից փախաւ գիւղը, ոչ թէ հիւր լինելու, այլ իւր գլուխը ազատելու համար, նա ամբողջ մարմնով դողում էր, որովհետեւ որսորդները իրանց շներով յետևիցն ընկած հալածում էին: Նա ուրախութեամբ առաջին հանդիպած դռնից կ'մտնէր, բայց ցաւն այն էր, որ բոլոր դռները փակած էին: Գայլը տեսնում է կատունին և աղերսում է. «փիշիկ, իմ բարեկամ, ասա շուտով, այս գիւղացիներից որը այնքան բարի կ'լինի, որ ինձ հիւր ընդունի և չար ոսոխներինս ազատի: Գու լտում ես շների հաջոցը և փողերի ձայնը—այդ բոլորը իմ յետևիցս են ընկած:—Շուտով խնդրիր Ստեփանին, նա շատ բարի մարդ է, ասաց կատուն: «Այդպէս է, բայց ես նորա ոչխարը յափշտակել եմ:»—Ուրեմն փորձիր Կարապետի մօտ օգնութիւն գրտնել:—«Վախենում եմ, որ նա էլ ինձ վերայ բարկացած լինի, որովհետեւ նորա էլ այժն եմ գողացել:»—Վաղեր ուրեմն Մարկոսի մօտ: «Ո՛չ, ո՛չ, չեմ կարող, նա դեռ զարունքից զայրացած է ինձ վերայ. ես նորա հորթը լափել եմ:»—Այդ վատ բան է, բայց հաւատացած եմ, որ քեզ, Կիրակոսը կ'պաշտպանէ: «Ա՛խ, կատու եղբայր, նորա էլ զառն եմ կերել:»—Ինչպէս տեսնում եմ, զայլ, դու այս գիւղում ամենքին էլ փնաս ես հասցրել—ասաց կատուն—ուրեմն էլ ինչ պաշտպանութիւն ես որոնում այստեղ: Զէ, այս լաւ իմանաս, որ մեր գիւղացիք այնքան յիմար չեն, որ իրանց փնասակար թշնամուն պահեն—պաշտպանեն: Եւ իրաւունք ունին. դու ես մեղաւոր, ինչ որ ցանկ ես, նոյնը և՛ հնձիր:

Դեղձանիկը և Սոխակը:

Սի տան պատուհանից կախած՝ վանդակի մէջ երգում էին դեղձանիկը և սոխակը: Հենց որ սոխակը կ'սկսէր երգել, փոքր որդին հօր առաջը կ'կտրէր, միշտ թռչունին ցոյց կ'տար, մօտ կ'գնար ու կասէր, թէ սա է, որ երգում է լաւ երգեր:


Հայրը վերառաւ երկու թռչունն էլ, տուեց որդուն և ասաց. «Ապա իմացիր, որն է սորանցից լաւ երգողը:» Մանուկը խնդն դեղձանիկին ցոյց տուեց և ասաց. «Ահա սա է լաւ երգողը, հայրիկ:»

Լ ո Ր:

Վանդակի մէջ փակուած՝ լորը միայն գիշերներն էր երգում:—«Ի՞նչի դու ցերեկը չես երգում:» հարցրեց նորան չղջիկը:

Լորը պատասխանեց. «Առաջ ես առաւօտներն էի երգում, բայց բռնուեցայ, այժմ զգուշանում եմ ցերեկը երգելուց:»

«Լաւ կ'լինէր, որ այդ բանը բռնուելուցդ առաջ մտածէիր և զգուշանայիր:» ասաց չղջիկը:



Թռչնակ:

Երեկ բացի ես դռնակը այն բանտի, Որի մէջը խեղճ թռչնակն էր բանտարկուած, Մայր. լեզ. բ. տ. Ն. Տ.—Ղ.

Նորան տուի ազատութիւն ցանկալի,
եւ դաշտերին—իրանց երգիչը կորած:

Թռաւ—անցաւ նա նուրբ օդը ճեղքելով:

Պայծառ օրուայ թարմութիւնը զգալով,

Թռաւ—անցաւ ազատութիւն շնչելով,

եւ ինձ համար մեղմ, մեղմ աղօթելով:

Խարդախ կատու:

Մի տան բազում միասին ապրում էին կատուն, այ-
ծը և ոչխարը, և ապրում էին շատ սիրով: Եթէ մի
փունջ խոտ էին ծարում, այժն ու ոչխարը միասին էին
ուտում, իսկ եթէ միս էին ծանկում, միայն փխփփ էր
մնում: Բայց սա գող էր և յափշտակող, ուր մի բաց բան
էր տեսնում, գէպի այն կողմն էր նայում: Միանգամ մը-
լաւան կատուն մօտենում է իւր ընկերներին, մօտենում է
և ողբալով լաց լինում: Այժն ու ոչխարը հարցնում
են նորան. «Միրուն փխփ, ի՞նչի ես լալիս, երեք ոտիդ վե-
րայ ման գալիս, չորրորդ ոտով կաղի տալիս»: Կատուն պա-
տասխանում է. «Ի՞նչպէս լաց չ'լինիմ. ինձ պառիկը շատ
թակեց, ականջներս պինդ քաշեց, ոտիս մէկըն էլ կոտրեց—
սա դեռ բաւական չէ, ինձ համար թակարդ լարեց»:

«Բայց ի՞նչի դու այդպէս խիտ պատժուեցար»,
հարցրին այժն ու ոչխարը:

—Ա՛խ, ա՛խ, որովհետեւ պատահեցաւ մաճուի կճուճը
տեսայ, վայր գցեցի, կոտրեցի, միջի մաճունը կերայ:

«Գողը պատժի արժանի է, մի՛ գողանար և չես պատ-
ժուիր», ասաց այժն:

Կատուն նորից սկսեց լալ և ասել. «Ա՛խ, պառիկն
ինձ շատ թակեց. թակեց—թակեց ու ասաց՝ այսօր փեսաս

պէտք է գայ, որտեղեց մաճուն ծարում, նորան ինչո՞վ կե-
րակրեմ, էլ մի ուրիշ ծար չունիմ, այժն ու ոչխարը կը-
մորթեմ»:

Այժն ու ոչխարը հառաչեցին և ասացին. Ա՛խ, դու
անպիտան կատու, բերանդ կրակ ընկնէր, որ մեզ այսպիսի
փորձանքի մէջ չ'գցէիր»:

Այս ասելուց յետոյ նորանք երեքն էլ սկսեցին խելք
խելքի տալ—մտածել, թէ ի՞նչ կերպով կարողանան այս
փորձանքից ազատուել—մտածեցին ու վճռեցին, որ երեքն
էլ միասին խկոյն վերկենան՝ փախչեն: Այսպէս էլ արին:

II.

Կատուն, այժն ու ոչխարը փախան—գնացին, սարե-
րով ու դաշտերով անցկացան, անապատը թողին հո-
վիտը մօտան, կանգնեցան ու վճռեցին, որ զիշերը այդ հըն-
ձած հովտում անցկացնեն. իսկ այդ տեղ հարիւրաւոր
խոտի դէզեր կային:

Գիշերը մութն էր ու ցուրտ: Ի՞նչպէս անէին, որտե-
ղեց կրակ ծարէին: Բայց կատուն շուտ հնարք գտաւ. ծա-
ռի չոր կեղևներ ծարեց, խուշուր հաւաքեց, այժ ու ոչ-
խարին էլ հրամայեց, որ ձախտ ձախտի խիեն: Ոչխարն
ու այժը ձախտ ձախտի խիեցին, պոզերիցը կայծեր
թափուեցին և տաշեղները վառեցին:

«Դատ լաւ—ասաց կատուն—հիմա եկէք տաքանանք»:
Այս ասաց ու շատ չ'մտածելով՝ կրակը խոտի դէզին մօ-
տեցրեց և ամբողջ դէզը վառեց:

Դեռ նորանք կարգին չէին նստել կրակի շուրջը, մին
էլ տեսնես այն կողմիցը մէկը ծանր ծանր մօտ եկաւ, այս
այն կողմը նայեցաւ ու մեր ծանօթներին ասաց. «Թողէք,

եղբարք, մի փոքր տաքանամ ու հանգստանամ, ես այսօր մի հնցոր տկար եմ:»

— «Գալուստդ բարի, արջ եղբայր, ասաց կատուն. որ տեղից կս գալիս:»

«Գնացել էի մեղուատուն, մեղուներին տեսութիւն անելու, առողջութիւնները հարցնելու. բայց չար դիւղացոյց պատահեցայ և նորանց հետ կռուեցայ:»

Այսպէս խօսելով նորանք բոլորը սկսեցին գիշեր անց կայնել. ոչխարն ու այծը կրակի մօտ պառկեցան, կատուն բարձրացաւ միւս դէզը գլուխը, իսկ արջ եղբայրը դէզը տակը մտաւ:

III.

Արջը քնեց, այծն ու ոչխարն էլ ննջեցին. միայն գող կատուն չէր քնած և բոլորը տեսնում էր: Ահա գիշերին նա տեսաւ, որ եօթը գայլ ուղիղ իրանց վերայ են գալիս: «Փո՛ւ, — փո՛ւ, այս ինչ մարդիկ են, ասաց գայլերից մինը այծին ու ոչխարին. եկէք, պարոններ, կամ մեզ հնազանդուեցէ՛ք, կամ մեզ հետ զօր զօրի տուէ՛ք, կռուեցէ՛ք:» Այծն ու ոչխարը մկկացին, մայեցին ու երկիւղից չէին իմանում ինչ անեն: Կատուն դէզը գլխից բերանը բացեց և սկսեց խօսել. գայլ բարեկամ, ասաց նա, քեզ խորհուրդ կ'տամ, որ մեր մեծաւորին չ'բարկացնես, նա, Աստուած հեռու տանի, այսօր նեղացած է, երբոր բարկացաւ ոչ ոքի չի խնայիլ. ամենքին կ'կոտորի: Նայիր նորա երկար մորուքին, հենց նորանում է նորա բոլոր ոյժը: Բոլոր գազաններին մորուքով է սպանում, պողերով միայն կաշին է հանում: Աւելի լաւ է պատուաւոր կերպով և ազնուաբար խնդրէք, թէ կամենում ենք քո փոքր եղբօր հետ խաղալ, որը դէզը տակ պառկած է:»

Գայլերը այծին դուխ տուին, գնացին արջի մօտ և սկսեցին խաղալ: Արջը համբերեց, համբերեց և վերջը իւր ծանր թաթով գայլերի գլխին որ չ'բամբիեց, սկսեցին վայ նանկ կանչել: Գայլերը դուրս թափուեցան դէզը տակից և սկսեցին փախչել:

Այծն ու ոչխարն էլ, քանի որ արջը գայլերի հետ խաղում էր, կատուն մէջքների վերայ նստեցրին և զէպի տուն վազեցին. «Յիմարութիւն է, ասացին, աննպատակ թափառել և փորձանքի մէջ ընկնել:»

Պառաւն և իւր մարդը շատ ուրախացան, որ այծն ու ոչխարը նորից տուն դարձան. իսկ գող կատուն էլ, իբրեւ վարձ, մի քանի փափուկ ճիպոտ ուտեցրին:

ԱԽՈՒՅ, ԳՈՄ ԵՒ ԹՈՉՆԱՏՈՒՆ:



Զի:

Զին խրխնջում է, ականջները ցցում, աչքերն այս ու այն կողմն ոլորում, սանձը կրծում, վեզը կարապի պէս կռացնում, ոտներով հողը քանդում: Նա պարանոցի վերայ երկար բաշ ունի, իսկ յետևի կողմը մի գեղեցիկ մազոտ պոչ. ճակատի վերայ, ականջների մէջ տեղը, մի մաղէ փունջ կայ կախուած, իսկ ոտների վերայ, սմբակից բարձր,

ճաղառ է բուսած: Նորա մագերը արծաթի պէս փայլուն են: Ձիու բերանը սանձ են դրում, մէջքին սիրուն թամբ են դնում, երկու կողմից արծաթած ասպանդակներ են կախում, ոտներին էլ պայտեր են խփում, յետոյ հեծնում ու քշում, ուր որ սիրտդ է ուզում:

Ձին ցատքում է ու վազում, աշխարհ տակին է դողում, բերանից փրփուր է թափվում, իսկ ռունգներից դուրշին սիւնի նման է բարձրանում:

Ընտանի և վայրենի ձիաներ:—Միասնական կենդանիներ:

Մեծ անապատներում ազատ վազում են վայրենի ձիաների ամբողջ ջուկեր: Նորանք երկչոտ են, մարդու մօտիկ չեն թողնիլ: Եթէ մէկ տեղ տեսնեն ընտանի ձիաներ, նորանց կ'ըջապատեն և կ'գրաւեն իրանց կողմը—այսինքն թէ մարդուն մի՛ ծառայիր, եկ, մեզ մօտ ապրիր: Ընդարձակ՝ բայց ոչ ամայի անապատներում ապրողների համար միակ հարստութիւնը ձին է, որոնց ջուկերը ամառ ձմեռ արածում են դաշտում: Ձիերի ջուկը, եթէ փոթորիկներից չէ ցրուած, հեշտութեամբ է քշվում դէպի ջուրը, այնտեղ քուռակներին բռնում են՝ կապում, որ նորանց մօր կաթը կթեն. կթելուց յետոյ նորից արձակում են անապատը: Այս բանը կրկնվում է ամենայն օր: Կաթը թըթուեցնում են և նորանից շինում կուլիս—մի տեսակ խըմիչք, որ թեթեւ դինու ներգործութիւն է ունենում: Խամ ձիուն սովորեցնելու համար նորան որսում են երկար պարաններով և երեք ուր կապում, բայց այնպէս, որ չ'կարողանայ կանգնել: Նորա բերանը սանձ են դրում, մէջքին

բարձ են դնում և փորքաշով պինդ կապում: Ձիապանը նստում է մերկ մէջքի վերայ և բարձից պինդ բռնում: Կոյ ժամանակ յետ են անում նորա ոտների կապերը, ձին ցատքում է, սկսում է փախչել ամենայն արագութեամբ, ուր որ աչքը կտրում է: Բայց ձիապանը ամուր նստած՝ դեռ մտրակով էլ խփում է: Վերջապէս ձին յոգնում և անձնատուր է լինում: Այն ժամանակ արդէն սանձի օգնութեամբ նորան կարելի է դէպի տուն դարձնել: Ձիու տուած օգուտը կովի տուածից փոքր չէ. նորա կաթը խմում են ու միսն ուտում, և ձիու միսը կովի մօտ պահաս չէ: Նորա կաշուից փոկեր են շինում. քուրակներինը ոտնամանների համար էլ հարկաւորվում է. պոչի և բաշի մագերից թոկեր և մաղեր են հիւսում: Բացի սորանից ձին շատ խելօք, շատ բանական կենդանի է և շատ լաւ յիշողութիւն ունի: Նա միշտ ճանաչում է իւր տիրոջը, երբ տէրը մի խօսք է ասում, կամ մի նշան է տալիս, նա զնում է նորա յետևից, եթէ ուրիշ մարդ է նորան հեծնում, իսկոյն հասկանում է: Եթէ միանգամ մի փարախում եղած է, միշտ աշխատում է ճանապարհից դէպի այն կողմը դառնալ. եթէ դու մուտ գիշերին ճանապարհդ կորցրել ես, թոյլ տուր քո ձիուն, որ տանի քեզ, ուր որ կամենայ. նա համարեա միշտ քեզ քո ցանկացած տեղը կ'հասցնի:

Ձիու տեսակիցն է և էշը, որին դուք ճանաչում էք իւր երկար ականջներից և անախորժ ձայնից: Նա այնքան բթամիտ չէ, որքան յամառ է. երբեմն ոչ մի տեսակ պատիժ նորան իւր տեղիցը չի շարժիլ: Միասնականների կարգին պատկանում են մուլը և ջորին: Մուլի հայրը ձին է, իսկ մայրը—էշը. իսկ ջորու հայրն էշն է, իսկ մայրը՝ ձին: Էշը, մուլը և ջորին շատ օգտակար են մարդու. երեքն էլ հասարակ սնունդով բաւականացող, համբերատար և հաս-

տատարայլ կենդանիներ են. նոցա օգուտը չափազանց է մանաւանդ քարոտ և լեռնային երկիրներում: Մուլը և ջորին իշեց աւելի ուժեղ են և աւելի աշխոյժ:

Տխուր ձի:

Ի՞նչ ես խրինջում, իմ ձի եռանդուն,
 Ի՞նչ ես այդպէս զուտըդ կախել.
 Ի՞նչ ես, ինձ ասա՛, բաշդդ չես շարժում,
 Չես կռժում քո այդ ոսկեփայլ սանձեր:

Մի՞թէ ես քեզ չեմ՝ պատվում ու քորում,
 Եւ կամ քեզ դարի՛ առատ չեմ տալի.
 Մի՞թէ սարքըդ չէ՛ սիրուն, շողշողուն,
 Կապդ ու փորքաշղ չեն արեւշումի.
 Երկզոյդ պայտերըդ չեն արծաթաջրած,
 Ասպանդակներըդ ոսկով չեն պատած:

Տխուր ձին ինձի՛ այս պատասխանեց.
 Պէս նորա համար՝ եմ այսչափ տրտում,
 Որ որոտմունքի ձայներ եմ լսում:
 Ահա փողերի թինդ ու դղողիւն,
 Նետերի ճայթիւնն աշխարհք է լնում:՝

Պէս խրինջում եմ մորմնքիչ ձայնով,
 Պատճառ՝ զգում եմ, որ հովիտներով
 Երկար չեմ վազել: — Պատուով չեմ ապրիլ,
 Իմ փայլուն սարքով էլ չեմ պճնուիլ:՝

Պի՛շնամին անդուլթ---ես այս զգում եմ---
 Իմ ողջ սարքերս պիտի կողոպտի,
 Եւ այս արծաթեայ երկզոյդ պայտերս
 Թեթեւ ոտներիցս նա պիտի պոկի:՝



Կովը թէ՛ և վիզեցիկ չէ, բայց լաւ կաթն է տալիս:
 Նորա դուռը լայն է, ականջները դէպի մի կողմ է ցցուած,
 ատամները պակաս են, բայց դորա փոխանակ երկար պոզեր
 ունի. ողնաշարը դուրս ընկած է, պոչը վրձնաձև, կողքերը
 բաժանված: Նա խոտը պոկում է, բերնում ծամում է ու
 կուլ է տալիս: Կուլ տուածը նա նորից դարձնում է բե-
 րանը և որոճում է, ջուր է խմում, բառաչում ու տան-
 տիկնոջը կանչում: Մըի՛, արի՛, տանտիկին, նայիր իմ լիք
 ծծերին, զոգնոցդ կապիր, կովկիթդ վեր առ, լիք կուրծս
 դարդկիր, որդոցդ կերակրիր:

Համեմատեցէր կովը ձիուն հետ: Ս

Կենդանիների վէճը:

Կովը, ձին և շուներ վիճում էին միմեանց հետ, թէ
 տանուտէրը նորանցից որին աւելի է սիրում:

Պի՛հարկ է նա ինձ՝ ամենիցդ շատ է սիրում, ասում
 էր ձին. ես նորա արօրը և ցաքանը քաշում եմ, անտա-
 ռից նորա համար փայտ եմ բերում: Նա շատ անգամ հեծ-
 նում է ինձ և քաղաք է գնում: Նա անանց ինձ բոլորո-
 լին կորած գլխեր:

— Ո՛չ, մեր տէրը ինձ աւելի է սիրում, ասաց կովը. քո
 արածդ ի՛նչ է, որ մեծ մեծ էլ խօսում ես, դորա մեծ մասը

իմ եղբայր եզն էլ կարող է կատարել. այն ինչ՝ ես նորա բոլոր ընտանիքը կաթնով կերակրում եմ:

— Ո՛չ, դուք երկուսդ էլ անպիտան եք, ոռնաց շունը. մեր տերը ինձ ամենիցդ աւելի է սիրում, որովհետեւ նորա բոլոր հարստութիւնը ես եմ պահպանում:՝

Կենդանիների տերը լսեց այս վէճը և ասաց նորանց. «Դուք տեղը միմեանց հետ մի վիճէք: Դուք ամենքդ էլ ինձ հարկաւոր եք և ձեզանից ամեն միւր լաւ է իւր տեղը:»

Ինչ օգուտ են տալիս մարդկանց ծին, կովը, շունը, կատուն:



Ա յ ծ:

Մազոտ և երկարամորուք այծը հպարտ հպարտ մանէր գալիս և պոզերը շարժում, միրուքը տմբ—տմբացնում, կձղակներով թռիկ—թռիկացնում, մանէր գալիս ու մըկում, փոքր ուլերին իւր մօտ կանչում: Իսկ ուլերը նորա ձայնը չէին լսում. նորանք պարտէզն էին մտել, կանաչ խոտ էին արածում, արմատները կրծ—կրծորում, մատաղ ոստերն փչացնում, յետոյ յետ դառնում, պող պողի ելք փում—միմեանց հետ կովում:

«Սպասեցէ՛ք, ահա պարտիզի տէրը կ'գայ, ձեզ ամենքիդ կարգ ցոյց կ'տայ:»

Համեմատեցէք այժը շան եւ կովի հետ:

Աղուէսը և Այծը

Աղուէսը դուրսը բարձրացրած նայում էր ազուաւին ու վազում—և վաղեմի յանկարծ ջրհորի մէջ դորուեցաւ: Ջրհորում այնքան ջուր չ'կար, որ նա խեղտուէր, բայց այնքան էլ խոր էր, որ դուրս գալն անհնար էր: Աղուէսը նստած իւր սև օրը ողորում էր: Յանկարծ՝ տեսնես, մեր խելօք այժը միրուքը տմբ—տմբացնելով անցնում է այնտեղից: Բան չ'ունէր, գործ չ'ունէր, ինչ անէր. ջրհորին մօտեցաւ, ներս նայեց և տեսաւ աղուէսին ու հարցրեց.

«Աղուէս ընկեր, այդտեղ ի՞նչ ես շինում:»

— Հանգստանում եմ, սիրելի, պատասխանեց աղուէսը. այդտեղ, վերեւ, շոգ է, այդ պատճառով ցած իջայ այս տեղ մի փոքր հովանաղու: Բայց որ իմանաս, թէ այս տեղ ի՞նչպէս հով է և լաւ: Սառը ջուրն է, ինչքան կամենաս:

Այծը շատ ծարաւ էր. «Խմե՛լու ջուր է,» հարցրեց նա աղուէսին:

«Հիմնալի ջուր է, ի՞նչ ես հրամայում, պատասխանեց աղուէսը. մնալու, լաւ: Ներս թռիկ, եթէ ուզում ես. այտտեղ երկուսիս էլ տեղ կ'լինի:»

Յիմար այժը ցած թռաւ ջրհորը և քիչ մնաց աղուէսին ջարդէր:

«Ե՛հ, յիմարամիրութ, թռչելու շնորհք էլ չունիս. բոլոր ջուրը շաղ տուիր:»

Այս ասաց աղուէսը ու թռաւ այժի մէջքից պոզերը և պոզերից էլ ցատկեց ջրհորից դուրս:

Քիչ մնաց, որ խելձ այժը ջրհորի մէջ ապտկեր քաղցածութիւնից. երկար որոնելուց յետոյ հազիւ գտան նորան և պոզերից թռիկ կապելով դուրս քաշեցին:



Ա չ Խ ա ռ:

Ասում են, որ ոչխարը յիմար է, ես էլ կածում եմ որ այդ ձգմարիտ է: Հրդեհների ժամանակ ոչխարները իրանք իրանց ընկնում են կրակի մեջ, իսկ երբոր գայլին տեսնում են, փախտի նման կանգնում են իրանց տեղերը և յիմարաբար կձղակներով գետինը թռկում են: Բայց մեր ինչին է հարկաւ որ ոչխարի խելքը մեզ հարկաւոր է նորա բուրդը գուլպայ և մահուդ շինելու համար, նորա ճարպը սապոնի և մոմի համար, կաշին—կօշիկների և ծուղերի, իսկ միսը խորովելու համար:

Համեմատեցէք ոչխարը այծի հետ:

Ընտանի և վայրենի եզներ: Որո՞նք կենդանիներ:

Մեր ընտանի կովն ու եզը ամենահանգաբար է խոնարհ կենդանիներ են, բայց վայրենի եզնից կատաղե գազան քիչ կայ: Երբոր նա զայրացած է, ոչնչեց չէ փախնում, կձղակներով գետինը փորում է, գլուխը կռացնում և ուղղակի յարձակվում մարդու վերայ. այն ժամանակ աշխատիր շուտով բարձրանալ ծառը, եթէ ոչ մի վայր կենում պոգեքով դէպի վեր կ'գցի և յետոյ ոտների տակ

կ'որորի քեղ: Առաւելապէս նա փայլուն գոյներ չէ սիրում և այդ գոյները տեսնելուն պէս իսկոյն յարձակվում է: Նորան սղաններն էլ հեշտ չէ եթէ ուղղակի ուղեղին չ'հարուածեցիր, շատ դժուար կ'ստակի: Վայրենի եզն ուտում է բոյսերի պատեանը, տերեւները և փնաւ է տալիս ծառերին: Բայց այս կենդանու օգուտը այնքան մեծ է, որ մարդիկ շատ հին ժամանակից նորան ընտանեցրել են: Եզանը, ինչպէս և վայրենի ձիուն, ընտանեցնելը շատ էլ դժուար չէ: Թոկերով նոցա ոտները և պոզերը մ'ձքձկով բռնում են, վզին լուծ են դնում և նա պակամայից խոնարհվում է: Բանելուն էլ այսպէս են ընտելացնում. նորան լծում են սայլի գլխին և եթէ տեղը անապատ է, ազատ թողնում են վազելու: Տղան, որ նստած է սայլում, խորազանով խփում քշում է նորան, մինչև որ յոգնի: Մեր Հայաստանում դիւղացիք շատ եզներ, կովեր և ոչխարներ են պահում: Նորանց հարստութիւնն էլ դորանք են: Գիւղացին եզնով է իւր վարուցանքը անում, եզնով է կրում իւր արտերի բերքը դէպի կալը և շատ անգամ էլ եզնով է կախում նորան: Եզան ու կովն ամբողջ նախիրներ նորանք տանում են մօտաւոր քաղաքները ծախելու: Նորանց մնակ մարդիկ կերակրվում են, կաշուից գանազան բաններ են շինում, եզջիւրները, կձղակները և ոտները զուր չեն կորչում: Մեծ սկրներինց գանակի կոթեր են շինում, մանրերը այրում են և նորա մրուրից սկներկ և կօշիկներկ են պատրաստում, կձղակներից սոսինձ են եփում: Այն էլ յայտնի է ձեզ, որ ամբողջ աշխարհը նոցա կաթնով է կերակրվում: Կաթը առողջարար կերակուր է. կաթնից պատրաստած պանիրն էլ նորանից պակաս չէ. պանիրը այն յարմարութիւնը ունի, որ նորան կարելի է պահել հարկաւոր ժամանակի համար, կարելի է ձմեռուպարհին հետը վերաու-

չորս կճղակ ունի, բայց մանգալին գայթուժ է: Նորա պոչը ոլոր է, ողնաշարը դուրս ցցուած, ողնաշարի վերայ կոշտ մաշկեր են դուրս եկած: Խողք երեքի չափ ունտում է, հինգի չափ հաստանում: Թերերն էլ նորան լաւ են պահում, բայց եթէ, թշնամու աւքը քոռ, բանջարանոցն է մոտում, տես թէ ինչպիսի գաղանակներով են այնտեղից դուրս խուկում:

Համեմատեցէք ոչխարը խոզի հետ:

Խողք կաղնի ծառի տակ:

Խողք հաստարմատ կաղնու տակ կանգնած, կերաւ կաղնիը գլուխը կախած. մինչև կոկորդը կերաւ, լըուեցաւ, ապա կաղնու տակ հանդարտ քնեցաւ: Յետոյ վարթելով բացաւ աչքերը և բոթ կնձիթով սկսաւ փորել այն կաղնի ծառի հաստ արմատները, որից այդ ժամին սնունդ էր առել: «Չէ որ այդ բանը ծառին վնաս է, նորան վերևից ագռաւը կասէ. եթէ այդպիսով արմատը բանաս, նա կ'չորանայ, այս լաւ իմանաս:» — Իսկ ինձ ինչ վնաս, թէ կը չորանայ, ցածից ասում է նորան խողքն ագռաւ. ես նորա վերայ իսկի չեմ ցաւում, կաղնին է իմն, նա է գերացնում: — Ապերախտ, ասաց բարձրից ծառն. ո՞ւմնից են թափվում այդ կաղնիներն. գէթ կարենայիր մի վերև նայել և քոռ աչքովդ այդ բանն ստուգել:



Ագռաւը և իւր ընտանիքը:

Ագռաւը լայն բազումն էր ճեմում, գլխի վերայ ոտնէ կատարն էր շարժում, կտուցի տակ կարմիր միրուքն

օրորվում: Իւր կտուցը դուրի պէս, պոչը շքեղ ցարդաբուած, ոտներն ունի խթաններ, պոչը ծալքեր ու շերտեր: Չանկերով հողն էր փորում, հաւին, ճուտին հրաւիրում. «Չո՛ւ-Չո՛ւ-Չո՛ւ, Չո՛ւ-Չո՛ւ-Չո՛ւ, հաւիկներ, դուք հոգատար մայրիկներ՝ չալեր, սևեր, սալտակներ, դեղին ու մոխրադրոյններ, հաւաքուեցէ՛ք ձագերով, ձեր քնքոյշ որդիներով. ձեզ համար աղը քջջեցի, հատիկներ պատրաստեցի: Հաւ ու ձագ հաւաքուեցան, կրկնապահ, մօտեկան, բայց փոխանակ ճաշելու, մէկ մէկու հետ կուռեցան:

Ագռաւըն այս չ'սիրեց, նորանց հաշտեցնել ուզեց, մինի գլխից, միւսի գանգրից բռնեց, թափիթափ տուեց, բոլորին հեռացրեց, հատիկն ինքը վայելեց, յետոյ կտուրը թռաւ, թռերը շարժեց, ծուղըուղու կանչեց—ձաշը վերջացրեց:

Համեմատեցէք ագռաւը հաւի հետ:



Բ ա գ:

Բարսեղը լճի ափը նստած մտիկ էր տալիս, թէ ինչպէս են բաղերը նորա մէջը թաւալվում, լայն կտուցները ջրի մէջ կոխում, գլուխները ծածկում, դեղին ոտները բարձրացնում, կարծես արևում տաքացնում: Բարսեղին ասել էին, որ բաղերը պահպանի, բայց նորանք ջրի երեսին խաղալով գնացին, հեռացան. ինչ անէր, նորանց ինչպէս առնէ դարձնէր: Մի ձար էր մնացել, սկսեց նորանց բարձրացնել. լեղ. բ. տ. ն. 8.—Ղ.

բաճայն կանել. ջո՛ւ-ջո՛ւ-ջո՛ւ, ջո՛ւ-ջո՛ւ-ջո՛ւ, իմ շատակներն,
լայնաքիթ բաղեր, թաղանթաոտներ, բաւական է ինչ քան
որդեր որսացիք, խոտ արածեցիք, տիղմը կուլ տուիք—քու-
շերդ լցրիք, շուտ ինձ լսեցէք ու տուն յետ դարձէք:

Բաղերը Բարսեղի ձայնը լսեցին, լողաղը թողին, փր
դուրս եկան, դէպի տուն դարձան. Բայց մի տեսնէիր, թէ
վազժողելս, ինչպէս էին թըմփի-թըմփում, այս կողմ, այն-
կողմ տատանվում:

Համեմատեցէք բաղը հաւի հետ:



Ս ա գ ե ր:

Պառաւը դուրս եկաւ ու քշեց սագերին դէպի տուն.
բը՛շ-բը՛շ-բը՛շ, սե ու սպիտակ սագեր, առէ՛ք ձեր ձագեր,
ժազէ՛ք ձեր բներ:

Իսկ չար սագերը հանդարտ պառաւին չ'ուզեցան լը-
սել, երկար ու բարակ վիզները ձգեցին, կարմիր թաղան-
թոտ ոտները շարժեցին, լայն թևերը թափ տուին, կռուց-
ները բաց արին. զս-զս-զս, զս-զս-զս, խիտ վատ գոռա-
ցին. մենք տուն չենք գնում, այստեղ ենք մնում:

Պառաւը տեսաւ, որ իրանց պատուով տուն չեն
դառնալու, ճիպոտը վերառաւ և քշեց նորանց դէպի տուն:

Համեմատեցէք սաղը հաւի եւ բաղի հետ:

Սագը և կռունկը:

Սագը լողում էր լճի երեսին և ինքն իրան խօսում
բարձրաձայն. յծձմարիտ, ինչ զամանալի թռչուն եմ ես,
երկրի վերայ ման եմ գալիս, օդումը թռչում, ջրումը լո-
ղում. ինձ նման էլ թռչուն չ'կայ աշխարհումս: Ես բոլոր
թռչունների թագաւորն եմ:

Կռունկը լսեց սագի խօսքերը և ասաց նորան: Պ՛ս
պարզամիտ սագ, մի՞թէ կարող ես դու լողալ ձկան նման,
ժազել եղնիկի նման, կամ թռչել արծուի նման: Աւելի
լու է մէկ բան հիմնաւոր խմանալ, քան շատ բան, բայց
ժառ:

Աղանիներ:

Սիրուն աղանիներ, թաւոտն թռչուններ, կտրին նըս-
տելով, միմեանց նայելով, իրար սիրում են, միշտ համ-
բուրժում են և ձագուկներին մնաս բարով ասելով, դէպի
դաշտն են շտապում, հատիկներ են հաւաքում, քուշե-
րում փափկացնում—իրանց քնքուշ ձագերին նախաճա-
շիկ պատրաստում: Իսկ բնի մէջ ձագերը, տկլոր աղաւ-
նեակները նստած են մնում, ուտել են ուղում: Մայրը
տուն է յետ դառնում և պատրաստի կերակրով փոքրիկ-
ներին կերակրում:

Համեմատեցէք աղանին հաւի հետ:

Ուրիշ վերայ չ'աէտք է ծիծաղել:

Դեղձանիկը չար թահարդի մէջ ընկաւ. խեղճը նո-
բա մէջ թրպարտում էր և չարչարում, իսկ փոքրիկ ա-
ղանին նորան ծաղը էր անում: Պ՛ս/թ չէ—ասում էր—

որ օրը կէս օրին ընկալ թակարդի մէջ: Ես համարձակ կարող եմ քեզ հաւատացնել, որ ինձ այդպէս հելտու-
թեամբ չէին կարող որոգայթի մէջ ձգել: Այս ասած
չասած, մին էլ տեսնես իւր ոտներն էլ խճճուեցան ցան-
ցի մէջ: Եւ արժանի էր: Թող այնուհետեւ ուրիշ վերայ
չ'ծիծաղէր:

Հրեղէն ձի: *)

Ա.

Մի ծեր մարդ երեք որդի ունէր. երկուսը խելօք, իսկ
երրորդը յիմար և կեղտոտ: Գիշեր, ցերեկ յիմարը տանը
վեր ընկած՝ ոչինչ գործի չէր գնում:

Այս մարդը մի օրավար ցորեն էր ցանել. ցորենը
դուրս էր եկել, մեծացել և զեղեցիկ հասկեր բռնել. մի-
այն գիշերները, չըզիտեմ ով էր գալիս ու արորում ար-
տը: Այս բանին մի ճար անելու համար, ծերը ասաց իւր
որդոցը. «Սիրելի որդիք, գիշերները հերթով գնացէ՛ք, արոք
պահպանեցէ՛ք և աշխատեցէ՛ք դողին բռնել:»

Առաջին գիշերը մեծ որդին գնաց պահպանութիւն
անելու, բայց կէս գիշերին քունը տարաւ և քնեց: Առա-
ջօտեան յետ դարձաւ տուն և ասաց. «Ամբողջ գիշեր
չ'քնեցի, սառայ, փայտ դարձայ, բայց գող չ'տեսայ:» Միւս
գիշերը երկրորդը գնաց, ողջ գիշերը քնեց և առաւօտեան
միկնոցն լուրը բերեց:

Երրորդ գիշերը հերթը յիմարին հասաւ: Նա մէկ
պարան վերառաւ և գնաց, արտի մօտ նստեց, դողին սպա-

*) Այսպէս է անուանվում այս տեսակ ձին հայկական
առասպելներում:

սեց: Կէս գիշերին մօտեցած՝ նորա քունը տարաւ: Յիմարը
վերառաւ դանակը, մատը մի փոքր կտրեց, մէջն աղ ա-
ծեց, միմեջացրեց և այսպիսով քունը փակցրեց: Կէս գի-
շերին, մէկ էլ տեսնես, աշխարհը շարժուեցաւ, քամի վեր-
կացաւ և երկնքիցը հրեղէն թւով մի ձի ցած իջաւ,
արտի մէջ մտաւ. քթածակերից ամպ էր բարձրանում,
աչքերում, կարծես, կայծակ էր փայլում:

Եւ ձին սկսեց ուտել ցորենը—ոչ այնքան ուտել,
ինչքան կոխոտել:

Փորսող տալով մեր յիմարը կամաց կամաց մօտեցաւ
ձիուն և յանկարծ թօկը նորա պարանոցը զցեց —բռնեց:
Չին ամենայն զօրութեամբ ձրձղեց, յետի ոտների վերայ
ծառս ելաւ, բայց մեր յիմարի ձեռքից չ'աղատուեցաւ: Ապա
կանգնեցաւ ու սկսեց աղաչել. «Յովհաննէս, բարեկամ, ինձ
արձակիր, ես դորա փոխարէն մեծ ծառայութիւն կ'անեմ
քեզ:»

«Դատ լաւ, բայց ես քեզ վերջը ի՞նչպէս դռնեմ»,
ասաց Յովհաննէսը:

— «Երբոր կամենաս ինձ կանչել, դուրս կրգաս դաշտը,
երեք անգամ կ'շուտցնես և կ'կանչես հրեղէն ձի, հրեղէն
ձի, շուտով ինձ հասիր, և ես այն բոլորին քո առաջը կը
լինիմ:» Յովհաննէսը արձակեց ձիուն և պատուիրեց, որ
միւս անգամ արտը չ'տորրի:

Յիմարը յետ դարձաւ տուն: «Ի՞նչ տեսար, ի՞նչ շի-
նեցիր», հարցրին նորան եղբայրները: Յովհաննէսը պա-
տախտեց. «Աս հրեղէն ձի բռնեցի. նա ինձ խոստացաւ,
որ էլ մեր արտը չ'մոնի, ես էլ նորան արձակեցի:» Մնա-
ցած բաները նա չ'պասմեց: Դատ ծիծաղեցան եղբայրները
խեղճի վերայ միայն ճշմարիտ, որ այն օրից յետոյ ոչ ոք
արտին կնաս չտուեց:

պայց ոչ ոք չէր համարձակուած նորա մօտ ցատքել. ո՞վ կ'կամենար իւր վիզը կոտրել: Մէր Յովհաննէսը խփեց իւր հրեղէն ձիու կողերին. ձին մռնչաց ու ցատքեց. միայն երեք աստիճան մնաց, որ հասնէր թագաւորսոյն աղջկան: Ժողովուրդը լեզուն կծեց—զարմացաւ. իսկ Յովհաննէսը իւր ձիու բերանը յետ դարձրեց ու փախաւ: Եղբայրները ուշ ճանապարհ տուին նորան: Յովհաննէսը նորանց մի լաւ մտրակեց և անյայտացաւ. երբոր հասաւ նոյն դաշտը, ձիու վերայից թըռաւ, իւր առաջուայ կերպարանքն ոտացաւ, ձին արձակեց ու դարձաւ տուն: Եղբայրները երեկոյեան յետ դարձան քաղաքից և իրանց հօրը պատմեցին իրանց տեսածը: Իսկ Յովհաննէսը քթի տակին ծիծաղում էր:

Այս անցքից մի օր յետոյ թագաւորից ամեն զինքն ու քաղաքներ մոնետիկներ ուղարկուեցան, որոնք բարձր ձայնով գոչում էին և անում. Ո՛վ պարոններ, քաղաքացիներ, աշխուակներ և զինուորացիներ, մեծ թագաւորը տօն է կատարում և ձեզ ամենիդ հրաւիրում է. երեք օր պէտք է ուրախութիւն լինի: Լաւ ձիաներդ վերանէք. թագաւորի միակ և արեգակից զեղեցիկ աղջկը բարձր բուրգի պատշգամբում նստած կ'լինի, ով որ իւր ձիով կարողացաւ թռչել, արքայուհուն հասնել ու նորա մօտից մատանին հանել, թագաւորը նորան իւր աղջկը կնուծեան կտայ:

Յովհաննէսի եղբայրներն էլ զնային այս հանդէսին. բայց ոչ թէ իրանք թռչելու, այլ ուրիշներին նայելու: Յովհաննէսը խնդրեց, որ իրան էլ հետները տանեն: Եւ ինչի համար ես դալիս, յիմար,—ասացին եղբայրները—մարդկանց վախեցնելու, ի՞նչ է. տանը վերնկէր:

Եղբայրները ձի նստեցան—զնային. Յովհաննէսն էլ նորանց յետևից ծածուկ դուրս դնաց դաշտը և իւր հրեղէն ձիուն կանչեց: Որտեղեց որ էր, ձին խփոյն վազեց, Յովհաննէսի առաջին կանգնեց: Յովհաննէսը ձիու զլսովը ցատքեց, որից յետոյ կերպարանքն էլ փոխուեցաւ և մի այնպիսի քաջ տղամարդ դարձաւ, որ տեսնողը ամենեւին չէր ճանաչել, թէ առաջուայ կեղտոտ Յովհաննէսն է: Եւ տոյ նա հեծաւ ձին ու քշեց դէպի հանդէսը: Գնաց—տեսաւ, որ թագաւորի տան առաջ ընդարձակ հրապարակում, անհամար ժողովուրդ է հաւաքուած, իսկ բարձր աշտարակի պատշգամբի վերայ թագուհին նստած է. ինքը զեղեցիկ լուսնի նման, մատանին փայլում է արեգակի նման:

Բայց ոչ ոք չէր համարձակուած նորա մօտ ցատքել. ո՞վ կ'կամենար իւր վիզը կոտրել: Մէր Յովհաննէսը խփեց իւր հրեղէն ձիու կողերին. ձին մռնչաց ու ցատքեց. միայն երեք աստիճան մնաց, որ հասնէր թագաւորսոյն աղջկան: Ժողովուրդը լեզուն կծեց—զարմացաւ. իսկ Յովհաննէսը իւր ձիու բերանը յետ դարձրեց ու փախաւ: Եղբայրները ուշ ճանապարհ տուին նորան: Յովհաննէսը նորանց մի լաւ մտրակեց և անյայտացաւ. երբոր հասաւ նոյն դաշտը, ձիու վերայից թըռաւ, իւր առաջուայ կերպարանքն ոտացաւ, ձին արձակեց ու դարձաւ տուն: Եղբայրները երեկոյեան յետ դարձան քաղաքից և իրանց հօրը պատմեցին իրանց տեսածը: Իսկ Յովհաննէսը քթի տակին ծիծաղում էր:

Միւս օրը մեծ եղբայրները միւսների նման էլի գնացին հանդէս և Յովհաննէսին հետները չտարան: Յովհաննէսը դուրս եկաւ դաշտը, ձիուն կանչեց, հեծաւ ու քշեց: Երբոր թագաւորի պալատին մօտեցաւ, առաջուանից աւելի մարդ տեսաւ: Ամենքն էլ թագաւորսոյն աղջկանն էին մօտիկ տալիս, բայց ոչ ոք չէր կամենում ցատքել: Նա խփեց իւր ձիու կողերին: Զին մռնչաց ու ցատքեց—միայն երկու աստիճան մնաց, որ աղջկան հասնէր: Ժողովուրդը լեզուն կծեց, զարմացաւ. իսկ Յովհաննէսը իւր ձիու բերանը յետ դարձրեց ու փախաւ: Նորա եղբայրներն ուշ ճանապարհ տուին. Յովհաննէսը նորանց մի լաւ մտրակեց, ճանապարհ բացեց, դէպի դաշտ վազեց, իւր ձին արձակեց ու յետ դարձաւ տուն: Եղբայրներն եկան, իրանց հօրը պատմեցին բոլոր. իսկ Յովհաննէսը լսում էր և քթի տակին ծիծաղում:

Գ.

Երբորդ օրը եղբայրները նորից գնացին հանդէս Յովհաննէսը դուրս եկաւ դաշտը և հրեղէն ձին հեծնելով ինքն էլ գնաց, բայց երբոր աշտարակին մօտեցաւ, ձիուն այնպէս մորակեց, որ նորա ազդրից կաշն պրկուեցաւ: Կենդանին մռնչաց, սաստիկ ուժով վերցատեց և պատշգամբին հասաւ: Յովհաննէսը շտապեց, թագուհու մատից թանկադրին մատանին հանեց, ձին յետ դարձրեց և սկսեց փախչել: Թագաւորը, թագուհին և բոլոր ժողովուրդը սկսեցին զոռալ. «հայ, բռնեցէք, բռնեցէք . . . բայց որտեղ . . .»

Յովհաննէսը տուն դարձաւ՝ ձեռքի մէկը փալատով փաթաթած: «Այդ ի՞նչ է եղել ձեռքդ», հարցրին նորան հարսները:

— «Մորի քաղելիս քարից վայրընկայ, ձեռքս պրկուեցաւ, ոչինչ բան չ'կայ», ասաց Յովհաննէսն ու գնաց, կրակի առաջ վայրընկաւ:

Եղբայրները յետ դարձան և մեծ զարմանքով պատմեցին իրանց հօրը բոլորը, ինչոր պատահել էր քաղաքում: Այդ միջոցին Յովհաննէսը կամեցաւ նայել մատանուն. փալատը բարձրացրեց, թէ չէ, բոլոր խրճիթը սկսեց փայլել: «Քիմար, կրակի հետ չեն խնդալ, զոռացին եղբայրները, փոքր մնաց խրճիթը կրակէլր. ամենեւին պահելու պտուղ չես, վաղուց պէտք էր քեզ տանից դուրս անել»:

Գ.

Երեք օրից յետոյ թագաւորից մահնետիկ է գալիս և ասում է, որ բոլոր մարդիկ, որոնք բնակւում են նորա թա-

գաւորութիւնում, զնան նորա մօտ խնջոյք անելու և ոչ ոք չ'համարձակուի տանը մնալ. իսկ ով որ թագաւորի այս հրամանը չի կատարիլ, նորա գլուխը կ'կտրուի:

Ուրիշ հնարք չ'կար. ձերունին իւր բոլոր ընտանիքով գնաց հրաւերք: Սկան, ժողովուեցան, սիւռոյի շուրջ շարուեցան, կերան, խմեցին, շատ ուրախացան: Խնջոյքի վերջում թագաւորի աղջկը իւր ձեռքով սկսեց ամենքին մեղը բաժանել: Ամենից յետոյ Յովհաննէսին մօտեցաւ: Յովհաննէսն էլ այն օրումն էր, որ թշնամիք չ'լինի. շորերը պատուտուած, մրտաւած, մաղերը աղտոտ, խճրճուած, ձեռքի մէկն էլ մի կեղտոտ փալատով փաթաթած. իստակ զզուելի: «Տղայ, ձեռքդ ի՞նչն է կապած, հարցրեց թագաւորի աղջկը. «բաց արա, տեսնամ»:

Յովհաննէսը ձեռքի փաթաթանը յետ արեց և մատի վերայ փայլեցաւ թագուհու մատանին: Աղջկը բռնեց նորա ձեռքից, տարաւ իւր հօր մօտ և ասաց. «Հայրիկ, ահա իմ փեսացուն»:

Սկսեցին Յովհաննէսին բաղանիք տանել, գլուխը սանրել, մազերն օծել, շորերը փոխել, և նա այնուհետեւ այնպիսի գեղեցիկ տղամարդ դարձաւ, որ իւր հայրն ու եղբայրներն էլ չէին կարողանում ճանաչել: Թագաւորն եօթն օր, եօթը գիշեր հարսանիք արեց, մեծ խնջոյք տուեց և Յովհաննէսին փառքով պսակեց:

ՊԱՐՏԵՂ ԵՒ ԱՅԳԻՒ

Պարտեղ:

Պարտեղները չինում են տների մօտ և չորս կողմից ցանկ կամ պատ են քաշում: Պարտեղը մշակում է կամ ինքը պարտիզն տէրը կամ պարտիզպանը. նորան աղբով սաստիկ

բարեբաւում են: Պարտեզներում մարդեր են շինում. մարդե-
բում ցանում և անկում են պարտիզե բոյսեր: Լորու-
համար ձողեր են ցցում: Պարտեզին վրաս են տալիս որդ-
ները, թռչունները, հաւերը և ընտանի կենդանիները:
Շող ժամանակը մարդերը ջրում են: Պարտիզե բանջարե-
ղէնները մարդիկ դործ են անում իրրե կերակուր, իսկ միւս
անպէտք մասերը տալիս են անասուններին:

Գիւղացին և արջը:

Արջը բարեկամացաւ գիւղացու հետ և միասին
խորհուրդ արին, որ կարողիլ ցանեն: Գիւղացին սասց-
ռԱ՛րջ եղբայր, արմատը ինձ, դուխը քեզ: Արջը համա-
ձայնուեցաւ: Շատ լաւ կարողիլ դուրս եկաւ. գիւղացին
վերադաւ արմատը, իսկ չոփերը տուեց արջին: Արջը շատ
էլ փրնթ-փրնթաց, բայց լի՛նչ պիտի անէր:

Միւս տարի գիւղացին նորից ասաց արջին. ռԱ՛րջ
եղբայր, արի, էլի միասին ցանենք:— ՊԱ՛րի ցանենք, միայն
այս տարի դու դուխը վերադ, իսկ ես արմատը, ասաց
արջը.— ՊՇատ բարի, պատասխանեց գիւղացին, թող քո
ասածը լինի, և ցորեն ցանեց:

Շատ առատ ցորեն դուրս եկաւ. գիւղացին ստացաւ
հասկերը, իսկ արջը արմատները:

Ի՞նչն են ուտում կարողիլի, դողարի, կողարի, ցորենի . . .

Կաղամբի թիթեռ:

Մանուկը պարտիզում բռնեց մէկ սպիտակ թիթեռ և
բերեց իւր հօր մօտ

Պա՛ս ամենալուսաւոր թիթեռ է, ասաց հայրը.
թիթէ դորանք բաղմանան, մեր կաղամբը բողբոջին կ'ոչոն-
ջանայ:

— Մի՛թէ սա այդպէս ազահ է, հարցրեց մանուկը:

ՊԱ՛ թէ ինքը թիթեռն է ազահ, այլ նորա թըր-
թուրը, պատասխանեց հայրը. Պայդ թիթեռը ածում է
շատ մանր ձուաններ և նորանցից դուրս են սողում որդունը-
ներ, որոնք անուանւում են Թրթուրներ. Թրթուրը շատ
ազահ է. նա ուրիշ բան չունի, բացի ուտելն ու մեծա-
նալը: Երբ նա մեծանում է, պատկնաւորւում է: Այդ մի-
ջոցում նա ոչ ուտում է, ոչ խմում, այլ անշարժ ընկած
է: Միքանի ժամանակից յետոյ նորանից թիթեռ է դուրս
գալիս, ինչպէս ահա այդ բռնածդ: Այդպէս կերպարանա-
փոխւում են ամեն թիթեռներ. ձուից գոյանում են թըր-
թուրներ, թրթուրներից պատկնաւորներ և սողանցից թի-
թեռներ: Իսկ թիթեռները ձուեն ածում և մեռնում:

Կարգով պատմեցէր Թիթեռի կերպարանափոխութիւնը:

Ա. յ 4 ի:

Այգիները տնկում են տների մօտ կամ քաղաքից
դուրս և չորս կողմից ցանկ կամ պատ են քաշում: Այգի-
ներում բուսնում են պողատու ծառեր, թփեր և պար-
տիզե ծաղիկներ: Այգիներում գեղեցիկ հասարակ ծառեր
էլ են լինում. գեղեցիկ են նոյնպէս կակղի ծառի ստուերախիտ
ճեմելիքը և զբօսարանը: Այդու ճանապարհներում ա-
ւաղ են ցանում, որ խոտ չ'կանաչի և ցեխ չ'լինի: Այգին
պահպանում է կամ ինքը տէրը և կամ այգեպանը: Այ-
գիները մարդու շատ օգուտ են տալիս:

Համեմատեցէր այգին պարտիզի հետ:

Ա. յ 4 ի

Կանաչեր, դէ՛հ կանաչեր,
Ի՛նչ կանաչագեղ այգի.

Ծաղկեցէք, դէ՛հ ծաղկեցէ՛ք,

Իմ վարդապետն ծաղկեցէ՛ք:

Ղէ՛հ, հասէ՛ք, շուտով հասէ՛ք,

Դուք քաղցրահամ արտուղներ,

Ինձ մօտ կ'դան, կ'հաւաքուին

Իմ սիրելի ամեն հիւրերն:

Ինձ մօտ կ'դայ ծնող հայրս

Եւ ուղիւմը կ'զօանի,

Հասած արտուղներ կ'քաղի

Եւ ինձ, փօքրիս, կ'զուլի,

Որ այս այգիս լաւ եմ պահել,

Շուտ շուտ ջրել, բուսցրել,

Շողից ու ցրտից պահպանել —

Այսպէս գեղեցկացրել:

Բոյսերի տեսակները:

Բոյսերից մենք գիտենք ծառեր, թփեր, հացաբոյսեր, բանջարեղէններ, սունկեր և խոտեր:

Ծառը ունի մի հաստ բուն, շատ ձիւներ և թափեր: Ուտերի վերայ կան կամ տերեւներ կամ ասեղներ—փշեր: Թուփը մէկ բնի փոխանակ մի քանի բարակ բներ ունի:

Հացաբոյսերը բնի փոխանակ դառարկ ծղօններ ունին:

Խոտը ունի բարակ ցողուն—Սունկը չունի ոչ տերեւ և ոչ թափեր, միայն ունի մի կոթ և նորա զլխին իւր գլխարկը:

Մենք ուտում ենք մի քանի բանջարեղէնների պատեանները և նորանց միջի սերմերը, միւսների արմատը, իսկ մի քանիսների—տերեւները:

Ինչ ծառեր, թուփեր, հացաբոյսեր, սունկեր, բանջարեղէններ եւ ծաղիկներ գիտէք:

Ծաղիկների երգ:

Վ ա Ր Դ.

Ինձ ամենքը կոչում են

Ծաղիկների թաղուհի,

Որովհետեւ ծաղիկս

Սիրուն գոյն և հոտ ունի:

Թէ՛ւ իմ կանաչ թուփը

Շատ մարդու ձեռք կը ծակի,

Բայց այս անմեղ յանցանքը

Ինձ ամեն մարդ կընեն:

Շ ու շ ա ն.

Իմ սպիտակ կոկոմում

Անուշ բուրմունքներ կայ շատ,

Եւ ոսկեման փոշի,

Մեղուններին բաղմաշխատ:

Իմ ցողունս է նաղուք

Եւ զգալիս գեղեցիկ,

Իմ թերթերս ընդարձակ

Եւ ինքս եմ խիստ հեղիկ:

Իմ հիւրասէր թերթերում

Մեղու, մրջին թէ թիթեռ

Կարող են հանգիստ դնել

Իրրեւ աղնիւ գեռուններ:

Յ ա փ Ր ու Լ.

Իմ թուփերս փարթամ չեն,

Ոչ ծաղիկս փառաւոր,

Բայց բուրմունքս կը լսեն
Ամեն մարդիկ հեռաւոր:

Այս պատճառով կարող էք
Յափրուկ գտնել ամեն տեղ,
Թէ փոքրիկ պարզ փունջերում,
Թէ պարտէզներում շքեղ:

Վ ա Ր Ղ:

Իւր գեղեցիկ տեսքի և անուշահոտութեան համար
վարդին ծաղիկների թագուհի են կոչում: Նա վարդի
թփերի վերայ է բուսնում: Վարդենու արմատները երկար
են և պինդ. շագանակադոյն բունը և կանաչ նորաբոյս
շառաւիղները պատած են մանր փշերով: Վարդենու տերեւը
բոլորակաձև է, շուրջը սուր ատամներով: Նորա ծաղիկները
լինում են սպիտակ, ալ, կարմիր և դեղին: Մէկ թփի վե-
րայ բոլոր ծաղիկները միևնոյն դոյնի են լինում: Մեծ վար-
դենիները անթիւ գնտաձև կոկոմներ են ունենում:

Պատիկ է, բայց ճըստիկ է:

Մորու հասարակ սպիտակ ծաղիկը համեստաբար
նայում էր խոտերի միջեց, իսկ փառահեղ կակաչը դոռո-
ղաբար շարժում էր նորա վերայ իւր փայլուն գագաթը:
Տասն օր անցաւ. սպիտակ ծաղիկ տեղ կարմրին էր տալիս
ախորժահամ պտուղը, իսկ գոռօղ կակաչի տեղ տառան-
վում էր նորա թառամած ցողունը:

Կակաչ:

Կակաչը մի գեղեցիկ պարտիզի ծաղիկ է, բայց հոս
չունի: Նա բուսնում է սոխարմատից: Սոխարմատը հողի

մէջ թելի նման մանր ծիլեր է արձակում, իսկ դէպի վեր
է ուղղում երկար հարթ տերեւներ և կոլոր ցողուն: Յո-
ղունի վերայ բացվում է մի դանդաղի նման ծաղիկ: Կակաչ-
ները լինում են՝ դեղին, կարմիր և պէսպիսադոյն:

Համեմատեցէք կակաչը մորու եւ վարդի հետ:

Ում հետ ընկերանաս, նորա բարբը

կ'ստանաս:

Վայրենի հասարակ ծաղիկը պատահմամբ մեխակի
հետ մի ծաղկամանում անկուեցաւ: Եւ ի՞նչ էք կարծում,
նորանից ինքն էլ սիրուն անուշ հոտ ստացաւ: Լաւ ըն-
կերի հետ ապրելը բերում է մեզ օգուտ անբաւ:

Մի խնձորենու պատմութիւն:

Անտառումը աճել էր մի վայրենի խնձորենի: Աշնանը
նորանից մի տրդղան վայր ընկաւ: Թռչունները կտցահա-
րեցին թէ խնձորը և թէ նորա սերմերը. միայն մի սերմ
ազատուեցաւ նորանց կտցից և հողի տակ պահուեցաւ:

Ամբողջ ձմեռ սերմը մնաց ձիւնի տակ, իսկ գարնանը,
երբ արեգակը տաքացրեց խոնաւ դեռինը, սերմը սկսեց ա-
ճիլ. նա ծիլեր արձակեց դէպի խորը, իսկ դէպի վեր ու-
ղարկեց իւր առաջին երկու թերթիկները: Թերթիկների
միջեց դուրս եկաւ ցողունը և նորա վերայ երեւեցաւ առա-
ջին տերեւների փոքրիկ կոկոնը, որի միջեց վեր բարձրացան
կանաչ տերեւներ: Այնուհետեւ նորնոր կոկոններ, տերեւներ
և ոստեր մէկը միւսի յետեւից առաջ եկան և հինգ տա-
րուց յետոյ, այնտեղ, ուր առաջին անգամ վայրենկաւ
սերմը, կանգնած էր մի գեղեցիկ խնձորենի:

Այգեպանը մի բաձ ձեռքին եկաւ անտառը, տե-
սաւ խնձորենին և ասաց. «Ա՛յ, ի՞նչ գեղեցիկ ծառ է. աս
ինձ հարկաւոր կ'գայ»: Գողաց խեղճ խնձորենին, երբոր
այգեպանը սկսեց նորա տակը փորել, և մտածում էր, թէ
ինքը կորած է բոլորովին: Բայց այգեպանը զգուշութեամբ
փորեց, արմատները չ'վնասեց, հանեց, տարաւ իւր այ-
գին ու անկեց մի լաւ տեղ:

II.

Խնձորենին հպարտացաւ ինքն իրան և ասում էր.
«Երևի ես մի հազուադէպ ծառ եմ, որ ինձ անտառից
փոխադրեցին դէպի այգին»: Այս ասելով, նա բարձրից
նայում էր իւր չորս կողմի տգեղ կոճիկի վերայ, որոնց
զուլանները փայտսով փաթաթած էին. նա երևի չ'զիտէր,
որ իրան կրթարան են տարել:

Միւս տարին եկաւ այգեպանը կեռ դանակը ձեռ-
քին և սկսեց կրթել խնձորենին: Գողաց խեղճ խնձորենին
և մտածում էր: Պիմա ահա ևս բոլորովին կ'որայ:

Այգեպանը կտրատեց ծառի բոլոր կանաչ վերնամասը
և միայն կոճիկը թողեց. բայց այդ բաւական չէր. նա
կոճիկն էլ վերեւից ճեղքեց, այդ ճեղքի մէջ հազ-
ցրեց մի զուարթ շառաւիղ, որ կտրել էր ուրիշ խնձո-
րենուց, բացուած վերքը ձիւթով ծածկեց, փալատով
փաթաթեց, ճեղքերն էլ մանր սկսերով լցրեց և թողեց
գնաց:

III.

Խնձորենին խթացաւ. բայց նա այժմ աւելի գու-
արթ էր և ուժեղ, այդ պատճառով էլ շատ շուտով ա-

ռողջացաւ և միացաւ օտար ճիւղի հետ: Օտար ճիւղը ծը-
ծում էր ուժեղ խնձորենու հիւթը և արագ զուարթ մե-
ծանում էր, բազմաթիւ նորնոր կոկոններ, տերեւներ, ոստեր
և ճղներ մէկը միւսի յետեւից արձակում էր, այնպէս որ,
երեք տարուց յետոյ ծառը կարմրախառն և անուշահոտ
ծաղիկներով զարդարուեցաւ: Ծաղիկների կարմրագոյն թեր-
թիկները թափուեցան և նորանց տեղը երևեցան փոքրիկ
կանաչ մատուրներ, որոնք փոքր առ փոքր մեծանալով աշ-
նանը խնձոր դարձան, բայց ոչ թէ վայրենի թթու տըզ-
գաններ, այլ մեծ մեծ, կարմրագոյն, քաղցր և փուխթ
խնձորներ: Եւ խնձորենին այնպիսի պատուական ծառ էր
դարձել, որ ուրիշ այգիներից գալիս էին նորանից շառա-
ւիղներ տանելու, պատուաւոր համար:

Չափիկ *)

Որ դին. նայիր, հայրիկ, ինչպիսի գեղեցիկ, կտրիկ
բզէզ եմ բռնել: Նորա զուլսը սե է, թւերը կարմիր և
թւերի վերայ բծեր կան: Մի՞թէ ոս կենդանի է, հայրիկ
Ամենեին չէ շարժվում:

Հ ա յ ր Ը. Կենդանի է, բայց մեռած է ձեւանում. իւր
ոտները ծալել, փորկցն է կպցրել, բեխերը թաքցրել է և
սպասում է, որ դու նորան վայր զցես խոտերի մէջ: Դորա
անուշը դասիկ է և մի շատ օգտակար բզէզ է: Դա և ա-
ւելի դորա թրթուրները փչացնում են շատ վնասակար
կանաչագոյն միջատներ, որոնք խմբովին կպչում են տերե-
ւերին և շատ վնաս են տալիս բոյսերին:


Որ դին. նայիր, հայրիկ, բզէզը արթնացաւ և բարձ-
րացաւ մատիւս ծայրը: Այնտեղից նա ֆէր կ'գնայ:

*) Божья коровка.

Հ ա յ Ր Ը. Ահա կ'տեսնես, նայիր, նա ի՛նչպէս շարժում է իւր կարծր վերնաթևերը և նորա տակից հանում չռում է իւր իսկական թևերը, որոնք թեթև են և թափանցիկ:

Ո Ր Դ Ի Ն. Ահա թռաւ նա. ի՛նչ խորամանկ բղէղէ եղել:

Համեմատեցէք զատիկը թիթեռի հետ:



Թ ի Թ Ե Ո:

Մ ա ն ու կ.

Սիրուն թիթեռ, ինձ ասա՛,
Թէ ի՛նչով ես գու ապրում.
Ամբողջ օրը խաղում ես,
Ի՞նչպէս է, որ չես յողնում:

Թ ի Թ Ե Ո.

Սիրուն կանաչ դաշտերում
Ես ապրում եմ համարձակ,
Ծաղկանց բուրմունքը անուշ
Իմ կերակուրս է միակ:

Բայց իմ կեանքս շատ կարճ է,

Նա մի օրից չէ երկար.

Բարի եղիր, ով ամուսնի,

Խնայիր, ինձ մի՛ ձեռք ոտոր:

Ա. գ ու ա ը և կ ա չ ա ղ ա կ ը:

Չալ կաչաղակը թռչկոտում էր ծառերի ճիւղերի վերայ և անդադար խօսում էր, իսկ ագռաւը միւս կողմը ուռ նստած էր — ի՛նչ ես լռում, բարեկամ, միթէ՞ չես հաւատում, ինչոր ես քեզ պատմում եմ,՝ հարցրեց վերջապէս կաչաղակը:

Դժուար եմ հաւատում, բարեկամ, պատասխանեց ագռաւը, ով որ քեզպէս շատ է խօսում, նա լաւ իմանա՛ս, շատ էլ սուտ է ասում:



Ծ ի ծ ե ո ն ա կ:

Ծիծեռնակը, տես, ամենեւին չէ հանգստանում. ամբողջ օրը թռչում է, ծղօսներ է հաւաքում, կտուցովը կուէ կրում, իւր համար բռն է շինում: Բռնը շինեց, վերջացաւ. մէջը երեք ձու ածեց, նոցա վերայ շարունակ երեք շաբաթ օլինդ նստեց — փոքրիկ ձաղեր գոյացրեց: Չուղերը որ դուրս եկան, բերանները բացարին և կերակուր

խնդրեցին: Ծիծեռնակը թռաւ, դաշտը դուրս եկաւ, մօեզներ բռնեց, ձագերին կերակրեց:

Ժամանակը հասաւ. ձագերի փետուրները դուրս եկան. նորանք թռաւորուեցան, իրանց բնից դուրս թռան, հեռու ճանապարհ ընկան, կապոյտ ծովերի, մութ անտառների, բարձր սարերի վերայից անցան:

Զմեռն անցկացաւ: Գարունը եկաւ: Ծանօթ ծիծեռնակը նորից յետ դարձաւ, իւր բունը գտաւ, նորան կարկատեց, նոր ձուեր ածեց, նոր ձագեր հանեց, պահեց՝ մեծացրեց, աշնանը նորից նոյն կարգով թռցրեց:

Բզէզը և ծիծեռնակը:

Բզէզը պատեանը ամբողջ ձմեռ ընկած էր հողումը: Կարծես թէ մեռած էր. բայց ոչ: Գարնանը պատեանից բզէզ դուրս եկաւ և բարձրանալով ծառը սկսեց ուտել նորաբոյս տերեւները:

Ծովն այն կողմից ծիծեռնակը վերադարձաւ և սկսեց կարկատել իւր հին բնակարանը: Փափուկ սարքերուց յետոյ նա տեսաւ բզէզին և ասաց. «Ի՛նչ, դ՞ուր էլ ես ըոյս աշխարհ դուրս եկել: Բայց սիրելի, դու մարդկանց շատ քիչ օգուտ ես տալի, ինքդ ուտում ես տերեւները, ձագերդ կռծում են արմատները և ծառը չորանում է: Սպասիր մի փոքր, դու ինձ պէտք կ'գաս նախաճաշիկ անելու»:

Ուրիշին հոր փորձը ինքը մէջը կ'ընկնի:

Մի ծեր մարդ ապրում էր իւր պսոթաւ կնոջ հետ: Պառաւը շատ չար կին էր և ունէր մի աղջիկ, անունը՝ Նազուլ: Նազուլն չարութեան կողմից իւր մօրից պահու էր:

Ծերը հանդարտ և բարի մարդ էր և ունէր մի աղջիկ, որի անունը Մարիամ էր: Մարիամն էլ շատ հանդարտ, աշխատասէր և զեղեցիկ աղջիկ էր:

Խորթ մայրը ամենեւին չէր սիրում Մարիամին: Նա միշտ ասում էր իւր մարդուն. «Ձեռմ ուզում Մարիամի հետ կենալ: Տար նորան անտառը, այնտեղ մի գետնափոր դափր, թող նա այնտեղ մանի, գործի, ինչ ուզում է անի»:

Պառաւը այնքան ասաց, որ խեղճ մարդու գլուխը տարաւ: Եւ ուրիշ ճար չ'կար. ծերը լծեց սայլակը, վերառաւ Մարիամին և ճանապարհ ընկաւ: Գնացին անտառը և այնտեղ դռան մի այր: Շատ ցաւում էր ծերը իւր աղջկայ վերայ, բայց ինչ անէր: Նա տուեց Մարիամին հրահան, կայծաքար, արէթ և մի տոպրակ բրինձ ու ասաց նորան. «Մարիամ, կրակ վառիր, որդի, բրնձից քեզ համար կերակուր եփիր, խրճիթդ լաւ սրբիր—աւելիւր և դու էլ նստիր ու մանի՛ր. մի վախենար, վաղը ես կ'գամ քեզ տեսու թիւն»:

Ծերը մնաց բարով ասաց իւր աղջկան և յետ դարձաւ տուն: Մարիամը մնաց մենակ, ամբողջ օրը մանեց. իսկ երբոր մթնեց, վառարանը վառեց և իրան համար կերակուր եփեց: Հենց որ կերակուրը սկսեց եփ զալ, մին էլ ականես յատակի տակից մէկ մուկը դուրս վազեց և նորան ասաց. «Սիրուն աղջիկ, մի գդալ ապաս տուր ինձ, խնդրեմ»:

Մարիամը լուր կուշա կերակրեց մկանը. նա էլ շնորհակալութիւն արեց և դնաց: Մարիամը ինքն էլ հաց կերաւ և էլի սկսեց մանել: Յանկարծ, կէս զիշերին, մէկ արջ ներս մտաւ խրճիթը և ասաց մարիամին. «Ապա, աղջիկ, կրակը հանդցրու, արի, աւքակապուկի խաղանք: Վերառ այս արծաթէ զանգակը ու զընդ—զընդացրու, իսկ ես կաշխատեմ քեզ բռնել»:

Մարիամը շատ վախեցաւ և չէր իմանում ինչ անի: Բայց այն բոլորին մեկը դուրս վազեց ծակից, բարձրացաւ Մարիամի ուսերը և նորա ականջումն ասաց. «Մի վախե՛ նար, Մարիամ, կրակը հանգցրու, դու էլ դրան յետեւ թափեց, իսկ զանգակը ինձ տուր:» Մարիամը այնպէս էլ արեց:

Արջը սկսեց խաղը, բայց ամենեւին չ'կարողացաւ մկանը բռնել. մեկը վազում էր և զընդ—զընդացնում, իսկ արջը նորա յետեւից պտուտ պտուտ էր անում: Նա շատ այս կողմն այն կողմն ընկաւ, բարկացաւ, կատաղեցաւ, դուռաց բարձր ձայնով ու սկսեց դադանակով բոլոր անկիւններին և պատերին խփել. կոտորտեց բոլոր ամանները, բայց մկանը ինչ պիտի անէր: Վերջապէս արջը հանդարտեցաւ, և ասաց. «Դու շատ լաւ աչքակապուկի ես խաղում, աղջիկ, այդ պատճառով ես առաւօտեան կուղարկեմ քեզ համար մի ջուր ձի և մի սայլ հարստութիւն.» ասաց ու գնաց:

II.

Միւս օրը առաւօտեան պառաւն ինքն ուղարկեց ծերին անտառ. «Գնա՛, ասաց, տես շատ է մանել քո Մարիամը:»

Ծերը գնաց. իսկ պառաւը նստեց լուսամուտի առաջ և ինքն իրան ասում էր. «Ահա ծերուկս կ'գայ և Մարիամի ոսկրներն էլ հետը կ'բերի:»

Պառաւը նստած էր ամբողջ երկու երեք ժամ և սպասում էր. յանկարծ լսեց, որ անտառի կողմից մի չըխկ—չըխկոցի ձայն է դալիս, իսկ փոքրիկ շունը տախտի տակից հաջում է և ասում. «Տես, տես, ծերունու աղջկը

դալիս է և հետն էլ մի խումբ ձի է քշում, մի սայլ էլ հարստութիւն է բերում: Պառաւը բարկացաւ շան վերայ. «Նուտ ես ասում, անպիտան, դա Մարիամի ոսկրներն է չըխկ-չըխկում:» Այս խօսքերն ասած չ'ասած, բազի դրոները բացուեցան, ձիանքը ներս թափուեցան, իսկ Մարիամը, իւր հօր հետ սայլի վերայ նստած, անթիւ բարիք էր բերում: Պառաւը բարկութիւնից կատաղեցաւ, նորա շրթունքները սևացան և զարմացած ասաց. «Ա՛յ քեզ հրաշք: Վաղն էլ իմ աղջկա տանես անպատճառ. իմ Նազուն քո Մարիամի հատը չէ. նա երկու ջուր ձի կը բերի և երկու սայլ ոսկի:»

III.

Միւս օրը ծերը պառաւի աղջկանը տարաւ անտառի այրը և տուեց նորան բոլոր բաները, ինչոր իւր աղջկան էր տուել: Նազուն կրակը վառեց և ճաշ եփեց: Մեկը յատակի տակից դուրս նայեց և ասաց. «Միտուն աղջիկ, խնդրեմ, մի գդալ կերակուր տաս, ուտեմ:» Նազունը գոռաց նորա վերայ. «Կորի՛ր, կեղտոտ անպիտան, դեռ կերակուր էլ է ուզում» ասաց և ճիւղտով խփեց խեղճ մկան մէջքին: Մեկը փախաւ, մտաւ իւր բունը. իսկ Նազունը նստեց, միայնակ բոլոր կերակուրը կերաւ ու պառկեց քնելու:

Կէս գիշերին արջը ներս մտաւ այրը և ասաց աղջկան. «Ա՛յ աղջիկ, արի՛ աչքակապուկի խաղանք: Առ այս փոքրիկ զանգակը, վազի՛ր և զընդ-զընդացրու. ես կաշխատեմ քեզ բռնել:» Նազունը վերառաւ զանգակը և սկսեց վազել, բայց ուր պիտի փախէր արջի ձեռքից. նորա ծնկները ծալվում էին, ձեռքերը դողդողում էին և զանգակը ինքը իրան զընդ-զընդում էր: Իսկ մեկը յատակի տակից

ասում էր: «Զար Նազուհ, թող ոչնչանայ, արժանի է:»

Միւս առաւօտը պառաւր մարդուն ուղարկեց Նազուհի յետեւից. զնա՛, ասաց նա,՝ ձխանքը և ոսկին բեր:

Ծերը զնաց, իսկ պառաւր նստեց դրանը և սպասում էր, և ահա լսեց, որ անտառի ճանապարհից թրխկ-թրխկ-կողի ձայն է գալիս. իսկ շունը սկսեց դրան յետեւից հաջել. «Ահա գալիս է պառաւր աղջիկը, ակն է քաշում, հառաչում, իսկ դատարկ սայլը թրխկ-թրխկում է:» Պառաւր բարկացած խիեց շանը և ասաց. «Մո՛ւտ ես ասում, անպիտան, այդ արծաթի ձայնն է, որ արկղների մէջ ծընդ-ծընդում է:»

Արջապէս ծերունին մօտեցաւ, սայլը դրանը կանգնեց: Նազուհն այնպէս ջարդուել ու կոտորուել էր, որ հազիւ կարողացան սայլակից ցած բերել: Կատաղեց չար պառաւր, բայց ինչ կարող էր անել:—Միջանի ժամանակից յետոյ Մարիամը մի լաւ երիտասարդի հետ պսակուեցաւ:

ՓՈՂՈՑՈՒՄ ԵՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ:

Մեր փողոցը:

Այն փողոցը, ուր շինած է մեր տունը, շատ երկայն է: Նա անցնում է քաղաքի միջին մասնով և նորա վերայ շինած է մեր մայր եկեղեցին: Զանազան կողմերից նորա մէջ մտնում են շատ փոքրիկ փողոցներ: Մեր փողոցի երկու կողմում շինած են շատ հոյակապ տներ. տների առաջ ճանապարհը երկու կողմից սալապատակ է արած, իսկ մէջ սուղը քարած է: Մեր փողոցում շատ վաճառանոցներ էլ կան. նորանցից ամեն մինը ունի իւր վերնագիւղը, որ

յայտնում է, թէ վաճառանոցում ինչպիսի ապրանք են ծախում: Երեկ ես կարդացի հացափաճառի, դերձակի, կօշիկադրի և շատ վաճառականների վերնագրեր:

Այսպէս է եւ ձեր փողոցը:

Երկու տակառ:

Երկու տակառ միասին ճանապարհ բնկան. մէկը դատարկ էր, միւսը զինով լեբը: Առաջին տակառը հանդարտ գլորուելով առաջ էր դնում, իսկ միւսը խելի պէս գոռգոռալով թռչկոտում էր քարած ճանապարհով և սաստիկ էլ թող էր անում: Անց ու դարձ անողները վախից ճանապարհի մի կողմում կուչ էին դալիս, հեռուից նորա գոռգոռոցը լսելով: Բայց ինչքան էլ գոռգոռար սա, այնուամենայնիւ առաջին տակառի չափ օգտակար չէր:

Անհունար մօրդու լեզուն երկար կ'լինի:

Հացթուխ:

Եւ շատ եւ՛ միւրում հացատան դռնից անցնել. նորա պատուհաններում շարած են լինում կարմիր բոքոններ, համեղ բլթակներ և պաքսիմատներ: Բայց ես կարծում եմ, որ շատ կ'շոգի խեղճ հացթուխը ահագին հնոցի առաջ պտըտելով: Ես գիտեմ, որ հացը թխում են ցորենի ալեւրից: Ալեւրը ջրով շաղախում են, նորա մէջ թթու խմոր—խաշ են դրում ու հունցում, հունցած խմորը դնում են մի տաք տեղ, կամ ծածկում են շորերով: Երբոր խմորը տաշտի մէջ բարձրանում է, նշանակում է նա քացախել է—եկել է: Նկած խմորից կտրում են, զընտում և այդ գունտերից շինում են հացեր և բլթակներ, որոնց շարելով երկաթէ տախտակների վերայ, դնում են Մայր. լեզ. ք. տ. Ն. Տ.—Ղ.

տաք հնոցում, կրակը մի կողմ հաւաքելուց և լաւ մաքուր սրբելուց յետոյ:

Հացթուխը շատ գործ ունի. նա բացի ցերեկը բանելուց, գիշերն էլ է բանում, որ առաւօտը կարողանայ թափայ հաց հասցնել:

Պատմեցէք կարդով, թէ ինչից եւ ինչպէս են պատրաստուում հացը:

Մկրտիչի համար ինչպէս սերթուկ կարեցին:

Հայրը կամեցաւ Մկրտիչի համար մահուդէ սերթուկ կարել տալ: Գերձակը եկաւ և նորա չափսը վերառաւ: Տուն յետ դառնալով՝ դերձակը փռեց մահուդի կտորը և կաւիճով նորա վերայ գծագրեց սերթուկի մասերը.— մէջքը, կուրծքը, փեշերը, թեւերը, օձիքը, ծալքերը, խշտակները: Յետոյ նա վերառաւ մեծ մկրատը, կտրեց այդ բոլոր մասերը և տուեց իւր բանւորներին կարելու: Նորանք սկսեցին սերթուկի մի մասը միւսի հետ կարել, և կարերը հարթուելով հաւասարեցրին: Մինչեւ մի շաբաթ բոլորը կարած էր, կոճակները կպցրած, կոճկատեղերը բացարած, աստառած: Այդ ամենից յետոյ դերձակի աշակերտը մաքուր սրբեց նորան և տարաւ.— տուեց իւր վարպետին, իսկ վարպետը տարաւ Մկրտչին հազգրեց: Սերթուկը նորան շատ յամար եկաւ: Մկրտչի հայրը վճարեց վարպետին մահուդի, աստառի և կարելու վարձը և իւր որդուն էլ ասաց. «Իբարով մաշեա, որդի, միայն թէ զգուշութեամբ պահես, որովհետեւ դա մեզ վերայ արժան չէ նստում»:

Ասացէք, որոնք են սերթուկի մասերը: Ո՞վ է կարել նորան եւ ինչպէս:

Կօշկակար:

Կօշկակարը առաջ վեր է առնում ոտի չափսը: Այս չափսին համեմատ փայտեայ կտրասլաք է շինում: Սուր դանակով նա կտրում է կօշիկ երեսը և ճիւղքը, թրջում է նորանց ջրի մէջ և մեխում կաղապարի վերայ: Նրբոր կաշին չորանում է և կօշիկ ձև է ստանում, այն ժամանակ կօշկակարը մեխերը հանում է, կօշիկը պոկում է կաղապարից ու յետոյ տակը կպցնում է նորանից: Նա տակը կտրում է եղան հաստ կաշուից: Կօշկակարը ոչ թէ ասեղով է կարում, այլ բզով. առաջ բզով ծակում է, յետոյ այն ծակով անց է կացնում մոմած թելը, որի ծայրին, հեշտութեան համար, պնդացրած է խօզի մազ:

Տակը կպցնելուց յետոյ կօշկակարը կրունկն է կպցնում և շատ մեխեր վերտալով՝ պնդացնում է. յետոյ ճոքերին ականջներ է կպցնում, կօշիկը սեւացնում, կօշկաներկով սրբում, փայլեցնում և տանում այն մարդուն, ում համար որ կարել է:

Ասացէք, որոնք են կօշիկի մասերը. պատմեցէք, ինչից է կապած նա եւ ինչպէս:

Ճանապարհին:

Չմերային ճանապարհում,

Յրաի սաստիկ ժամերում,

Սուրհանդակի սայլի վերայ

Ճանապարհորդ էր վազում:

Չորս կողմումը ձիւնի շերտերն

Ամբողջ աշխարհ ծածկել էր:

Ոչինչ մի ձայն—միայն զանգակն
կամարի տակ կ'հնչէր:

Մի տուն, խրճիթ, լոյսի նշոյլ

Ոչ մի տեղ չէր երևում,

Զիւնի խշշոցն ական տակից,

Բքի շվիցն էր լսում:

Շտապողին չի յաջողուի:

Մի պարոն սայլակում նստած արշաւում էր ամե-
նայն արագութեամբ: Նա պատահեցաւ մի գիւղացու և
հարցրեց, թէ արդեօք հեռու է քաղաքը: Գիւղացին նայեց
անխնային և ասաց. «Ինչքան որ կամաց դնաս, պարոն,
դարձեալ երեկոյեան կ'հասնես»: Պարոնը բարկացաւ զիւ-
ղացու յիմար պատասխանի վերայ ու հրամայեց սայլապա-
նին խռկել ձիանները: Բայց դեռ երեք վերստ չ'դնացած,
մին էլ տեսնես առաջին անիւր փշուռեցաւ և սունակը
սաստիկ ընթացքից գետինը ճեղքեց ու երկու կտոր եղաւ:
Բարեբաղտաբար ճանապարհի մօտ մի դարբնոց կար: Մի
կերպով սայլակը քաշ տուին մինչև այնտեղ և ամբողջ
օրը նորան նորոգեցին: Մեր պարոնը միւս օրը երեկոյեան
հազիւ հասաւ քաղաքը:

Երկաթը տաք տաք կ'ծեծեն:

Մեր քաղաքում շատ դարբնոց կայ: Դարբնոցի մէջ
կայ մէկ մեծ հնոց, Հնոցում շատ վառած ածուխներ կան,
իսկ մէկ կողմից սարքած է մի մեծ փուքը, փուքսի յի-
տեւր մի մարդ կանգնած շարունակ փչում է, որ հնոցի բոցը
սաստիկանայ:

Դարբինը երկաթի կտորը վեր է առնում ու դնում
հնոցի մէջ: Երկաթը տաքանում է, կարմրում յետոյ սպի-
տակում ու փափկանում: Դարբինը մեծ մաշով հանում
է կարմրած երկաթը հնոցից, դնում է սալի վերայ և ծանր
մուրձով սկսում է ծեծել, և շինում է նորանից ինչոր
կամենաս՝ պայտեր, մեխեր, կացիններ, երկաթէ սունակ . . .
Դարբինը առաջից կաշուէ գոգնոց է կապում, որ տաքա-
ցած երկաթի կայծերը իրան չ'կարողանան այրել:


Դարբնոցը շինում են քաղաքների մօտ և կտուրը
ծածկում են հողով, որ կայծերից չ'վառուի:

Ոչինչ չէ կորչում:

Ճշմարիտ է, որ ոչինչ չէ կորչում: Բայց ահա ձին
սաստիկեցաւ, նորան դուրս ձգեցին, դաշտումը փոսի մէջ
ծանկեցին և վերջացաւ: Ո՛չ, դորանով բոլորը չ'վերջացաւ.
հողի մէջ ձիու լէշը կ'փախի, նորա մի մասը կ'ցամաքի, մի
մասը հող կ'դառնայ, հողից խոտ կ'բուսնի, իսկ այդ խո-
տով կ'կերակրուի ուրիշ ձի: Քարը փշուռեցաւ, աւաղ
դարձաւ. իսկ այդ աւաղից գոյացաւ ահա այն բլրակը
որի վերայ աճում են այնքան եղենիներ: Խրամը ցամա-
քեցաւ, ջուրը բարձրացաւ օդի մէջ և, մին էլ տեսնես,
ուրեից է նորից ցած թափուեցաւ ամպերից և հոսում է
դէպի գետը: Այսպէս է լինում բնութեան մէջ, և մարդն
էլ հողում է, որ ոչինչ բան ունայն չ'կորչի: Որքան աղը և
աղտոտութիւն են դուրս ածում խրճիթներից և տներից
բազմամարդ քաղաքներում և զիւղերում: Եթէ աղը և
միւս անմաքրութիւնները մնային բազում, օդը կ'ապա-
կանէին, և ամենքն էլ զիտեն, որ խոլերան աւելի այնտեղ
է մարդկանց ջնջում, ուր նորանք կեղտոտ են ապրում:

Բայց խելացի մարդը մնասակարն էլ կարողանում է օգտա-
կարի դարձնել. կեղտոտ ջրով լե փոսերը և առհասարակ
այնտեղերը, ուր ժողովվում են ամեն տեսակ փտած բա-
ներ, լցնում են Վրով և ծեծած ածուխով. այդպիսով
նոքա չեն ապականում օդը և տաղիս են բարեփոխած հող
վարերու համար: Նթէ դուք մեծ քաղաքներում էք բնակ-
վում, կ'տեսնէք՝ որ դեռ առաւօտեան շատ վաղ աղ-
քատ մարդիկ ման են գալիս փողոցներում և ժողովում են
ամենահասարակ և անպէտք համարուած բաներ՝ ոսկրի,
երկաթի և կաշուի կտորներ, անպէտք փայտաներ . . . Այդ
ամենը գործարաններում պէտք են գալիս: Ոսկրների և
կաշուի կտորներից սոսնձ են շինում. ոսկրից նոյնպէս
արտադրում են մի ռալիսակ այրուող նիւթ, որը փոսիոր
է կոչվում: Փոսիորը ծծումբի հետ դուք տեսնում էք
լուցկիի ծայրին: Փոսիորիցն է, որ լուցկին այրվում է. բայց
փոսիորը միայն շուտով կայրուէր՝ դեռ չվառած այն
փայտը, որից շինած է լուցկին, իսկ որ այդ բանը չ'պա-
տահի, ծծումբ էլ են աւելացնում: Առաջ վառվում է
փոսիորը, որից վառվում է ծծումբը, իսկ ծծումբից—փայ-
տը: Փոսիորը մեղրամոմի նման է, իսկ ծծումբը դեղին է:
Լուցկիի ծայրը լինում է՝ կարմիր, դեղին, կանաչ և ա-
մեն գոյնով—դա կախուած է այն նիւթից, որը աւելաց-
նում են նորա վերայ: Այդպէս, իմացիր, որ այն ոսկրի
կտորը, որը դու կրծել ես, գուցէ այն լուցկիի վերայ է, որ
դու այսօր ձեռքիդ ունիս բռնած: Նթէ միջնումը նորա
ծայրը տրորես մասնների մէջ, դու նոցա վերայ լոյս կ'նշ-
մարես. սա այն փոսիորն է փայլում, որ հանել են ոսկրից:
Միայն զգուշ կաց, որ մասնների չայրես, որովհետեւ նա
թիւնաւոր է, և այրուելուց կարող է շատ վտանգա-
ւոր վերք առաջանալ: Փայտի մոխրից, որ քնում է վա-

ռարանում, արտադրում են կալաքար, որը խառնելով ճար-
պի հետ, շինում են սապոն, իսկ խառնելով աւաղի հետ,
շինում են ապակի: Ամենայն տեսակ ժանդոտ մեխեր և եր-
կաթի կտորներ, կարելի է նորից հաղել և նորանից գոր-
ծարաններում շինել լաւ լաւ կայիններ, դանակներ և այլն:
Բրդի կտորտանքն էլ կարող են պիտանի լինել բրդէ գոր-
ծաններում. նորանց նորից թրջոց են դնում, լուանում են
և նորանից բուրդ են ստանում, որից և՛ շորեր են շի-
նում: Քաթանի հին կտորտանքից թուղթ են շինում,
որի վերայ դու գրում ես: Կարող էիր մոռածել, որ քո շա-
պիկը կարող է դրելու թուղթ դառնալ: Ուր որ մարդիկ
լուսաւորուած ու քաղաքակրթուած են, պէտք են գալիս
այն ամենայն բաները, որոնք ուրիշ տեղ դէն են ածվում:



Ինչպէս է մարդ մանգալիս երկրի վերայ:

Մարդս թէ և շատ կամաց չէ մանգալիս, բայց նա
իւր երկու ոտների յուսով շատ հեռու չէր կարող գնալ:
Բայց զուր տեղը չէ Աստուած մարդուն խելք տուել:
Մարդը տեսաւ, որ ձին իւր չորս ոտով իրանից արագ է

ընթանում, տեսաւ և կարողացաւ նորա մէջքին նստել.
Թամբ հնարեց, բերանը սանձ գցեց և իւր կամքին սկսեց
նորան վարել: Այս բաւական չէ, յետոյ մտածեց անիւա-
ւոր կառքեր և ձողաւոր սահնակներ շինել. այնուհետև
նա հեշտութեամբ անցնում է օրական հարիւր վերստ և
ինքն ամենեւին չէ յողնում: Նա ձիով հերկում է հողը
և բեռներ է կրում:




Բայց միայն ձիու վերայ չ'իշխեց մարդս: Նա իրան հնա-
զանդեցրեց հաստապարանոց եզանը, ուժեղ գոմշին, եր-
կարատու և ճարպասապատ ուղղին և թեթեւագնաց եղնի-
կին: Այս բաւական չէ. նա հեծաւ ահադին փղե մէջքը
և իբրև մի ծանձ, նորա վերայ նստելով՝ սկսեց լմուրձով
ծեծել նորա գլուխը ու քշել, ուր որ կամենում է:

Մարդը նկատեց, որ ուղիղ ճանապարհով անիւ-
ները աւելի հեշտութեամբ են զլորվում, սկսեց շինել
մեծամեծ սայլի ճանապարհներ և խճայատակներ ձգեց:

Խճայատակ և Ուղի:

Ճանապարհ, դու մեծ ճանապարհ,
Մեր այս աշխարհից փոքր տեղ չառար.
Հեռու ձգվում ես, ուղիղ ինչպէս լար,
Լայնութեամբ փռվում ինչպէս մի նկար:

Դու մանրած քարից՝ ոտքի թշնամի,
Չափով ես չափած, դին ես քրտնքի:
Քո ամեն քայլում մշակ է բանել,
Սարեր է կտրել, կամուրջներ ձգել:
Բայց և քո մօտից, սակաւ մի հեռի,
Ձգվում է նոյնպէս մի փոքրիկ ուղի:
— Ուղի, դու ուղի, այդ ո՞ւր ես գնում,
Մի անուն ունի՞ս, թէ ես անկոչում:
Գնում ես, պտտում, չափ չ'ես հարցնում,
Ձորեր ու փոսեր, գետ, սար ես անցնում:
Քեզ չ'են ուղղացրել բահով ու թիով,
Զ'են պնդացրել մանրած քարերով.
Դու ոտքի համար, իրաւ, փափուկ ես,
Բայց քամի օրը թողով առատ ես:



Ինչպէս են ճանապարհորդում առանց
ձիերի:

Մարդը կամաց համարեց ձիով և սայլակով ճա-
նապարհ գնալը թէ հասարակ ճանապարհներով և թէ
խճայատակներով. նա սկսեց մտածել, ուրիշ ճար գտնել—
և հնարեց երկաթուղին: Սարերը քանդեց, դաշտերը հաւա-
սարեց, կամուրջներ ձգեց և սլաքի նման ուղիղ ճանա-


ապարհ շինեց, այնպէս որ կարծես մի կտոր կտաւ էր փռած։ Այս կտաւի վերայ նա ձգում է չուղունէ շաւիղներ—բէլաներ, իսկ ռէսիւ վերայ սարքում է երկաթէ մեքենայ որի մէջ կայ հնոց, կաթսայ և ծխահան, ինչպէս հեշտաեռը։ Հնոցի մէջ նա փայտ կամ ածուխէ ածում, նորանով ջուրը եռէ դալիս և շողիների զօրութեամբ մեքենան գլորվում է առանց ձիու, բայց այնպէս շուտ շուտ, որ մարդ ոչ մի ձիով չէ կարող նորա յետեից հասնել։ մի ժամում նա անցնում է 50 վերստ, մի օրում 1000 վերստ։ Շոգեմեքենան գլորվում է երկաթուղու վերայով, ճչում է, ծրվում, երբէք չէ յոգնում, միայն իջևաններում փայտ և ջուր է վերառնում։ Նա իւր յետեից քաշ է տալիս շատ շոգեկառքեր։ դորանցից մէկի մէջ նստած են հարիւրաւոր մարդիկ և լուսամուտներից նայում են, իսկ միւսներում այնքան ապրանք է դարսած, որ մարդ զարմանում է։

Երկաթուղի։

Սա փռած կտաւ է և ոչ ճանապարհ։
Ձին էլ մի ձի չէ, հարիւր ոտն ունէ,
Որ այնպէս վազում, այդքան ծանրութիւն
Մենակ է տանում։

Ու թէ ձգում է, այլ ճիշտ թռչում է.
Ոչ կանգ է առնում և ոչ յոգնում է.
Միայն ճչալով, բարձր շվալով,
Մի ժամում յիսուն նա միշտ անցնում է։

Երկրի վերայ ինչպէս են ճանապարհորդութիւն անում առանց ձիու։



Ինչպէս է մարդ ճանապարհորդում ջրի վերայ։

Լողալում մարդը շատ էլ հմուտ չէ. ինչքան որ սովորի, խեցգետինի պէս չէ կարող լողալ, ուր մնաց ձկան պէս։ Պա լաւ բան չէ, մտածեց մարդը. փայտից նաւակ շինեց, թիակը վերառաւ և ջուրը մտաւ ու սկսեց առաջ գնալ։

Շուտով սա էլ զղուեցրեց մարդուն. Պի՞նչ բան է, թիավարում ես, թիավարում, բայց էլի շատ հեռու չես գնում։ Ի՞նչ պէտք էր արած։ Մարդը սկսեց մտածել. նա տեսաւ, որ ծովի երեսին համարեա շարունակ քամի է փչում, բայց զուր է կորչում։ Պի՞նչի զուր կորչի, ճանապարհներում սաստիկ թոյլ անի, ծովի վերայ ալիքներ բարձրացնի, երկնքից էլ ամպեր հալածի. արի ստիպեմ, որ ինձ ծառայի։ Եւ մարդը վերառաւ կտաւը, ձիգ կրպորեց ձողերի վերայ, մեկնեց—առաջատու շինեց, և քամին

ուռցնելով նորան՝ առաջ քշեց թէ փոքրիկ և թէ մեծա-
մեծ նաւեր: Մարդը քամուն էլ լծեց. բայց ոչ մորակ
կար, որ նորան քշէր. ոչ սանձ կար ձեռքում, որ կանգ-
նեցնէր. ոչ կապեր ունէր, որ կառավարէր:

Ն աւ:

Քամին ծովի երեսին
Ծիծաղադէմ ճիւղում էր
Եւ մղում էր դէպ՝ առաջ
Թէ փոքր և թէ մեծ նաւեր:
Իսկ նաւերը ճոճալով
Ալեքներում են խաղում
Եւ ուռցրած թւերով
Դէպի առաջ են վազում:




Ջրի երեսին անիւներով:

Լաւ կ'լինէր առաքաստաւոր նաւով դնալ, եթէ
քամին մեղ լսէր. բայց բանն այն է, որ դու կամենում ես
դէպի հարաւ գնալ, իսկ նա քեզ դէպի հիւսիս է տա-
նում. դու կամենում ես այսօր դնալ, իսկ նա ասում է՝
սպասիր վաղը, այսօր ես կամենում եմ քնել. դու կամե-
նում ես ծանր դնալ, իսկ նա քո նաւը՝ ինչպէս մի տա-
շեղ, այս կողմն, այն կողմն է գցում, տակն ու վերայ է
անում:

«Ո՛ւ, այս լաւ բան չէ՞, ասաց մարդը. շողին
թէ և քամուց աւելի ծանր է քշում, բայց հնազանդ է
լինում:» Եւ մարդը նաւերի տակն անիւներ դրեց, շողին
էլ նորանց շարժեց և նաւերը սկսեցին ջրի վերայ դնալ.
այնպէս, ինչպէս ցամաքի վերայ: Եւ այսպէս, մարդը նաւի
մէջ հնոց է սարքում, նորան վառում է, ջուրը կաթսայի
մէջ եռացնում, ծուխը խողովակներով երկինք ուղար-
կում, իսկ շողիով անիւները շարժվում և առաջ են դը-
նում, ուր որ ինքն է ուզում:

Ի՛նչ օգուտ են տալիս շողնաւերը:

Մարդիկ ինչպէս են թռչում օդի մէջ:



Մարդու համար հեշտացաւ ճանաչ-
պարհորդել թէ ծովի և թէ ցամաքի
վերայ. յետոյ նա սկսեց նախանձել եր-
կնքի թռչուններին. Բայց Աստուած մար-
դուն թռչել չէ տուել—ուրիշից փոխառ-
նել էլ չէ կարելի. ի՞նչ անէ: Շատ ցան-
կանում է օդի մէջ թռչել, աշխարհքին
բարձրից նայել. էլ հարկաւոր չէ սարեր
կորստել, ճանապարհ չինել—չորս կողմից

լայն ճանապարհ է: Մարդը սկսում է սովորել և մտածել:
Մտածում է, մտածում, և վերջապէս մի բան է հնարում—
օդապարիկ. փուչիկի նման մի մեծ դատարկ գունդ է շը-
նում, նորա տակից մի նաւակ կապում, նորանում նը-
տում ու վեր բարձրանում: Նորա ոտի տակն են մնում
ահադին անտառներ, սարեր ու ձորեր, սրաթեւ արծիւներ,
անձրեւոտ ամպեր: Բայց ափսոս, որ մի բան շտա է խան-

Մայր. լեզ. ր. տ. Ն. Տ.—Ղ.

գարում նորան. անսանձ քամին այստեղ էլ իւր չարութիւնը յայտնում է. նա օդի մէջ աւելի է նեղացնում մարդուն, քան թէ ծովումը. քշում, տանում է նորան, ուր որ կամենում է, կարծես մարդուն բանի տեղ չէ դրնում, և մինչև այսօր մարդը դեռ ևս չէ կարողանում օդի մէջ կառավարուել քամու հետ:

Շէն և գիւղ:

Թէ շէնում և թէ գիւղում շատ գիւղական տներ են լինում: Շէնում տները շատ են լինում և ունին իրանց համար. մէկ կամ մէկ քանի եկեղեցի: Գիւղերում տները քիչ են լինում և ունենում են միայն մի հատ հասարակ եկեղեցի: Թէ շէնում և թէ գիւղում փողոցներ քիչ են լինում և եղածն էլ նեղ ու ծուռումուռ: Հայ գիւղերի տները փոքր են. առհասարակ գիւղացին իւր խրճիթի մի մասը գետնի տակն է շէնում և շատ անգամ պատերն էլ հասարակ ցեխից դնում: Քարէ տներ քիչ է պատահում գիւղերում: Գիւղացին իւր խրճիթի կտուրը ծածկում է հողով: Գիւղերում կան կալապաններ, կալեր, առաստառների սրահներ, պարտեզներ և այնդիւրի: Այգիները սովորաբար ցանկապատ են լինում: Գիւղի փողոցներում քեզ կ'պատահէ գիւղացին սայլի գլխին նստած, մի ճիւղոտ կամ մի երկար մորակ ձեռին իւր եզն ու գոմէջը քշելիս, շատ անգամ նա քեզ կ'պատահի դերանդին ուսին, չինը կամ մանգաղը դօտկամիջին, կամ հունձ գնալիս, կամ հնձից գալիս, հողը հերկելիս կամ ցաք անելիս, իսկ ձմեռները նոյնպէս սայլերով բեռը կրելիս: Գիւղի և շէնի բնակիչները գլխաւորապէս պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Բայց կան այնպիսի շէ-

ներ, որոնք աւելի քաղաքաւորութեամբ են և ունին շատ գործարաններ. այդպիսի շէները կոչվում են գիւղաքաղաքներ: Գիւղաքաղաքների տները աւելի գեղեցիկ են. այնտեղ բացի ցեխապատ տներից շատ քարաշէններ էլ կարելի է տեսնել:

Քաղաք:

Ամեն մէկ նահանգում կան շատ գիւղեր և շէներ, բայց նահանգական քաղաքը մէկ է: Քաղաքի տները քարէ են կամ փայտէ, որոնք ծածկուած են հողով, տախտակով կամ երկաթով: Այնտեղ չ'կան ոչ կալեր, ոչ կալապաններ, բայց շատ կրպակներ կան. տների առաջ ոչ թէ ցանկ է քաշած, այլ պատնէշներ, կամ վանդակապատ է արած: Մեծամեծ քաղաքների փողոցները քարած են և նորա երկու կողմից սարայատակ են արած: Քաղաքներում լինում են հրապարակներ և մեծ ու փոքր փողոցներ: Գողոցներում քեզ կ'պատահեն զանազան տեսակ կառքեր, որոնցով մարդիկ ման են գալիս: Քաղաքում մի քանի եկեղեցի է լինում. նորանցից մինը կոչվում է Մայր եկեղեցի: Քաղաքի բնակիչները պարապում են արհեստներով, վաճառականութեամբ և ծառայութեամբ: Կան այնպիսի քաղաքներ, որոնց շրջակայքում գտնվում են շատ գործարաններ:

Չանազան տեսակ քաղաքներ կան գուառական, նահանգական և արքայանիստ: Արքայանիստ քաղաքները կոչվում են մայրաքաղաքներ: Ռուսաստանը երկու մայրաքաղաք ունի՝ Պետերբուրգը և Մոսկուան: Թագաւորը բնակվում է Պետերբուրգում:

Պարմանալի մշակ:

Ճռնչում է բազմալսատակ մեքենան,
Շատ լիսեռներ և անիւներ հաղար կան,
Որ չքիւլ-չքիւլում են ու ճչում:
Բայց մարդիկ չեն նորանց շարժում:

Շողին գերբնական հրամանով
Շարժում է բոլորն շտապով:

Նա կալում է, նա դործում,
Բուրդ, բամբակ, վուշ է մանում:

Շողին փող էլ է կտրում,
Անտառներ է սղոցում

Նւ ապակիքն է տաշում:

Նա կաթնից իւղ է հանում:

Կարծր պողպատն է յղկում:

Մարդը և Հրէշը:

Ա.

Շատ տարի առաջ՝ հին ժամանակը,
Երբ հրաշքներով լին էր աշխարհքը,
Իւր ամուսինով և զաւակներով
Ապրում էր մի մարդ իւր առուտուրով:
Բերախ ու զուարթ էր նորա կեանքը,
Պատճառ, միշտ ոսկով լին էր քսակը:
Բայց յանկարծ բաղաւր երեսը դարձրեց,
Նւ մեր խեղճ մարդը բոլորն էլ կորցրեց:
Ուրախ կեանք ու փառք և հարստութիւն,
Նւ նոցա հետ էլ քաղցր առողջութիւն:

Ընկաւ անկողին, խիստ հիւանդացաւ,
Ոյժ և զօրութիւն նրանից հեռացաւ:
Չէր կարողանում ոտի վրայ կանգնել,
Մինչև որ իւր կինը նորան չ'օգնէր:
Տժբախտ — տարաբախտ նորա խեղճ կինը
Ստիպուեց կերակրել հիմա իւր տունը:
Գիշեր ու ցերեկ պէտք է աշխատէր,
Որ իւր որդոցը սովեց ազատէր:
Ամիս ամիս վոյց այսպէս անցկացաւ,
Վերջապէս կինը իսպառ ձանձրացաւ:
Պի՞նչ ես վեր ընկել,՝ ասում էր մարդուն:
Պիլիսի ցաւ դառել, լպել ես իմ քուն:
Մինչև երբ պէտք է այսպէս չարչարում,
Կեանքս մաշելով ես քեզ կիրակրեմ:
Վեր կանց, մարդ ես, դնա՛, դու խո քարին տունը,
Նւ որդոցդ համար ճարէ կերակուր:
Պատասխան տուեց խեղճ հիւանդ մարդը:

— Բաւական է ինձ իմ դառը վիշտը,
Քանի ունէի, երբ բան խնայեցի,
Առողջ ժամանակ երբ ծոյլ մնացի:
Խսկ այժմ աղքատ եմ և մարմնով տկար,
Խղճա՛, մի՛ տանջիր դու ինձ անդադար:

Բայց կինը երկար էլ չըհամբերեց
Նւ հիւանդ մարդուն տանից դուրս արեց:
Պինա՛, ուր կուգես, գլխիցս հեռացի՛ր,
Դու իմ խեղճ անձը լաւ չարչարեցի՛ր:
Ինչքան և կուգէ լաւ ու աղաւես,
Էլ տուն չեմ թողնիլ, քանի աղքատ ես:
— Պի՛նչ, ասաց մարդը ձայնով տխրագին:
Կերթամ, կըկորչեմ, ո՛վ դու անգուլթ կին:

Կտոր հաց, գոնե՛ս, տո՛ւր, հետո առնեմ,
Որ ճանապարհին քաղցած չ'մեռնեմ:՝

Այնքն դուրս բերեց, տուեց երկու հաց,
Եւ մեր խեղճ մարդը հեռացաւ, զընաց.
Խւր չար բաղտիցը դանդա՞տ անելով,
Թողեց քաղաքը անհաստատ քայլով:
Ինքն էլ չ'զիտէր, թէ ուր էր գնում,
Միայն միշտ առաջ քայլումէր տրտում.
Վերջը դադրելով՝ մի քարի վերայ
Նստեց՝ որ սակաւ մի հանդստանայ:

Բ.

Այնտեղ նկատեց, որ ճանապարհին,
Նրանից ոչ հեռու, ընկած էր զետնին
Մի մաղեց հիւսած երկար սև պարան,
Որ նա վերառաւ, տեսելով այս բան.
«Սա ինքն ըստ ինքեան մի չնչին բան է,
Բայց խեղճիս համար շատ թանկադին է:՝
Յյապէս ասելով պարանն փաթաթեց
Եւ իբրև թանգ բան ծոցումը պահեց:
Յետոյ սակաւ ինչ հացով ու ջրով
Խւր տկար մարմնին զօրութիւն տալով,
Նորից վերկացաւ և կամաց քայլով
Սկսեց առաջ գնալ իւր ճանապարհով:՝

Այդպէսով անցաւ նա բաւական տեղ,
Մինչև որ հասաւ մի աղքատիկ գեղ,
Ուր անց կենալով տեսաւ շատ հաւեր:
Նոցանից մինը հանդարտ նստած էր
Նիստած աղբի վրայ և ձու էր գնում:

Եւ մեր խեղճ մարդը զրեց իւր մոքում
Որ բռնէ նորան ու հետը տանէ,
Մի քանի շահով քաղաքում ծախէ:
Ահա այդ մոքով նա կամաց կամաց
Զու գնող հաւին զգոյշ մօտ դնաց.
Բայց հենց նորա կողմն իւր ձեռք մեկնեց,
Յանկարծ թռաւ հաւը և մէկ ձու թողեց:
Խախտն վերառաւ թողած ձուն մարդը,
Դրեց դրպանը, օրհնեց իւր բախար.
— Եւ փառք Աստուծոյ, ասաց ինքն իրան.
Այս մէկ հաւի ձուն, սա էլ է մէկ բան:

Ելի առաջ դնաց մի կարճ ժամանակ,
Վերջապէս տեսաւ մի փոքրիկ զետակ,
Որ դուրս էր բղխում մօտիկ անտառից,
Մերթ հանդարտ դնացքով, մերթ փրփրալեց:
Յոգնած, վատտակած, մեր մեղաւորը
Շատ ուրախացաւ, երբ տեսաւ ջուրը.
Խախտն մօտ դնաց, որ պարզ ցուրտ ջրով
Փոքր ինչ հովանայ, մէջ՝ լողանալով:
Ջրի աւաղոտ ավերի վերայ
Նստոտած էին մի քանի կրիայ.
Մօտեցող մարդուն երբ նոքա տեսան,
Շտապով վազեցին, ջուրը Թափուեցան:
Միւսների պէս շուտ հասանել ջրին
Ը'յաջողուեցաւ նոցանից մէկին:
Մարդը մօտ դնաց, վերառաւ նորան,
Խւր դրպանի մէջ տուեց բնակարան.
Եւ երբ լողացաւ, հազաւ շորերը,
Եւ յետոյ դնաց դէպի անտառը:

Որ շատ հեռու չէր և մի ժամի մէջ
Արդէն զնում էր խիտ անտառի մէջ:

Գ.

Շատ զնաց, թէ քիչ, վերջապէս նստեց
Մի աղբիւրի մօտ և շատ մտածեց,
Թէ ինչպէս անէ, որ իւր խղճալի
Անբախտ դրութիւնն ուղղէ մի կերպի:
Յանկարծ դըրդաց բոլոր անտառը,
Թնդաց, որոտաց հովիտ ու լեռուր,
Եւ հանդէպ լեռան սև ու մութ այրից
Դուրս եկաւ մի հրէշ, որ հին դարերից
Բնակվում էր այնտեղ և սպանում, լավում,
Ով այրի մօտով անցնել չէր վախում . . .
Ահա այս Հրէշը դուրս եկաւ այրից
Եւ խեղճ մարդու վրայ գոռաց հեռուից.
Պարով. քեզ, բարով, դու համեղ կտոր,
Որին կ'ընդունէ իմ պատուական փոր.
Արդէն կ'լինի մի ամբողջ ամիս,
Որ էլ չեմ կերել մարդու անոյշ միս:
— Այդ ի՞նչ խօսքեր են, դարձելի գազան,
Դու յանդգնում ես ասել ինձ այդ բան.
Ապա այդ տեղ կաց և դու կ'տեսնես,
Ո՛ւր կը շարտեմ մարմնիդ երկու կէս:
Ասաց և անվախ մօտ գնաց Հրէշին
Եւ խիտ բարկացած նայեց երեսին:
«Ոչ ոք մինչև այժմ—գօչեց գազանը—
Չէ համարձակուել ասել այդ բանը
Ինձ, որի ձեռից դեռ մինչև այսօր

Ազտտ չէ մնացել ոչ մէկ մեղաւոր:
Բայց որովհետեւ մեծմեծ բրդում ես,
Արի մեր ոյժը փորձենք դու և ես.
Ե՛կ դօտեմարտենք, և ով որ յաղթուի
Թող նա յաղթողին կերակուր լինի:
— Թէպէտ այդ բանում ես քեզ կը յաղթեմ,
Եւ մինչև վիզդ գետնում կը խրեմ,
Բայց քեզ կարող եմ ևս աւելի
Հասարակ կերպով յաղթել, դարձելի:
«Լաւ, համաձայն եմ, ցոյց տուր ինձ շնորհքդ
Եւ իսկոյն և եթ կատարէ խօսքդ:
— Ի՞նչես շատ շտապում, ասաց նրան մարդը.
Երեք բան կանեմ, թէ կանես հատը,
Այն ժամանակ ես քեզից յաղթուած եմ,
Իսկ եթէ չանես, զլուխդ կը ջարդեմ.
Մէկ մաղ ես հանեմ, մէկը դու հանէ,
Չափենք ու տեսնենք ում մազն երկայն է.
Եւ ով աւելի երկայն մաղ ունի
Թող նա մեր մէջը յաղթողը լինի:
Թէ որ կարող ես ինձպէս չոր քարից
Գոյն գոյն ջուր քամել, դու յաղթել ես ինձ:
Եւ ում մարմնու վրայ մեծ միջատ գտնուի,
Թող նա զլուխը միւսի ջախջախի:
«Լաւ,» ասաց Հրէշն ու մի մաղ հանեց
Եւ ուրախ ուրախ մարդուն դէմ արեց:
Ա՛յդ է-ասաց սա-և հանեց ծոցից
Գտած պարանը հիւսած սև մազեց:
Հրէշը երբ տեսաւ երկայն պարանը,
Ահից, զարմանքից բաց մնաց բերանը,
Բայց իսկոյն և եթ նորից սիրտ առաւ

Ու խիստ կատաղած մէկ քար վերառաւ
 Եւ երկու ձեռով այնպէս պինդ սեղմեց,
 Որ աւաղի պէս նորան փշրտեց:
 Մարդն էլ իւր կողմից մէկ քար բարձրացրեց
 Եւ Հրէշն ծածուկ գրպանից հանեց
 Հաւից խլած ձուն, և հենց որ սեղմեց
 Իսկոյն երկու զոյն հիւթը զուրս ծորեց:
 «Այս երկու փորձով կանչեց Հրէշը—
 Դու ինձ յաղթեցիր, ցոյց տուր ուրիշը»:
 Մարդը զուրս հանեց գրպանից կրիան
 — Ահա միջատս, ասաց, դարձ գաղան:
 Յոյց տուր ինձ իսկոյն սրա հատը տեսնեմ,
 Թէ չէ յիմար զլուխդ երկու կէս կանեմ:
 Ո՞ր ես փախչում, է՛յ, չէ, կանց, սիրելի,
 Կանց, որ ընդունես մահ տարաւիելի:
 Բայց լաւ իմացիր, ուր կ'ուզէ գնաս,
 Երբէք ինձանից չես մնայ ամենաստ:
 Իրաւ որ Հրէշը, աստուիկ զարմացած
 Մարդու արարքից, իսկոյն փախաւ գնաց:
 Սա էլ այդ կ'ուզէր: Ուրախ մտաւ այրը,
 Անցաւ մէկ ծայրից մինչև միւս ծայրը,
 Տեսաւ լին արկղեր ոսկով, արծաթով,
 Գոյն գոյն ափսեքով և մարգարիտով:
 Ախոռներն մէջ սիրուն ձիաններ
 Պատրաստ էին նրա տանել հարուստ բեռ:
 Նա էլ ժամանակն զուր չընթրցրեց,
 Գոտած գանձերը ձիերին բարձեց,
 Գուրս եկաւ այրից, փառք տուեց Աստուծոյն
 Եւ պատրաստվում էր դառնալ գէպի տուն,

Որ յանկարծ տեսաւ հեռուից Հրէշն,
 Վազելով դէպ այր, մի աղուէս ուսին:

Դ.

Բայց թող դեռ պատմեմ, թէ ինչպէս եղաւ
 Որ Հրէշը յանկարծ կրկին յետ դառաւ:
 Մարդուց փախչելով, կարճ միջոցի մէջ,
 Հասաւ հեւարով մինչ անտառի վերջ,
 Ուր մի կաղ աղուէս սրտահեց նորան
 Եւ զլուխ տալով ասաց նա այս բան.
 Պահրով քեզ, բարով, իշխան ահաւոր,
 Դու մեր անտառի հզօր թագաւոր:
 Բայց ի՞նչի, ասա, այդպէս տրտում ես,
 Խնդրում եմ վշտդ ծառայիդ յայտնես:
 Գուցէ կարող եմ մէկ բանով պէտք դալ
 Եւ քո տրտմութեան շուտով վախճան տալ:
 Հրէշը կարճ կերպով, մի քանի խօսքով
 Պատմեց աղուէսին, թէ ինչ փորձանքով
 Ստիպուած է փախչել, թողնել տուն ու տեղ,
 Յաղթուած մի մարդուց իրանից զօրեղ:
 ՊԱՅԴ ինչեմ լսում, գանչեց աղուէսը,
 Թոյլ, անզօր մարդուց ո՞նց պիտ' քեզպէսը
 Փախչի, վախենայ, թողնէ տունը, գնայ.
 Ասա, ի՞նչ կասէ, ով այդ իմանայ:
 Հաւատա՞ ինձ, Տէր, նա քեզ խաբել է.
 Իւր հնարքներով աչքդ կապել է
 Ե՛կ, դու ինձ լսիր, իսկոյն յետ դարձիր,
 Զեռք ընկած որսը զուր մի՛ կորցնիր:
 Քանի դեռ ուշ չէ, շուտ արա՛, գնանք,

Քիտեմ՝ պատուական ընթրիք կունենանք.
Շատ ցանկանում եմ մարդու միս ուտել,
Պատճառ, այս ոտս մարդիկ են կոտրել։

Աղուէսի խօսքերն Հրէշը լսելով
Խեղճն յետ դարձաւ. և արագ քայլով
Վաղեց դէպի այր։ Բայց ճանապարհին
Աղուէսն յետ մնաց և խնդրեց Հրէշին
Որ յետ չ'թողնէ իւր կաղ ծառային.
Շատ ծանր բեռ չէ, շալախ ուսին:
Այդպէս շալախած — խնչպէս փոքր առաջ
Արդէն ասացի — Հրէշը քաջ քաջ
Եւ արագաքայլ դէպ այրն էր վաղում,
Ուր մարդը կանգնած նորան էր սպասում:
Նա մէկ րոպէում իւր կորուկ խելքով
Արդէն որոշեց, թէ ինչ հնարքով
Այս երկրորդ անգամ ապատուի Հրէշեց,
Եւ այս պատճառով զօնեց հեռուից.
— «Ա՛յ դու խաբերայ, անպիտան աղուէս,
Այս օր ինձանից մահդ կը կրես.
Հաւանոցումս քեզ որ բռնեցի,
Այն պայմանով միայն կեանքդ խնայեցի,
Որ դու ինձ համար երկու Հրէշ բերես.
Դու էլ խոստացար: Այժմ սեւ երես,
Այբան սպասեցի, միայն մէկն ես բերում.
Դա առանց քեզ էլ ինձ էր պատկանում:»

Հրէշը երբ լսեց մարդու խօսքերը,
Բի՛ղ բի՛ղ կանգնեցան նորա մաղերը.
«Խորամանկ աղուէս, որոտաց, մեռի՛ր.
Գու միայն այն մտքով ինձ այստեղ բերիր,
Որ երկրորդ անգամ սորա ձեռք մասնես,

Որից մէկ անգամ հաղիւ պրծայ ես:»
Ասաց ու բռնեց աղուէսի ոտից
Եւ սաստիկ ուժով նետեց իրանից,
Իսկ ինքը փախաւ: Մարդը ապատուեց,
Ընկաւ ծնկան վրայ, Աստծուն փառք տուեց:
Յետոյ վեր կացաւ այնպէս ուրախ զուարթ,
Կարծես թէ երբէք չէր ցաւել մի մատ,
Բարձեց ձիաններն գտած գանձերով,
Իրարու կապեց և ուրախ սրտով
Հեծաւ ձիու վրայ և կամաց կամաց
Առաջ քշելով՝ դէպի տուն դնաց:
Արդէն ծածկել էր սեւ վարագոյրը
Ննջող երկրի վրայ մութը գիշերը,
Երբոր հասաւ տուն մեր հարուստ հսկան,
Ծեցեց տան դուռը և կանչեց կնկան:
«Ո՞վ ես, ո՞վ?» լսուեց դրան յետեւից:
— Ես եմ, բաց դուռը, կանչեց նա դռնից.
Բաց արա՛, կին իմ, մեղք են ձիաններն,
Բաց, որ վեր բերեմ ոսկու բեռներն:
Ոսկու անուներ կինը որ լսեց,
Բաց արեց դուռը, մարդու վրայ վաղեց,
Փաթաթեց նորան իւր կռնիկի մէջ
Եւ համբոյրներին չէր երեւում վերջ:
Մարդը ներս տարաւ բերած գանձերը,
Լցրեց նոցանով իւր սենեակները,
Եւ այնուհետեւ շատ շատ տարիներ
Բաղտ ու խնդութիւն նրա տան պակաս չէր:

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Տարուայ եղանակները:

Ձ Մ Ն Ռ

Ի՞նչ արեց ձմեռը:

Ո՞րէ շէնչոցը	Սպիտ սկացրեց:
Քաղցր անտառի	Ալևոր պատը
Եւ կարկաչներ	Խւր թևի տակը
Մերձակայ առուի.	Ամեն շղթայեց:
Ո՞ւր են հոտաւետ	Առուն էլ սառեց:
Ծաղիկները դաշտի:	Միայն յուրտ քամին
Ծառը մերկացաւ,	Կատաղութիւնով
Եւ տերև չունի:	Անցորդի բերանն
Ձիւնէ սփռոցը	Լցնում է ձիւնով,
Ամեն ծածկից,	Նրկինքն էլ ծածկում
Գաշտեր ու ձորեր	Մռայլոտ մէջով:

Ալևոր պապի հրամանները:

Բարկացաւ ալևոր ձմեռը, սաստիկ բարկացաւ և միտքումը դրեց ոչինչ կենդանի շունչ չ'թողնել երկրի երեսին: Ամենից առաջ նա թռչուններին ձեռք առաւ. նորանք ձանձրացրել էին նորան իրանց երգերով ու ծըլվըլոցով:

Ձմեռը փչեց սառն քամին, ծառերի տերևները վերածեց և նորանց քշեց—ցանեց ճանապարհներում: Թրու-

չունենրի տեղը կտրուեցաւ, նորանք խումբ խումբ հաւաքուեցան, միտք արին, վերջապէս որոշեցին և սկսեցին կրկնաւոր թռչել բարձր սարերի, խորխոր ձորերի և կապոյտ ծովերի վերայով՝ դէպի տաք երկիրները: Մնացին միայն մի քանի թռչուններ, բայց նորանք էլ մօտեցան մարդկանց բնակարաններին:

Չմեռը տեսաւ, որ թռչունների յետևից չէ կարող հասնել, գազաններին ձեռք առաւ: Ձիւնով ծածկեց դաշտերն ու անտառները: Մառերը դարգարեց սառցային կեղևով և մինը միւսի յետևից ուղարկեց իրան սառնամանիքները: Գալիս են սառնամանիքները մինը միւսից չար, դալիս են և թռչկոտալով անցնում են ծառից ծառ, ամեն բան ճայթում, ճրճաղնում ու գազաններին վստեցնում: Բայց գազանները չ'վախեցան. նորանցից մի քանիսը հաստ քուրքի մէջ էին կոլոլուած, միւսներն էլ մօտան իրանց խոր որջերի մէջ. սկիւռը իւր խռուչումը բնկուղէ կռծում. արջը քարայրի մէջ իւր թաթն է ծծում. նապաստակը ցատկելով է տաքանում. իսկ ձիւնները, կովերը, ոչխարները շատ վաղուց տաք գոմերի մէջ պատրաստի խոտը ծամում են և տաք ջուրը խմում:

Աւելի սաստիկ չարացաւ ձմեռը — դէպի ձկները դարձաւ: Սառնամանիքներ է ուղարկում մինը միւսից կատաղել: Նորանք գոլաթուփեամբ վազում, մուրճերով բարձր չրխի-չրխկացնում, առանց սեպի ու կայնի գետերի և լճերի վերայ կամուրջներ են ձգում: Գետերը և լճերը սառան, բայց միայն երեսից. իսկ ձկները բոլորը ջրի խորքը դնացին. սառցային ծածկոցի տակ նորանք աւելի տաք էին ապրում:

Ե՛հ, սպասիր, ասում է ձմեռը. հիմա ես իմ բոլոր բարկութիւնս մարդկանց վերայ կ'թափեմ — և մինը միւսի

յետևից ուղարկում է միմեանցից աւելի սաստիկ սառնամանիքներ: Յրտութիւնից լուսամուտների ապակիները սառուցով ծածկվում են. սառը քամին խիտմբաղխում է պատերին, լուսամուտներին, այնպէս որ տեղ տեղ գերանները ճեղքվում են: Բայց մարդիկը վառում են վառարանները, նորանց առաջ նստում, իրանց համար իւղաբլիթ են թխում և ուտում ու ձմեռուայ վերայ ծիծաղում: Աթէ մէկին պատահում է զնալ անտառը փայտ բերելու, հազում է հաստ քուրք ու տաք թաթմաններ և երբ սկըսում է կացինը բարձրուցածր անել — փայտ կտրել, դեռ քրտնում էլ է: Ճանապարհին, կարծես ծիծաղելով ձմեռուայ վերայ, կարաւանները շարվում են. ձիւններից դուրջ է բարձրանում, իսկ ձիւնայանները ոտով են գնում, ձեռքերները տրորում են, ուսները թափահարում և ցուրտը զովասանում:

Ամենից աւելի ամաչեց ձմեռը, երբ տեսաւ, որ մինչև անգամ փոքրիկ մանուկները նորանից չեն վախենում. նորանք սղջաններով սղջում են սառուցների վերայ, ձնագունտի են խաղում, ձիւնից սարեր են կանգնեցնում և նոցա վերայ ջուր ցանկելով՝ դարձեալ ցրտին կանչում. «Ն'կ, էկ, օգնիր մեզ»: Չմեռը կատաղութիւնից մինի ախանջեցն է քաշում, միւսի ջրիցը բռնում. նորանք գունատվում ու կապտում են ցրտից, բայց էլի վեր են առնում ձիւնը, տրորում, թռչկոտում, խաղում և սորանով նոցա երեսը տաքանում և կարմրում է ինչպէս արիւն:

Չմեռը տեսաւ, որ ոչոքի չէ կարողանում յաղթել, բարկութիւնից լաց եղաւ: Երկնքից նորա արտասուքը կաթկաթեց. . . . երեւի դարունը մօտեցել է:

Ի՞նչ արեց ձմեռը Յուդաներին, գազաններին, ձկներին եւ մարդկանցը:

Փոքրիկ գիւղացին:

Մի անգամ, ձմեռուայ ցուրտ եղանակին, ես դուրս եկայ անտառից: Սաստիկ ցուրտ էր: Տեսնում եմ, որ ծանր կերպով բարձրանում է դէպի սարը մի ճախ բեռնած ձի և նորա կապը բռնած քաշում է մի փոքրիկ գիւղացի հանդարդ ընթացքով: Նա հազած էր մեծ մեծ կօշիկներ, մի կարճ քուրք, իսկ ձեռքերին հասա բրթէ թաթմաններ: — Բարով, բարեկամ: «Ճանապարհդ գնայ»: — Ինչպէս տեսնում եմ, դու շատ բարկացկոտես, որանդից ես բերում այդ փայտը: — «Անտառից, յայտնի է, չ'ես լսում, ահա այնտեղ հայրս կտրում է, իսկ ես կրում եմ»: «

Նախաստակ:

Նախաստակը թփերի տակ ցատքելով,
Եւ թաթերը մինը միւսին խփելով,
Ասում էր՝ Աստուած իմ, այս ինչ ցրտեր է,
Ծառերն ու թփերը կարծես փշրում է:
Միմիայն ծառերի հոգսը չեմ քաշում,
Թաթերս էլ ցրտիցը թմրում են, սառչում:
Ա'խ, ինչ կըլինէր որ ես մարդ լինէի,
Ես էլ նորա նման տրէխ հագնէի:
Տաք խրճիթում նստած՝ տանտիկնոջս հետ,
Կ'տաքանայինք մենք՝ ցատքելով յաւէտ:
Կուտապը կուտէի ես միշտ կաղամբով,
Եւ քաղցը զաղարը — սիրով կռծելով:
Զմեռը սննեակում լաւ կ'լինէր պառկել
Եւ փոքրիկ թաթերս քուրսու տակ մեկնել:

Մանկական յիշողութիւնից:

Դեկտեմբերի 29-ին.

Երկու օրից յետոյ նոր տարի է, այս պատճառով մեզ արձակեցին ուսումնարանից: Մենք հազիւ կարողացանք վերջին դասերին համբերել: Դուրս գալուն պէս, ես ուրախ ուրախ վաղեցի տուն: Մինչև յունվարի ութը մենք ազատ ենք: Այս մեր ուսումնական տարուայ առաջին և՛ ամենամեծ եռամսսն էր: Սա շարունակուեց ամբողջ չորս ամիս: Բայց այժմ դասից ազատ ենք, այժմ պէտք է ուրախանանք, ձիւնէ խաղալիքներ շինենք, զննական պատրաստենք և նորանցով խաղանք:

Զմերային երեկոյ:

Փոթորիկ ու մեղ երկինքն է պատում, ձիւնաբեր բուքը սաստիկ շառաչում, և մրմնջում է նա իբր երեխայ, և՛ իբրև զաղան ահել մոնչում: Կամ խրճիթների հին ծածկոցի տակ՝ չոր ծղոտներն է խը շխր շացնում, կամ իբրև մի հիւր դուրսը մնացած, այս, այն լուսամուտն չըսկ-չըխկացնում:

Զմերային առաւօտ:

Երեկ, տեսար, սաստիկ բուք էր, ամա երկնքում մեզ էր շրջում: Լուսինն իբրև մի բլծ աղօտիկ՝ ամպերի տակից նայում էր հեղեկ: Իսկ այսօր, նայիր դէպ լուսամուտը, որքան պայծառ է երկնքի տակը. ձիւնի շերտերը արեւից փայլում և ամբողջ դաշտեր ցոլմամբ լարդարում: Թափանցիկ անտառն ողջամբ մերկացած, սևին է տալիս հեռւում ձգուած, եղևնին նոյնպէս եղեամի միջով, ժպտում է

քո գէմ իւր կանաչ տեսքով. տոռն սառուցի տակից
խոխոջում, լուռ շնագայքդ կենդանացնում :

Մանկական յիշողութիւնից:

Յունվարի 1-ին.

Երեկ երեկոյեան մեր տանը շատ հիւրեր կային. նո-
րանք բոլորը սպասում էին, որ զիմաւորեն նոր տարուն:
Ես մինչև տասներկու ժամն արթուն չ'մնացի և առանց
շորերս հանելու՝ քնեցայ: Այսօր ես շատ վաղ վարժե-
ցայ և գնացի իմ ծնողներին նոր տարին շնորհաւորելի:
Համբուրելով նորանց ձեռքը ես վազեցի բարի հօրեղբորս
սենեակը, շնորհաւորելի նոր տարին և ցանկացայ նորան
բաղտաւորութիւն և առողջութիւն: Զօրեղբայրս համ-
բուրեց և սուեց ինձ մի զեղեցիկ պատկերազարդ գիրք:
Նա ասաց՝ եթէ միշտ լաւ կաշխատես, այսպիսի ընծաներ
շատ կ'ստանաս ինձանից: Ես շնորհակալութեամբ համ-
բուրեցի նորա ձեռքը: Ո'րբան բարի է իմ հօրեղբայրս. նա
իմ փոքր քրոջս ու եղբորս էլ չ'մոռացաւ ուրախացնել:
Շուշանին ընծայեց մի զեղեցիկ արկին, իսկ Գարեգինին մի փոք-
րիկ թմբուկ: Նա ուրախութիւնից այնքան խփեց թմբուկը,
որ ձեռները թուլացան:

Այսօր ամենքը ուրախ են և շնորհաւորում են մի-
մեանց նոր տարին, փոխադարձ բաղդաւորութիւն ցանկա-
նալով: — Մայրս հագցրեց մեզ նոր շորեր: Արեկոյեան մենք
գնալու ենք հօրաքրոջ տուն: Ես գիտեմ, որ այնտեղ կ'խա-
ղանք, կ'երգենք և շատ ուրախութիւններ կ'անենք:

Դուր ինչպէս դիմաւորեցիք նոր տարուն եւ ինչպէս անցկացրիք
նորա առաջին օրը:

Մայրենի լեզու:

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար՝
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովանք տրկար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշայի լեզու,
Այդ ինչպէս քաղցրը հնչում ես ինձ դու.
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ձոխ գանձերին, հոգով հայանալ.
Ասես թէ ահա կ'անչում էին ինձ
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:
Հընչէր դու հընչէր այժմ և յաւիտեան
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի, բարձրացիր հնութեան փողուց,
Դու իմ հայ լեզու, մոռացուած վաղուց,
Ըզգեցիր նոր կեանք սուրբ զրուածներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:

Ամեն տեղ փչում է Աստուածոյ շունչը,
Սուրբ է, այո՛, միւս այլ ձէն ու ոճը,
Բայց թէ աղօթել, զոհանալ պէտք էր,
Իմ սրբոխ սէրը յայանել արժան էր,
Իմ երանական մտածութիւնքը —
Ապա կըխօսեմ իմ մօրքս խօսքը:

Հայոց գինի:

Բաժակներ առնունք, եղբարք,
Լեք լեք բաժակներ գինով,

Կարմիր ու ճերմակ զինին

Մեզ լինի անուշ համով:

Բերներիս տաններ անվախ,
Չէ՛ դա խառնած կամ խարդախ,
Նեկտար է և ո՛չ զինի,
Խրմենք, մեզ անուշ լինի:

Արաքսայ ջրով ցողած,
Հայոց արևով հասած,
Հայոց աղջիկ է քաղել
Քրնքոյշ ձեռներով քամել:

Այս բերքն է Հայոց երկրին,
Հայաստան տընկած Նոյէն,
Անմահ երկնային զինին
Նա խմեց, երբ իջաւ սարէն:

Այս անոյշ զինին խոհը,
Սրտէն թո՛ղ հանէ ոխը.
Ամենքս էլ ասենք ամէն,
Որ շատ տայ մեզի ամ Լն:

Եղբայր եմք մենք:

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատուց կուտին ամենազեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար,

Չունին ձայն մի այնքան սիրուն
Քան զանձկալին եղբայր անուն:
Տո՛ւր ինձ քո ձեռքդ, եղբայր եմք մեք,
Որ մրկաւ էինք զատուած,

Բաղդին ամեն ոխ չարանենդ

Ի մի համբոյր ցրուին ի բաց:

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալին եղբայր անուն:
Երբ ալևոր Մայրն Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
Սրտին խորունկ վերքըն դաժան

Քաղցր արտասուած քուժին ցողով:

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալին եղբայր անուն:

Մէկտեղ լացինք մենք 'ի հընում . . .

Եկէք դարձեալ յար անբաժան

Խառնենք զարոօսը և զինդուժն,

Որ բազմաճնունդ ըլլայ մեր ջան:

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալին եղբայր անուն:

Մէկտեղ հոգնինք, մէկտեղ ցանենք,

Մէկտեղ թափին մեր քրտինքներ,

Ըղհունձ բարեաց յերկրիս հաններ,

Որ կրանք առնուն Հայոց դաշտեր:

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալին եղբայր անուն:

Յունվարի 5-ին.



Այսօր երեկոյեան Քրիստոսի ծննդեան և մկրտութեան ծրագալոյցնէ: Ես իմ ծնողաց հետ գնացի եկեղեցի, որ լեքն էր ժողովուրդով: Եկեղեցին լուսաւորուած էր հազարաւոր ծրագներով: Տիրացուքք և Սարկաւագները քաղցր ձայնով շտարականներ և երգեր էին երգում. քահանան պատարագ էր մատուցանում, մի ուրիշը կարդում էր աւետարանը, իսկ բոլոր ժողովուրդականները աղօթում էին:

Ես էլ աղօթում էի: Ես մտաբերում էի իմ վարժապետի պատմածը, թէ ինչպէս Փրկիչը ծնուեցաւ ոչխարների այրի մէջ, ինչպէս հրեշտակը աւետիս տուեց հովիւներին, ինչպէս այդ հովիւները եկան Երկրպագութիւն տուին նորածին Մանկանը: Երեւի այն երկիրը, ուր ծնաւ Փրկիչը, մեր երկրից տաք էր, որ հովիւները կարողանում էին գիշերը դուրսը քնել: Իսկ մեզ մօտ ինչպէս ցուրտ է այժմ: Ճշմարիտ՝ յունվարը ամենացուրտ ամիսն է: Երկիրը սպիտակ քողով ծածկուել է: Ի՛նչքան լաւ կ'լինի, եթէ վաղը դոնէ եղանակը մեղմ լինի:

Ի՞նչպէս կատարեցին ձեր եկեղեցում ծննդեան նախատօնարը:—
Պատմեցէ՛ք Քրիստոսի ծննունդը:

Յունվարի 6-ին.

Արդէն քանի օր է, որ գետի եզերքում Քրիստոսի մկրտութեան համար տեղ է պատրաստած: Այսօր կէսօրին,

պատարագից յետոյ, բոլոր քահանայական դասը ժողովուրդների հետ Մայր եկեղեցուց շինեց դէպի Յորդանան: Հանդէսը շատ փառաւոր էր:

Ճաշից յետոյ քահանան տիրացուի հետ եկաւ մեր տունը օրհնեց: Նա կարդաց աւետարանից, թէ ինչպէս Յիսուսը եկաւ Յորդանան գետը մկրտուելու, ինչպէս ընդունեց նորան Յովհաննէս Մկրտիչը, ինչպէս բացուեցաւ երկինքը և Աստուծոյ Հոգին աղաւնակերպ իջաւ նորա վերայ, ինչպէս լսուեցաւ երկնքից Հայր Աստուծոյ ձայնը:

Սիրտս տրորվում է, երբոր մտածում եմ, որ միւս օրը պիտի դնամ ուսումնարան. բայց իմ մայրս ասում է, եթէ ես միշտ ազատ մանդամ, տօներն էլ այսպէս ուրախալի չեն լինիլ: Պէտք է խմացած, արդեօք շատ ժամանակ կայ մինչև բարիկենդան:

Պատմեցէ՛ք Փրկչի մկրտութիւնը:

Փետրվարի 14-ին.

Այսօր մեծ տօն է — Տեսաւնընդառաջ: Երեկոյեան հայրս կարդաց Աւետարանից այն տեղը, ուր գրվում է, թէ ինչպէս Սիմէօն Վերուկին — Աստուածընկալը հանդիպեց Փրկչին տաճարում: Երբ հայրս կարդում էր, մայրս արտասուեց և ամենիս համբուրեց: Ես յետոյ երկար մտածեցի, թէ ինչքան համար արտասուեց մայրս:

Չմեռը փոքր առ փոքր աւելի ձանձրալի է դառնում: Օրերը զգալի կերպով երկարեցին: Այսու ամենայնիւ արեւակը դեռ փոքր է տաքացնում: Բայց այժմ այնպէս սաստիկ ցուրտ չէ, ինչպէս առաջ: Արեւակի հանդիպակաց տեղերում ձիւնները հալվում են: Երեւի դարունը մօտենում է:

Մայր. լեզ. ք. տ. Ն. Տ. — Դ.

Աղնկալութիւն գարնան:

Չմեռը դաշտերում չ'կան ծաղիկներ. երկիրը ծածկիւ
են ձիւնի հաստ շերտեր: Ծաղկունքը ննջում են տաք
ձիւնի տակին. երբ այս փոքրիկներն կ'զարթեն կրկին: Բայց
միշտ չի լինիլ փոթորիկ, ցրտեր, մեղ մօտ կ'դան նոյնպէս
գեղեցիկ օրեր: Գարունն դաշտերի երեսից կանցնի, բոլոր
բնութիւնն նորից կ'զարթի: Նա կ'ոտրատելով սառցա-
կեղեւներ, վերկառնի երկրից սառը ծածկոյններ, կարթնա-
նան ծաղկունքն երկար խոր քնից. Գարուն է՛, կրկուն է՛
ամենի բերնից:

Գարուն:

Ո՛հ ի՞նչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փրչես հովիկ,
Ծաղկանց վերայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնա՛, անցի՛ր սրտէս ի բաց:

Ո՛հ, ի՞նչ աղու և սրտազին
Ծառոց մէջէն երգես թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Ըլմայլեցան ի քոյ ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա՛, թըռի՛ր սրտէս ի բաց:

Ո՛հ, ի՞նչ մրմունջ հանես վրտակ
Ականակիտ և հանդարտիկ.
Քո հայելոյդ մէջ անապակ

Նային գերեք վարդն ու աղջկէ:

Բայց չես վրտակ իմ հայրենեաց,

Գնա՛, հոսէ՛ սրտէս ի բաց:

Թէպէտ թռչնիկն և հովն չայոց

Աւերակաց թռչն վերայ,

Թէպէտ պղտոր վրտանին չայոց

Նոճ'իներու մէջ կը սողայ,

Նոքա հառա՛չք են հայրենեաց,

Նոքա չ'երթան սրտէս ի բաց:

Պատի առաջին երկու շաբթիւն:

Բարիկենդաններէս մենք շատ ուրախութիւններ ա-
րինք. խաղացինք, իւզարկիւթ կերանք: Ամենայն կողմից ու-
րախութեան ձայներ էին լսուած . . . Այսօր էլ մարդիկ
մեծ շարժողութեան մէջ են. բայց յայտնի երեւում է, որ
այդ շարժողութիւնները այն զուարթութիւնը չունին,
ինչոր երեկ. ամենքը զգում են, որ այժմ պատէ: Մեղմ՝ զան-
գահարութիւնը օրը երեք անգամ և փառաբանութիւն-
ները եկեղեցիներում — ահա՛ պատի միակ զարդարանքը:
Մարդիկ համեստութեամբ օրը երեք անգամ՝ ժամ են գը-
նում: Երեկ նորանք ուրախանում էին, այսօր աղօթում և
պատրաստուում են հաղորդուելու:

Այժմ օրերն էլ փոխուել են: Ողի մէջ գարնան նշան-
ներն երեւում են: Միջօրէի արեգակը բաւականին տաքաց-
նում է: Կտուրներից բխրիկեան շիթեր են կախուած: Զըն-
ծաղկը գեղնած խոտերի միջից իւր դուխը բարձրացնում
է: Ի՛նչքան ուրախալի է մտածել, որ զատկին երկիրը կա-
նաչ խոտով ծածկուած կ'լինի: Մենք միայն վեց շաբաթ
ենք կարդալու, եօթներորդ շաբաթը աղստ եկէ:

Դուք ինչպէս անցկացրիք բարիկենդանը, ի՞նչ գիտէք դուք մեծ
պոսի մասին:

Մանկական յիշողութիւնից:

Ծաղկաղարդ կիւրակի.

Ահա պատի վեց շաբաթը անցկացաւ: Երեկ մեզ ուսումնարանից արձակեցին: Երբոր տուն եկայ, հայրս հարցրեց, թէ երեկ ի՞նչ տօն էր: Ես այդ չ'զիտէի. բայց ինձ հասկացրին, որ շաբաթ օրը Ղաղարոսի յարութեան տօնն էր. իսկ այսօր Քրիստոսի դալստեան տօնն է—եւ այս զիտեմ:

Այսօր մեր տանըցիք բոլորը, բացի մանուկները, շատ շուտ ժամ գնացին: Երբ մայրս վերադարձաւ տուն, ձեռքին ուռ ունէր: Մենք զեռ անկողնի մէջ էինք: Մայրս ուռով մեզ կամաց խփեց և ծիծաղելով ասաց. «Վերկացէ՛ք, այսօր սիւր շուտ վերկենայ, շնորհքով տղայ կ'լինի»: Մենք ամենքս տեղներիցս վերթաւանք: Մայրս համբուրեց ամենիս և մի մի ուռ տուեց:

Տես ինչ գեղեցիկ է: Ուռի վերայ բրդոտ կոկոններ—գնառնակներ կան.—սա դարնան նշան է, երևի շուտով ծառերի ծաղիկներն էլ կ'բացուին:

Այսպէս անցկացրիք դուք ծաղկաղարդ կիւրակին: Ի՞նչ տօն է կատարվում այդ օրը:

Հրաւեր գարնան:

Գարուն, դու դարուն, սիրուն եղանակ,

Արի, մօտեցիր, ուրախ ժամանակ.

Քեզ հետ մեզ համար բեր հազար տեսակ

Բարիք բնութեան.—վուշ, սլառու, ցորեան:

Աւագ Հինգշաբթի:

Այսօր եւ խոստովանուեցայ: Ես երկիւղով մօտեցայ քահանային, չորեքսն նորա առաջ և խոստովանուեցայ:

Իմ երեսայական պապաութիւններս: Քահանան խրատեց ինձ, և երբ ես խոնարհաբար խոստացայ, որ կաշխատեմ միշտ աշխատասէր, բարի և ճշմարտախօս լինել, նա ձեռքը դրեց իմ գլխիս և Քրիստոսի անունով օրհնեց ինձ:

Պատարագը սկսուեցաւ, բայց վարագոյրը դեռ ծածկած ունէր սեղանը և քահանան կարդում էր այդ օրուան աղօթքը: Եկեղեցին լիքն էր մարդկանցով, նորանք բոլորը աղօթում էին: Ես էլ աղօթում էի. ես աղօթում էի, որ Աստուած ինձ կարողութիւն տայ կատարելու իմ խոստմունքներս: Ես զիտեմ, որ խոստմունք չ'կատարելը մեծ պակասութիւն է: Քահանան վերջացրեց աղօթքը: Յանկարծ վարագոյրը բացուեցաւ. սարկաւաղները և դպիրները գեղեցիկ ձայնով երգել սկսեցին: Արթութիւնը վերաբերեցին ժողովրդի միջով: Հաղորդութեան ժամանակ սարկաւաղը երգեց «Յրկիւղով և հաւատով առաջ եկէ՛ք և սրբութեամբ հաղորդուեցէ՛ք»: Ես խոնարհութեամբ և երկիւղով մօտեցայ սեղանին և հաղորդուեցայ:

Այսօր եւ ամբողջ օրը ջիւղ վաղել, այլ նստած էի տատիս մօտ և սաղմօս էի կարդում:

Աւագ ուրբաթ զիշեր մենք գնացինք սղին: Քահանան կարդաց եկեղեցում, թէ ինչպէս էր աւանդում մեր Քրիիչը իւր աշակերտներին իւր վերջին պատուէրները, և թէ ինչպէս զգում էր, որ ինքը արդէն մատնուած է և պէտք է բռնուի: Իզուր չէր, որ ամեն մի աւետարանից յետոյ դպիրները ողբաձայն երգում էին . . . Վերջին աւետարանը կարդացին, ուր գրուած էր թէ ինչպէս չարեցին Քրիստոսին անգութ հրէաները:

Այս զիշեր տառներովու զլուխ աւետարան կարդացուեցաւ. իհարկէ, դժուար էր կանգնել այդքան երկար, բայց ես կանգնեցայ:

Այդպէս հաղորդուեցաք եւ դուք: Այդպէս գնացիք դուք սղին:

Աւագ ուրբաթ.

Երեկոյեան.

Այսօր Քրիստոսի Թաղման օրն է և մենք զնացինք եկեղեցի: Ժամերգութիւնը դեռ չէր սկսուել: Նստակցի պտըտել եկեղեցու շուրջը: Շատ պայծառ օր էր, արեգակը երեկոյեան վերջալուսի ճառագայթներով փայլեցնում էր եկեղեցիների զմբէթները: Թռչունները ուրախ ուրախ թռչկոտում էին եկեղեցու կտուրի վերայ և երեկոյեան վերջալուսի տակ մեղմօրէն ծլլլայնում էին: Չ'նայելով այս բոլորին, ես կարծես տխուր էին. այսօր մեր Փրկչի Թաղման օրն է. եկեղեցու մէջ դրած է Քրիստոսի դադաղը, որի չորս կողմը հանդարտ այրում են մոմերը և իրանց շուրջը կապտադոյն շառաւիղներ են արձակում: Կարծես նորանք էլ տխուր են: Միայն ուրախալի է լսել, ինչպէս բարի Յովնէփը սուրբ կտաւով պատեց մեր Փրկչի մարմինը և չ'թողեց նորան չարագործների ձեռքը:

Ժամերգութիւնից յետոյ մենք յետ դարձանք տուն: Ճանապարհին տեղ տեղ դեռ ևս ձիւն էր երևում, բայց շատ տեղերում էլ արդէն հալուել էր: Հալուած տեղերը կանաչ նորափթիթ խոտով ծածկուել էին: Պարտէզներում էլ հոտաւետ փոքրիկ մանուշակը արդէն բաց էր արել իւր կապոյտ աչերը: Մառերի կոկոնները ուռել ու լծուել էին. իսկ նշխարները արդէն քանի օր է դարձարում են այգիները իրանց սպիտակ ծաղիկներով: Ահա մերձակայ ձորում խոտովում է ձիւնի ջրերից գոյացած առուակը: Գեղեցիկ արեւ, գործի՛ր ջանասիրութեամբ. մի՛ մոռանար, որ երեւո օրից յետոյ զատիկ է լինելու:

Պատմեցէք, ինչպէս գնացիք դուք եկեղեցի.— Ի՞նչ լառաբանութիւններ է արել դարունը:

Գարնանային ջրեր:

Դեռ սարերում ձիւն է փայլում.

Բայց զարուն է. այդ պատճառով

Ամեն կողմից ջուր է հոսում,

Բոլոր բնութիւնն արթնացնում:

Ամեն կողմից ջուր է հոսում,

Մեղմ խոտովում ու կարկաչում,

Ուրախութեան փրփուր բերին

Քաղցր աւետիս է մեզ բերում.

Պարկէ դարնան աւետարեր

Ննք մենք եկել, ո՛վ մանուկներ.

Նա ուղարկեց մեզ իւր առաջ.

Եկաւ զարուն, եկաւ ծաղկած:

Սուրբ Յարութիւն.



Զատիկ շուրթ երեկոյեան եկեղեցում հանդիսով առնուեցաւ Սուրբ Յարութեան ճրագալոյցը: Մենք երեկոյեան ժամից յետոյ դարձանք տուն և լուծեցինք պաններս— թաթախուեցանք: Եօթը շաբաթ պահելուց յետոյ ինչքան ուրախալի էր ձեռքիդ ունենալ կարծիր ձու և նորանով թաթախուել: Սեղանի վերայ դարսած էին զանազան տեսակ կերակրելիքներ, բայց մենք

ղէնից, որովհետեւ այս երեկոյ նաւակաւորք էր: Հացը ուտելուց յետոյ ես շուտ քնեցայ, բայց խնդրեցի մօրս, որ ինձ էլ արթնացնի առաւօտեան ժամին ներկայ գտնուելու:

Կէս զիշերին Մայր եկեղեցու զանգակը որոտաց: Ես նորա ձայնից անձամբ զարթեցայ: Ժամի մէկն էր, երբ միւս եկեղեցիների զանգակները սկսեցին մեղմաբար ղողանջել: Մենք դուրս եկանք տանից: Փողոցները շատ մութն էին, բայց եկեղեցին հաղարարոր ճրագներով փայլում էր: Եկեղեցում այնքան ժողովուրդ կար, որ մենք հազիւ տեղաւորուեցանք: Ժամերգութիւնը սկսուած էր. ես անչափ ուրախացայ, երբ սարկաւազները երգեցին քաղցր ձայնով. «Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկենսն պարգևեաց»: Ահա իսկապէս ամենամեծ տօնը:

Պատարագը վերջանալուց յետոյ մենք վերադարձանք տուն: Արդէն լոյս էր: Ես շտապեցի համբուրել իմ հօրն ու մօր ձեռքը կրկնելով ինձ շատ սիրելի խօսքը՝ Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց: Նորանք ինձ համբուրեցին: Ապա ես մօտեցայ իմ փոքրիկ եղբօրս ու քրոջս և մենք քաղցրութեամբ համբուրուեցանք:

Մի քանի ժամից յետոյ եկաւ քահանան տիրացուի հետ: Նորանք օրհնեցին մեր տունը և երգեցին Քրիստոսի հրաշափառ յարութիւնը:

Ես և եղբայրս դուրս եկանք, որ զնանք մեր բարեկամների զատիկը շնորհաւորելու: Ա'ս, ինչպէս գեղեցիկ առաւօտ էր. փայլուն արևը սփռում էր իւր արծաթագոյն ճառագայթները: Մեր պարտէզի բոլոր նշենիները ծաղկել էին. մանուշակը խոտերի մէջ փռուել էր ինչպէս մի կապտաւուն սփռոց և անուշահոտութեամբ լցնում էր աշխարհս: Ահա միւս կողմից ծիրանի ծառերն էլ իրանց կիսաբաց

կոկոնների տակից համառաբար ժպտում են: Ա'ս, ինչքան պայծառ է օրը, բոլոր բնութիւնը կարծես զարդարուած լինի: Կռունկների երամները ահա շղթայաձև ընթանում են փառաբանելով գեղեցիկ դարունը. իսկ նորանցից ցած, երկրի վերայ, մանուկները միասին ժողովուած ուրախ 'զուարթ ձու են խաղում: Ահա մտադ զառների փոքրիկ հօտերն էլ մայելով շրջում են փողոցներում: Ամեն մարդ աշխատում է զառն ունենալ իրան տանը: Սա Զատիկի նշանն է: Հայրս դնեց մեզ համար մի գեղեցիկ դասը. ես նորան շատ եմ սիրում և նորաբոյս կանաչ խոտով կեանքով եմ:

Այսպէս անդկայրիք դուր Զատիկը: Ի՞նչ յառաջադիմութիւն է արել դարունը:

Քրիստոս Յարեաւ:

Ամենայն տեղ ուրախ խնդում,
Մարդիկ ամեն են աղօթում.
Արշալոյսն էլ շուտ բացուեցաւ . . .
Քրիստոս յարեաւ, Քրիստոս յարեաւ:
Դաշտերի ձիւնը հալուեցաւ,
Գետերի ջուրը բարձրացաւ.
Մօտիկ անտառն կանաչեցաւ . . .
Քրիստոս յարեաւ, Քրիստոս յարեաւ.
Ահա երկիրը արթնացաւ,
Դաշտը սիրուն զարդարուեցաւ.
Գեղեցկագոյն դարուն եկաւ . . .
Քրիստոս յարեաւ, Քրիստոս յարեաւ:

Գարնանամուտ:

Քեզ ողջոյն զուարթուն,
Առուզահասակ դարուն,
Քեզ ողջոյն բեր անըուն
Տալիս է Հայոց տուն:
Անուշաւանի սօսիք տերևով,
Ծխերն ծառից իրանց ճրագողով,
Յրհնում են զալդ, երկնքի դեպան,
Դու ես մեր կեանքի պաշար ու պաշտպան:
Երբ հեղիկ մօտեցար Մասիսի գաշտերին,
Բքածին ամպերը տարադիր զնացին.
Հին լեռը բացեց իւր խաւոտ կուրծքը
Քեզ կանաչ դիպայ սիրուն հովիտը.
Սիրահար ստիակը իւր վարդի յետքից
Վառեց Արարատ շինել իւր բունը . . .

Վերջին դարուն:

Գարունն է եկել նախշուն թւերով,
Նախշուն թւերը պէսպէս ձևերով,
Գոյն գոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով:
Երկինք ու երկիր քեզ տօնեն, դարուն,
Զի ես քան զամեն եղանակ սիրուն.
Նա անձրև ցօղէ առատ ի վերէն,
Գոտ օրհնել տայ քեզ եկոր հաւերուն:
Ոսկի արևը փայլէ քեզ վերէն,
Կենսաբեր հովը փրչէ ի լերէն.
Ախ, աղնիւ դարուն, եղանակ սիրուն,

Արդեօք դու ինչ բաղդ բերիք ինձ ճերէն:
Գլխաբարձ երթամ ՚ի պարտէզ այգուն,
Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն ՚ի բուն.
Զ'կայ ինձ հանգիստ, ցնձութիւն սրտիս,
Ես վաղ եմ մոռցել զինչ արդորր է քուն:

Մեռած-պատանքած գետնին կեանք տուիր,
Տերեթտի ծառին ստուերախիտ արիր,
Քեզ թռչնոց երամբ հանդէս կանչեցիր,
Ինձ մենակ խեղճիս հսպէս մոռացար:

Առաջ գնա, գարուն, դէպ' հլւսիսն ՚ի խոր:
Գնա՛, կանաչացողը դու անդ սար ու ձոր.
Որոց անհամբեր քեզ կան՝ տնէր բարև,
Քո՛ւ ուրախ զալստեամբ նոցա զուարճացող:

Կուգաս դալ տարի, դու ինձ կու գտնես
Ոչ ՚ի մեր այգին և ոչ ՚ի պարտէզ,
Այլ անգարթ քրնով հողն տակ պառկած,
Գերեզմանաբար մի վրաս կու տեսնես:

Մեղու:

Հենց որ գեղեցիկ դարնան հետ երևեցան առաջին
Ծաղիկները, խիղջ մոմեղէն թաղաւորութիւնից, հոտաւէտ
մեղրախրճիթից դուրս թռաւ առաջին մեղուն: Նա թռչ-
կոտաց նորաբաց ծաղիկների վերայ և հարցրեց նորանցից
տեղեկութիւն նորեկ դարնան մասին, թէ արդեօք շու-
տով կ'կանաչեն մարգագետինները, կ'բացօւեն տերևաբեր
կոկոնները կ'ծաղկէ հոտաւէտ յասմիկը:

Ծիծեռնակ:

Խոտը կանաչում է, արևը փայլում,
Ծիծեռն դարնան հետ մեզ մօտ է թռչում:

Գեղեցիկ արե եւ քաղցր դարուն,
Իւր ծրլվելալոյն է նա մեզ բերում:
— Եւ քեզ կուտ կ'տամ, իսկ դու մեզ երգիր,
Ինչ հեռու երկրում տեսար, լսեցիր:

Մանկական յիշողութիւնից:

Մեռելոցք.

Ձատիկ երկուշաբթի ծնողքս ինձ, քրոջս և եղբորս
առաջն հանգստարան: Այն տեղ, գերեզմանաքարերի տակ,
հանգստանում են մեր ազգականներից շատերը, այնտեղ է
և իմ քոյր Նղիսաբէթը: Քահանան ներկայ էր: Հայրս
օրհնել տուեց քրոջս գերեզմանը: Ինչքան խոտեր են կա-
նաչել նորա փոքրիկ բնակարանի վերայ: Գերեզմանատունն էլ է
նորոգուել: Ամեն կողմում ծաղկում են գեղեցիկ ծաղիկ-
ներ: Շատ գերեզմանների վանդակապատերի մէջ իրանց
ազգականները զանազան ծառեր են տնկել: Գարունը չէ
մոռացել հանգստարանն էլ գեղեցկացնել. ծառերը զարդա-
րուած են կանաչ տերևով. թռչունները նորանց վերայ
թռչկոտում են և ծրլվելում. մինը ծղօտ է տանում,
միւսը փետուրներ—երեւում է, որ նորանք սկսել են իրանց
համար բուններ շինել: Հանգստարանի միւս կողմում գիւ-
ղացիք արդէն հերկում են իրանց վարելահողերը:

Ի՞նչ է մոռելոցքը: Ի՞նչ է արեւ դարունը հանգստարանում:

Երկրագործի երգը:

Դէ՛հ քաշեցէք, իմ զոյգ եղներ, օրավարը վարեցէք.
Խափ ու ձևիչ ժանգոտել են, հողում պէտք է սպիտակացնենք:
Առաւօտեան արշալոյսը արեւելքում ծագեցաւ,

Փայլուն արեւն ոսկիփայլ ճառագայթները բացաւ:
Կեանք է երկրագործին գաշտումը լինել,
Իւր զոյգ եղներովը գետինը հերկել:
Դէ՛հ, քաշեցէք, տեսնեմ, իմ սիրուն եղներ:

Եւ ինքս ձեզ համար ծառայ եմ և տէր,
Ուրախութեամբ արօր, ցաքան եմ սարքել,
Սայլակը պատրաստել և սերմը կրել:
Միշտ կալիս ու թեղին ուրախ եմ նայում,
Զուարթ երգ երգելով թեղս եմ քամում:
Դէ՛հ շարժուեցէք, իմ քաջ եղներ, ձեզնից եմ խնդրում:

Արտերս ես ձեզ հետ շուտով պիտ' հերկեմ,
Ատոկ հատիկներին օրրան պատրաստեմ.
Նորան կ'անընդի մայր հողը խոնաւ,
Դուրս կըգայ արտումս կանաչ սէլ անբաւ:
Դէ՛հ քաշեցէք, եղներս, օրը բացուեցաւ:

Կըբուսնին խոտերը, ընձիւղներ կ'տան,
Նորանց կատարներին հասկեր դուրս կ'գան,
Կուռչեն ու կ'փքուին լիք պտուղներով.
Ես նորանց կ'հնձեմ իմ սուր մանդաղով.
Տասնեակների տակը հանգիստըս կառնեմ:
Դէ՛հ, իմ քաջ եղներս, քաշեցէք, տեսնեմ:

Քանի ժամից յետոյ ես ձեզ կ'արձակեմ,
Լաւ կըկշտացնեմ ու կուշտ կըջրեմ,
Աղօթելուց յետոյ մածր ձեռք կ'առնեմ,
Աստուծուն փառք տալով դործս կ'սկսեմ.
Իմ հարստութիւնս արտն է, Տէ՛ր, դու յաջողի՛ր,
Իմ եղներիս ոյժ տուր, վաստակս օրհնիր:

Արծիւը և Ագռաւը:

Լինում է, չի լինում մի ագռաւ: Նա ունենում է
հայր, մայր, ձագեր և հարեաններ: Այդ ագռաւը մի վառ
Մայր. լեզ. ք. տ. Ն. Տ.—Ղ.

սովորութիւն է ունենում. միշտ աշխատում է սագերի, բաղերի և ուրիշ թռչունների ձուանը գողանալ: Միանգամ բուն անցնելիս տեսաւ այս գողութիւնը, դնաց արծուին դանդատուեցաւ և ասաց. «Մեր հայր ու թագաւոր արծիւ, արդար դատաստան արած գող ագռաւին, որ էլ մեր ձուերը չ'գողանայ:

Թագաւոր արծիւը ուղարկեց ագռաւի յետեւից իւր թեթեւթռիչ դեսպան ճնճղուկին: Ճնճղուկը թռաւ և բռնեց ագռաւին. նա կամենում էր ընդդիմանալ, բայց ծիտը կոցահարեց նորան և քաշտուեց արծուի մօտ:

Արծիւը սկսեց դատել ագռաւին. «Ա՛խ դու չարազուշակ ագռաւ, յիմարագլուխ թռչուն, քեզ վերայ դանդատում են, որ դու աչքերդ ուրիշի ունեցածի վերայ ես մանածում. պատուաւոր թռչունների ձուանը գողանում ես:»

— Զրպարտութիւն է, Տէր թագաւոր, զրպարտութիւն է: Եթէ բոլորը կոյր բուի արարքն է. նա սուտ է ասում:

«Քեզ վերայ դանդատում են, թէ երբ զիւզացին դուրս է գալիս իւր ցելը սերմելու, դու խսկոյն քո բոլոր խումբովդ ցածես գալիս ու ցելը քջըջում:»

— Զրպարտութիւն է, տէր իմ, զրպարտութիւն է:

«Ասում են նմանապէս, որ երբ հնձողները խուրձերը դէզում են, դու քո բոլոր խումբովդ դուրս ես գալիս և այդ խուրձերը ցրում ես:»

— Զրպարտութիւն է, տէր իմ, զրպարտութիւն է:

Արծիւը վճռեց, որ ագռաւին բանտ դնեն:

Երկրագործի փարնանային առաւօտը:

Փարնան արեւը հպարտ բարձրացաւ,
Երկրագործն իրան մաճը ձեռք առաւ.

Արօրի ետքից հանդարտ դնում է
Եւ ուրախ—զուարթ, բարձր երգում է.
«Երկրագործի պէս ե՛վ է կեանք վարում,
Գարնան սկզբից ուրախ աշխատում:»

Երկրագործը և ծաղիկը.

Համեստ ծաղիկ դաշտային,
Վտոտ ժամի հանդիպեցար.

Երբ արօրը քշեցի,

Նորա առաջը ընկար:

Գեղեցկութիւն դաշտերի,

Քեզ փրկել չ'կարացի.

Սրտի ցաւով ականայ

Քաղցր կեանքդ կարճեցի:

Խոնարհաբար վայելով

Իբրեւ դոհար խոտերում,

Միամիտ կ'սպասէիր

Արեգակի ծագելուն:

Յանկարծ արօրս սրածայր

Անդթաբար քեզ կտրեց,

Եւ այսպիսով քաղցր կեանքիդ

Ի ժբաղտաբար վերջ տուեց:

Արծիւը և կատուն:

Գիւղից դուրս՝ կատուն իւր ձագերի հետ ուրախ ուրախ խաղում էր: Չարնանային տրեգակը տաքացնում էր և փոքրիկ գերդաստունը շատ բաղդաւոր էր: Յանկարծ, մին էլ տեսնես, անապատային մեծ արծիւը կայծակի նման ցած նետուեցաւ երկնքից և կատուի ձագերից մէկը

բռնեց: Բայց քանի որ նա կամենում էր բարձրանալ, մայրը կախուեցաւ նորանից և արգելեց: Յափշտակողը թողեց ձագը և մեծ կատուին բռնեց: Առիւը սկսուեցաւ:

Չօրեղ թւերը, ամուր կտուցը, ուժեղ ճանկերը, երկար ու կեռ եղունքներով զինուորուած, արծուին մեծ առաւելութիւն էին տալիս: Նա պատռտորեց կատուի կաշին և նորա աչքի մէկը քոռացրեց: Բայց կատուն չ'վհատուեցաւ. նա չանկերով պինդ կպաւ արծուից և նորա աջու թւեր կծեց, կոտրեց: Այժմ՝ յաղթութիւնը կարծես կատուի կողմն էր թեքուիւմ: Բայց արծիւը դեռ էլի շատ ուժեղ էր, իսկ կատուն յոգնել էր համարեալ թէ. այսուամենայնիւ նա ժողովեց վերջին ոյժը, ճարպիկաբար վեր յատրեց և արծուին գետին գցեց: Այդ բոպէին սաստիկ կծեց նորա դուխը և, մոռանալով իւր անձնական ցաւը, սկսեց լիզել իւր վերաւորեալ ձագին:

Համեմատեցէք արծիւը կատուի հետ:

Քարնան երեկոյեան վերջալոյսը:

Թափր դէպի մեզ, քաղցրիկ երեկոյ, հանդիստ առնելու. փեղ ուրախութեամբ մենք երգենք երգում, վերջալոյս սիրուն: Դաշտ ու ձոր ահա մթնել սկսաւ, զիշերն մօտեցաւ, Ստուերախիտ ծառի ոստերի տակին՝ լուսոյ կայծն հանդաւ: Առութիւնն ամեն տեղ թւերն տարածեց՝ և օդը ցրտեց: Միայն մերձակայ փոքրիկ անտառում՝ սոխակը երգեց. Թափր դէպի մեզ, քաղցրիկ երեկոյ, հանգիստ առնելու. փեղ ուրախ սրտով մենք երգենք երգում, վերջալոյս սիրուն:

Քո երեսի քրտինքով ուտես քո հացը:

Երկիրը կերակուում է մարդուս, բայց ձրի չէ կերակրում: Մարդիկ շատ պիտի աշխատեն, որ երկիրը փոխա-

նակ խոտի, որ միայն անասուններին է պիտանի, ցորեն, հաճար, կորեկ, գարի, բրինձ և ուրիշ քաղաքոյսեր տար:

Երկրադործը առաջ հերկում է երկիրը: Աթէ շատ խոր չէ հարկաւոր, նա չութով է հերկում, իսկ եթէ խամ հող է, կամ խոր է հարկաւոր ցելել, նա հերկում է աբօրով: Չութը արօրից թեթեւ է: Նորանում լծում են մէկ ձի կամ երկու ջուխտ եղն: Աբօրը չութից շատ ծանր է, և նորանում լծում են մի քանի ջուխտ եղներ կամ ձիաներ:

Օրավարը հերկեցին, պրծան, նա պատած է մեծամեծ կոշերով: Բայց սա բաւական չէ: Աթէ երկիրը նոր է, կամ հողը ուժեղ, ապա աղբ չէ հարկաւոր, բայց եթէ արտը մի քանի անգամ սերմուած և թուլացած է, այն ժամանակ նորան պէտք է աղբով բարւոքել:

Գիւղացիք աղբը կրում են իրանց վարելահողերը աշնանը կամ դարնանը և տեղ տեղ դիզում են: Բայց այս դէպերը փոքր օգուտ կ'տան. պէտք է նորանց փռել— խառնել հողի հետ: Ահա աղբն էլ ցրուեցին— փտեց. բայց դարձեալ ցելը կոշտ է և չէ կարելի սերմել. սերմի համար փափուկ անկողին է հարկաւոր: Աթէ ամառուանից ցելը լաւ այրուած է և անձրեւից փափկացած, գիւղացիք համարձակ սերմ են դրում. բայց եթէ տեսնում են, որ կոշտերը չեն փշուել— ցելը չէ փափկել, դուրս են գալիս դաշտը իրանց ատամնաւոր փոցներով, փոցնում են, մինչև որ բոլոր կոշտերը փշուում են, և յետոյ սկսում են սերմը դրել:

Գիւղացիք ցանում են կամ աշնանը կամ դարնանը: Աշնանը աշնացան են անում և ցանում են զլիսաւորապէս ցորեն և հաճար: Շատ անգամ աշնացանի ցելերը արդէն ամառուայ սկզբից հերկած են, որ արեգակի ներգործու-

Թիւնից լաւ փշոռւին: Երբ գալես է սեպտեմբերը և խոնաւ օրերը սկսվում են, զիւղացին սկիզբն է անում աշնացանին: Գարնանը դարուկքալար են անում և զլսաւորապէս վաւորում են գարի, վարսակ, կորեկ և գարնան ցորեն:

Աշնացանը կանաչում է հենց աշնանը և երբ դաշտնաբուծ խոտերը վաղուց արդէն դեղնել են, աշնան արտերը ծածկվում են Թաւշեայ կանաչով: Ցաւալի է տեսնել, ինչպէս ձիւնը ծածկում է այդ մետաքսապատ դաշտերը: Աշնացանի մատաղ բոյսերը ձիւնի տակ շուտով են Թառամում, բայց արմասները աւելի լաւ են աճում, ծլեր են արձակում և հողի մէջ աւելի խոր են գնում: Աշնացանը ամբողջ ձմեռը պառկում է ձիւնի տակ, իսկ գարնանը, երբ ձիւնները հալվում են և արեւը տաքացնում է նորանց, սկսում են նորանոր Թերթեր և նորանոր ցողուններ արձակել, որոնք աւելի հաստ և պինդ են լինում առաջիններից: Վառ է միայն, եթէ աշնանը, ձիւնը նստելուց առաջ, սաստիկ ցրտեր է անում, այն ժամանակ աշնացանը կարող է ցրտաւոր լինել բոլորովին: Ահա Թէ ինչ է պատճառը, որ զիւղացիք վախենում են անձիւն ցրտից և չեն տրտմում, այլ ուրախանում են, երբ աշնացանը ձիւնի հաստ կեղևով ծածկվում է:

Ի՞նչպէս են մշակում եւ ցանում երկիրը:

Շինականների առաւօտեան երգը:

Ա՛յ մարդ, այսօր շատ քրնեցար նընջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր:

Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փռուեցաւ:

Ընկերներդ վաղ արտերը զրնացին,
Յօրեն, գարի գերանդիով հընձեցին:

Խուրճ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նըստան հանդիլ կաղնիներու հովումը:

Ա՛յ մարդ, վեր-կաց սառը ջրով լուացուիր,
Գօտիդ կապէ, դերանդիդ ան, դաշտ հաթիր.
Քանի հով է հունձրդ արա՛ արտումդ,
Հունձրդ հընձէ, մի՛ ծուլանար գործումդ:

Հունձրդ կապէ, բարդդ բարդէ, տուն արի,
Հանդրստացիր, երբ քո հունձրդ կատարուի.
Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը,
Եւ իրիկուան կըպտորաստեմ սեղանը:

Ա՛յ մարդ, հերիք ինչ-որ այսօր քրնեցար,
Աչքդ մէկ բաց, տես Թէ ո՞րչափ ուշացար.
Մեր զըռացին վաղ անց-կացաւ կամուրջէն,
Վաղ լըռել է մեր զըղերը ձայնելէն:

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քրնել, սիրական,
Արեգական շողը հասաւ մեր զըռան,
Մի՛ ծուլանար, ժամանակդ խընայէ,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռ կերակրէ:

Դաշտ և ուսումնարան:

Մարդիկ հերկում են դաշտը և հացահատիկներ են ցանում: Մանուկները գնում են ուսումնարան և Աստուծոյ խօսքը սովորում: Հատիկները ծածկվում են փափուկ հողի մէջ: Աստուծոյ խօսքը մտնում է մանուկ սրտերի մէջ: Անձրեկից երկիրը թրջվում է, արեւից տաքանում: Խելացի խօսքերով ու քնքուշութեամբ հողին եռանդ է ընկնում: Հողի տակ, խաւարումը չեն ննջում սերմերը: Չէ ջնջվում սրտիցը բարի ուսմունքները: Սերմերը բուսնում են կանաչ ընձիւղով: Ուսումն աւանդվում է խելօք խօսքերով: Ար-

տերը ծածկվում են ոսկեգոյն հունձով: Տիրոջ խօսքը պատկվում է բարի գործերով: Աստուած, ժամանակին տո՛ւր անձրե, արե: Հայր, աճեցրու մեր սրտի մէջ բարութեան սերմերը:

Այն, ինչ որ անվում է արտերում, համեմատեցէք նորա հետ, ինչոր անվում է ուսումնարանում:

Կ ա պ ի կ:

Առաւօտեան արշալոյսը բացուելուն պէս, զիւղացին զութանը քշեց դէպի դաշտը և սկսեց իւր օրավարը ցելել: Նա այնպէս աշխատում էր, որ քրտինքը կաթիլ կաթիլ զլորվում էին նորա ճակատից. զիւղացին արժա- նաւոր բանոր էր: Այս պատճառով, ով որ նորա մօտից անցնում էր, զովում էր նորան և յաջողութիւն խնդ- րում: Կապիկը այս բանի վերայ շատ նախանձուեցաւ: Գո- վասանքը խաբուսիկ է, ի՞նչպէս չ'յանկանաս նորան: Կա- պիկը մտածեց, որ ինքն էլ աշխատի, կարելի է դորանով ուրիշներից զովասանք ստանայ: Նա գտաւ մի կոճղ և սկը- սեց նորա վերայ չարչարուիլ: Կապիկը կոճղն այս ու այն կողմն է զցում, երբեմն նորա ծայրը իւր դնչին է խփում, քրտուէքը նորա ճակատից աղբիւրի պէս թափվում է, այն- պէս որ խեղճը չարչարուելուց հազիւ է կարողանում շունչ քաշել, բայց ոչոքից ոչինչ զովասանք չէ լսում:

Եւ զարմացք չէ, իմ աչքի լոյս, թէև զու շատ ևս աշխատում, բայց դորանով ոչինչ օգուտ չես բերում:

Մ ա յ ի տ:

Մենք արժանացանք ուրախ մայիսին, ջառեր, ծաղիկներ ողջ կանաչեցին.

Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը
Ուրախ ու զուարթ առաջ վաղեցին:

Պարնանային փոթորիկ:

Պարնան փոթորիկն ես շատ եմ սիրում,
Նրբ բարձր օդի մէջ ամպեր են զուում,
Եւ կարծես պայծառ, կապոյտ երկնքում,
Ուրախ ոսախւնով առաջ են խաղում:

Գլորվում են, զուում, անձրեներ թափում,
Եւ կաթիլներից ցօղ է բարձրանում.
Անձրևի շիթերն երկնքից կախուեցան,
Սէզապաս արտերն ոսկեզօծուեցան:

Չորերի միջով անթիւ առուակներ
Ուրախ քրքիջով ցած են զլորվում,
Եւ անտառներում երգող հաւերի
Նրբի փոխանակ ժայռերն են թնդում:

Մայիսուայ առաւօտ:

Ի՞նչքան թարմ և զեղեցիկ է մայիսուայ առաւօտը:
Գաշտերը ծածկուած են կանաչ խոտերով ու ծաղիկներով:
Կարծես ընտելւելը օրէցօր աւելի քաղցրանում է և
դարնանային մէղի միջից ժպտում է ամառը:

Երբ ես գնում եմ անտառը, այնտեղ, թփերի ստու-
երների տակ, ծաղկապատ հովիտներում փռուած եմ տես-
նում մայիսուայ որդին, ապիտակ և անուշահոտ շուշանը:
Ամենայն տեղ, ուր որ նայում ես, աչքիդ առաջ կանաչ
դորդեր է սփռուած, որոնց վերայ առաւօտեան ցօղը ցա-
նել է իւր մարգարտեայ կաթիլները: Արևի առաջին ճա-

ապագայի մեծերը ընկնելով ծառերի տերեւների և ցողապատ մարգերի վերայ, փայլեցնում են նորանց ինչպէս անդամանդեայ անկուքներու թռչունները ճրվղըլում են չորս կողմից. իսկ ահա այժմ կողմից, վարդի կիսաբաց կոկոններով ծածկուած թփերի մէջ, լսվում է մի զմայելի ձայն. — դա սոխակն է: Առաւօտեան արշալուսին նա կանգնած է բացուող կոկոնների վերայ, աչքերը կիսախուփ, կարծես ինքն իւր երգից յալիչտակուած, երգում, շրվիւղնում և հազար տեսակ խաղաղնում է իւր քաղցր ձայնը: Նա երգում և սպասում է վարդի սիրուն կոկոնների բացուելուն:

Ա Մ Ա Ռ

Ա մ ա ու ը:

Ստեղծողն իւր առատ ձեռքը բացարեց,
Արտեր, անտառներ հարստացրեց:
Ծառեր ու թփեր զարդով ծածկուեցան.
Ամենայն կողմում ծաղկունք փայլեցան:

Ազատ շրջում են հօտերը դաշտում.
Ազատ լողում են ձկները ծովում.

Այգում պտուղներն դեղնել սկսան.
Արտերում հարուստ ցանքերը հասան:

Բաշտում մանգաղներն սկսան փայլել,
Եւ անտառներում թռչնակներն երգել.
Դիւքան սիրուն է այս ստուէրներում,
Ե՛կ, հանգստացիր, մանկիկ, հովերում.
Ականջ դիր, ինչպէս մենք երգ ենք երգում,
Առատ ամառուան փառք վերընծայում:⁴

— Ու թէ ամառուան, ասաց, փառք տուէր.
Ով ամառ տուեց, Նորան օրհնեցէք:⁴

Լուսատըտիկ:

Ամառը սխուեցաւ և լուսատըտիկը վառեց իւր փոքրիկ լսպտերը: Ինչպէս մի կանաչ աստղ փայլում է նա մթութեան մէջ և մի խոտից միւսի վերայ է ընկնում:

Բռնենք նորան և խոտի հետ դնենք բաժակի մէջ: Ի՞նչի լուսատըտիկը հանդերցեց իւր լսպտերը: Չ'լի՞նի թէ ջարդեցինք մենք խեղճին: Ո՛չ, նա միայն վախեցաւ. բայց ահա նորից վառեց իւր լսպտերը առաջուան պէս: Հանգիստ թողնեք նորան այս գիշեր և վաղը մի լաւ նայենք նորա վերայ:

Ինչպէս տգեղ է այս կենդանին ցերեկը. իսկ գիշերը մարդ կարծում է, թէ նա անդամանդ է: Նորա շագանակադոյն մարմինը վերեւից տափակ է, իսկ ներքեւից դուրս ցցուած. ամբողջ մարմինը կաղմուած է տասն և մէկ խաղերից: Խաղերը կարծես հագցրած են միմեանց մէջ: Վերին օղակի տակ, ինչպէս վահանի տակ, պահվում է զուլսը, սև բեխերի և մեծմեծ սևորակ աչքերի հետ: Ուրեմն սա միջատ է և ոչ թէ ճիճու: Նա ունի վեց սև ոտներ:

Տեսնում էք դուք այս սպիտակ բծերը վերջին երեք ողների վերայ: Ահա այս բծերն են փայլում մթնումը:

Մեր լուսատըտիկը թևեր չունի—սա էգն է. բայց արուն թևեր էլ ունի, մթագոյն պինդ վերնաթևեր էլ, ինչպէս բոլոր բզեզները: Արուն նմանապէս լոյս է տալիս գիշերները, բայց որովհետև շատ լաւ է թռչում, այդ պատճառով նորան բռնելը հեշտ է:

Էդ լուսատըտիկը իւր մանրիկ ձուանները կպցնում է խոտերին: Ձուերից դուրս են դալիս թրթուրներ, որոնք իրանց մօրը շատ նման են և որոնք մի քանի ժամանակից յետոյ վառում են իրանց լսպտերները:

Մանկական յիշողութիւնից:

Յունիսի 23-ին.

Այսօր ես մէկ տօն չեմ կատարում, այլ շատ տօներ, այսօր իմ ծննդեան օրն է. երեկ մեր ուսումնարանում հրապարակական հանդէս էր և բարգէաքաշութիւն և զաւ. ինձ մի գեղեցիկ դիրք ընծայեցին. այսօր սկսուեցան արձակուրդները. վաղը մենք դիւղ ենք գնում—խալ դիւղում կան արտեր, ծաղիկներ, արօտամարգեր, անտառներ, պտուղներ, թռչուններ . . . Հիմալի է դիւղը մանաւանդ առաւօտեան և երեկոյեան. այդ ժամանակ տաւարածը արօտատեղեց քշում է դէպի դիւղը իւր կուշտ տաւարը: Ծնած կովերը բառաչում են, հորթերը նորանց պատասխանում են իրանց մանկական ձայնով: Ահա աշխատասէր տանտիկինը վերառաւ կովկիթը և տես ինչ առատութեամբ կաթը հոսում է կովի ուսած ծծերից: Շատ ուրախալի է նմանապէս նայել, թէ ինչպէս աշխատասէր գիւղացիք դերանդին ձեռներին վեր են տալիս մարգագետինների բարձր խոտերը: Ես շատ սիրում եմ հոտաւէտ խոտերի մէջ գլորուել:

Ամառը մարգագետիններում:

Մանկական յիշողութիւնից.

Տղայք, վաղը մենք ամենքս կ'գնանք հնձատեղ, ասաց մեր հայրը, և մենք այնպէս գոռգուացինք և վազ վզեցանք, որ զօրով կանգնացրին մեզ: Ես ձուկը բռնելով կարթեր էի պատրաստել, իսկ քոյրերս վերառան իրանց կողովները, որ պտուղներ հաւաքեն, և առաւօտեան լուսաբացին մեր բոլոր ընտանիքը սայլերի վերայ նստած ճանապարհ ընկաւ:

Մի ժամից յետոյ մենք շուրուեցանք լայն ճանապարհից և դնացինք նեղ շաւիղներով, իսկ վերջում բոլորով զին ճանապարհից դուրս եկանք և վերջապէս հասանք մեր փափագելի մարգագետիններին: Նրբոր մենք տեղ հասանք, արևի ոսկիափայլ ճառագայթները գեռ նոր ծածանվում էին մեծ Մպսիսի ձիւնապատ դագաթի վերայ, բայց հովիտը արդէն հնձողներով լիքն էր: Հնձողները չուխաները հանած, շապկանց զոյգ զոյգ առաջ էին քայլում բարձր խոտերի մէջ և իրանց յետեից ձգում էին կանաչ խոտերի շերտեր: Նորանցից փոքր ինչ հեռու, միւս կողմը, նորանց ընկերները փոցխով հաւաքում էին կիսաշոր խոտերը և փոքրիկ դէղեր էին կաղմում: Հովտի այս և այն կողմերում էլ սարի նման բարձրանում էին մեծամեծ դէղեր: Մէկ մարդ կանգնած էր դէղի զլսին և ճարտարութեամբ դարսում էր խոտերը, իսկ մի ուրիշը ներքեից եղանով նորան էր տալիս խոտը: Գիւղացի մանուկները փոքրիկ կոյտերը կրում էին մեծ դէղերի մօտ: Ուրախութեան աղաղակը տարածվում էր օդի մէջ, աշխատասէր մշակները գործում էին զուարճութեամբ. երգեր, ծիծաղ, բարձրաձայն խօսակցութիւն, շների հաջելը, գերանդիների զընդզընդոցը, բեռնակիր ձիաների խրոխընջոցը, եղների բառաչիւնը, անիւների մեղմ շառաչիւնը—այս բոլորը խառնուելով բնութեան երգիչների քաղցր դայլայելիների հետ, յափշտակում էին մարդու միտքը:

Ես շտապեցի ձուկը բռնել այն դետակի միջ, որ հոսում էր այդ հովիտների միջով. իսկ քոյրերս սկսեցին պտուղներ ժողովել: Յետոյ մենք շատ ուրախութիւններ արինք, թիթեռներ բռնեցինք, ծաղիկներ ժողովեցինք և

Մայր. լեզ. Բ. տ. Ն. Տ.—Ղ.

քոյրերիս հաւաքած մորու գեղեցիկ կարմրախառն հատիկներից փունջեր կազմեցինք:

Փոքր առ փոքր սկսեց մուլթն ընկնիլ. արեգակը արդէն ծածկուել էր բարձր սարերի յետեւը: Մշակները դադարեցրին իրանց գործերը, ցած դրին գերանդիները և խաչակնքելով զոհացան Աստուծուց: Աի քանի բոպէից յետոյ՝ բանւորները, գերանդիները ուսներին, ուրախ ուրախ ճանապարհ ընկան դէպի զիւղը: Փոքր տղաները խումբ կազմած ղնում էին առաջից. նորանցից մի քանիսները սրինգ էին ածում, միւսները երգելով ու պարելով հետևում էին նորանց:

Ես և քոյրերս խառնուեցանք այդ երգող դասի հետ և ամենեւին չխմացանք, թէ ինչպէս տուն հասանք:

Դուր ինչպէս հունձ դնացիր, ինչ տեսար եւ քիչ արեցիր, պատմեցէր:

Խոտի հունձ:

Դաշտի վերայ խոտ է բուրում.
Բանւորները քաղցր երգով,
Կարգ կարգ գերանդին ձեռքերում,
Երգում են խոտը վերտալով:

Այնտեղ չոր խոտ են հաւաքում.
Միւս կողմը առոյգ զիւղացին
Կեռ եղանով սայլն է բարձում.
Բարձրանում է սայլն ահագին:

Սպասելով դանդաղ սև ձին
Ինչպէս մեխուած տեղն է կանգնած,
Ականջը կախ, ոտը ծռած,
Կարծես քնած է, քարացած:

Միայն բզէզն հեռանալով
Չոր խոտի մէջ է ոստոստում,
Մերթ թռչելով, մերթ ցած դալով,
Ուրախ և անհոգ ըրզըզում:

Հնձողի երգ:

Քաջայէք ուսեր, շարժուեցէք կռներ,
Ջարկեցէք դէմքիս կէսօրեան հողմեր,
Շարժէք, թարմացրէք անսահման դաշտը.
Թող հնչի մանդաղն եւ փայլի շուրջը:
Ծաղիկնք դաշտերի, ցած զլորուեցէք,
Հնձած խոտի հետ դուք էլ չորացէք,
Ես ձեզ կ'ժողվեմ, խուրձեր կ'կապեմ,
Կէսը տաւարիս, կէսն էլ կ'ծախեմ:

Չ ու կ ը:

Տաք է . . . իսկ գետումը, եզերքի ստուերների տակ,
առոյգ ձինները խմրովին շարվում են, նորանոր առուակներ
րում նորանը համարձակ կերակուր են որոնում կամ ա-
ղատօրէն զբօսնում են: Ահա, նայեցէք, ինչպէս ձուկը ու-
րախ խաղում է ջրի յատակում:

Ձուկը, այ ձուկը, խաղա՛ որքան կամենում ես, միայն
զգուշացիր պողպատեայ կեռերից, ահա մանուկը կարթը
ձեռին նստած է ուռնու տակ և զգուշութեամբ նայում
է հեղբից:

Ձուկը չէ տեսնում մահաբեր կարթը. նորա ծայրին
հաղցրած է քաղցրահամ ճիճու: Ձուկը աղահաբար յար-
ձակուեցաւ նորա վերայ և իւր փոքրիկ բերանի մէջ առ-

ներով նորան, ցած գնաց մինչև ջրի յատակը: Մանուկը արագապէս քաշեց մազէ քուղը . . . Խեղճ ձուկը, կեանքը կարճեցաւ:

Նկարագրեցէք կարծր եւ ձկնորսութիւնը:

Ուռենի:

Ուռենի կանաչ, ուռենի սիրուն,
Ի՞նչի դու այսօր ուրախ չես ժպտում.
Մի՞թէ քեզ սաստիկ արեւն է այրում,
Արեւն է այրում, անձրեւը ծածուկում.
Արմատիտ մօտից սառ ջուր չէ՞ վաղում:

.

Հայոց աշխարհից իշխաններ անցան,
Ուռին կտրեցին—կեանքից զրկեցին.
Նորան տաշեցին, տաշորչորեցին
Եւ իրանց համար թիւեր շինեցին,
Նաւակ կազմեցին, մէջը նստեցան,
Մէջը նստեցան ու տուն յետ դարձան
Եւ ինձ, փոքրիկիս, հետները տարան:

Ագռաւը և խեղդեալները:

Ագռաւը թռչում էր լճի վերայից և տեսաւ խեղդեալներին, որ լողում էր ջրի երեսին: Ագռաւը խփեց նորան իւր կտուցով, բռնեց և կանգնեցով ուռնու վերայ, կամենում էր ուտել: Խեղդեալները տեսաւ, որ իւր օրը սեւանում է, ասաց, «Ա՛յ ագռաւ, բարի ագռաւ, ես քո հօրն ու մօրը շատ լաւ էի ճանաչում. ինչ պատուական թըռ-

չունենէր էին:—Ըհ՛ը—ասաց ագռաւը, առանց բերանը բացանելու:—«Գո քոյրերին ու եղբայրներին էլ էի ճանաչում, ամենապատուական թռչուններ էին:—Ըհ՛ը—կրկնեց ագռաւը:—«Ա՛յ, շատ լաւ թռչուններ էին, բայց քեզ որտեղ կ'հասնէին:—«Ղհա՛, ղհա՛, գռաւեց ագռաւը՝ բերանը բացանելով, և ցած զցեց խեղդեալներին ջրի մէջ:

Առիւծը և գորտը:

Առիւծը լսում է գորտի կրկնալը և ասում է ինքն իրան. «Ա՛յս գոռողը մեծ դազան պէտք է լինի հա՛:» Բայց այս խօսքերն ասելիս, մէկ էլ տեսնես, գորտը ճահճի միջից դուրս թռաւ: Առիւծը յանկարծ ջարդեց նորան իւր ուժեղ թաթով:

Գորտը և եղը:

Մի գորտ դաշտում մի եղ տեսաւ մեծ ու դեր: Չես ասիլ, որ գորտն էլ նախանձ է ունեցել. մտքից անցրեց, թէ արի մի փորձ փորձեմ, տեսնեմ կարող եմ եղանք հասկասարուեմ: Գորտը ուռչել սկսաւ, փքուեցաւ, տրոգեցաւ, դարձաւ, ընկերին ասաւ. «Նայիր, կրկնաւ ընկեր, արդեօք եղան չեմ հասել:» — «Չէ, սանտալը, ասաց նա, դու ուր տեղ ես և նա ո՞ւր. ձեր մէջը մեծ սարեր կայ:» — «Հապա հիմա, նորից նայիր, տես, թէ որքան փքուեցայ: Գէհ, ի՞նչպէս եմ, ասիր տեսնեմ, այժմ այդ եղանք կ'նմանեմ:» — «Չէ, հողի, չէ:»

«Հապա հիմա:»

—Տարբերութիւնը ոչինչ է. ինչոր էիր, էլ այն ես: Բայց մեր գորտը նորից այնքան փքուեցաւ ու փքուեցաւ, որ վերջապէս շատ ուռչելուց ճաքեցաւ:

Գայլի արտասուքը:

Գայլը լսեց, որ հովուի բոլոր հօտը կոտորուել են. նա արտասուելից աչքերով եկաւ հովուի մօտ և ասաց. «Յաւումեմ քեզ վերայ, ո՞վ բարի մարդ, շատ ու շատ ցաւումեմ:» Հովիւը նայեց գայլի արտասուքին և պատասխանեց. «Շնորհակալեմ, բարեկամ: Բայց ո՞վ զխէ, թէ ինչի եւ լաց լինում. արդե՞ք այն պատճառով, որ ցաւում ես ինձ վերայ, թէ նորա համար, որ դու ինքդ այսուհետեւ ապրելու միջոց չես ունենալ:»

Ամարային առաւօտ:

Ամարուան պարզ զիշերը անցաւ առաւօտեան հովիւ տարածուեցաւ օդի մեջ. մութ մէդերը բարձրացան ձորերից. աստղերը մինը միւսի յետեւից շեջան. լուսաստղն էլ թառամեցաւ և շեջանելուն մօտ էր. նա երկնակամարից նկատում էր, որ ամպերը վազում են դէպի արեւելք և տեսնելով արեգակին՝ ոսկիափայլ և արծաթագոյն շերտերով զարդարւում են:

Ահա և նա երեւեցաւ: Ուրախ, զուարթ բարձրանում է երկնքում ոսկեճաճանչ արեւը: Նա իւր փայլուն ճառագայթներով արթնացնում է զետակները, դաշտերը, հովիտները և անտառները: Արթնացնում է ծառերի վերայ թառ եղած թռչուններին և անտառի դադաններին, որպէս և բզեզին, որ մի փոքր հանգստացել էր իւր մամուռ պատ անկողնում: Ոսկէնման արեւը կարճ խօսքերով ասում է ամենին. «Հանգստացաք, բաւական է, այժմ ժամանակ է դորձ շինելու:»

Գիշերը ամենքը հանգստացել են ցերեկուայ դորձերից: Դաշտերը և արտերը զովարար ցօղով նորոգուած նոր

ոյժ են ստացել և ոսկէնման փայլում են առաւօտեան ճառագայթների տակ: Ծառերի տերեւները, մարդերի խոտերը, արտերի հասկերը — բոլորը նորոգուեցան, զուարթացան: Թռչունները արթնացան և սկսեցին ուրախ երգելով իրանց նախկին դորձը ձեռք առնել: Ամառուայ զիշերը թէեւ կարճ է, բայց կենդանացուցիչ է:

Մանուկները զարթեցան, վերմանկները յետ գցեցին. նորանց մանուկ անդամները բաւական հանգստացել էին. ոտքերը կամենում էին վազել. ձեռքերը դորձ էին խընդրում, զանգրապստ զլններում նոր նոր մտքեր էին ծնվում: Աղջկերքը հաղնուեցան, սառը ջրով երեսները լուացան, Աստուծուն աղօթք արին և զնային ուսումնարան: Ահա վազում են նորանք, ծլվում են ինչպէս թռչունները դաշտերում և ուրախ — զուարթ սխում են դորձերը: Արեւակը երկնքից նայում է աշխատասէր մանուկներին և ասում է քնքշաբար. «Թող Աստուած օգնէ ձեզ:»

Ձրի ճանապարհորդութիւնը:

1. Արդեօք ո՞ւմ հարկաւոր չէ ջուրը: Բոյսերին, դաղաններին, թռչուններին և մարդկանց հարկաւոր է նա: Ահա թէ ինչի Աստուած լցրեց ծովերը և ովկիանոսները ջրերով:

Բայց ծովի ջրերը աղի են և դառն: Այդ փնա չունի, որովհետեւ ամենքը ծովի մօտ չեն բնակւում: Բայց ի՞նչպէս մարքինք ջուրը, ի՞նչպէս տանելք մենք նորան ծովերից հաղարաւոր մղն հեռու. ի՞նչպէս բարձրացնենք նորան սարերի զլուխը:

Աստուած այս դորձը յանձնել է աշխատասէր արեւին: Իւր տաք ճառագայթներով արեւը ջուրը թիթեւ դողր-

չինքն է դարձնում. ջրի գոլորշիները իրանց միջի աղային մասերը թողում են ծովերում և իրանք բարձրանում են և թանձրանալով երևում են արծաթափայլ ամպի կերպարանքով, կապոյո երկնականարի վերայ:

2. Գոլորշիները բարձրանալով թանձրանում են և ամպ են դառնում. բայց նորանք չեն կանգնում ուղղակի ծովի վերայ: Այստեղ քամին սկսում է իւր գործը և ահազին ամպերը թեթեւ փետուրի նման քշում է դէպի լոյս աշխարհի ամեն կողմերը: Ամեն մէկ ամպի մէջ այնքան ջուր կայ, որ եթէ նա միանգամից ցած թափուէր, կը ծածկէր քաղաքներ, գիւղեր, մարդկանց և կենդանիներին: Բայց Աստուած գործը ուրիշ տեսակ է կարգադրել. ամպերից կաթկաթում է անձրևի փոքրիկ կաթիլները, ինչպէս ալիւրը մաղի մէջից, կամ սառչում ու թափվում է ինչպէս ձիւն:

3. Ջուրը թարմացնում է հովիտները և արտերը և հողը նորան իւր ներս է ծծում: Հողի տակ աւելորդ կաթիլները միմեանց յետեւից հաւաքվում և կազմում են ստորերկրեայ փոքրիկ զոհակներ, մի քանի զոհակներ խառնվում են միմեանց հետ և մի ճանապարհ գտնելով դուրս են բղխում երկրի երեսը սառն աղբիւրի ձևով: Աղբիւրը բղխում է և առուակ կազմելով առաջ է խաղում: Ագուակը իրան համար ճանապարհ է պատրաստում, փոքր առ փոքր հողը քանդում է և սկսում է քարերի վերայ խոխոջալով առաջ գնալ: Պատահում է, որ նա ճանապարհին հանդիպում է մի իւր նման շատախօսի և նորահեա եղբայրանալով, ձայն ձայնի տուած, առաջ են խաղում: Նորանք միմեանց հետ առաջ են գնում. իսկ նորանց պատահում են ճանապարհին երրորդ, չորրորդ և հինգերորդ առուակներ . . . Նորանք ամենքը խառնվում են մի-

մեանց հետ և բարեկամաբար առաջ են հոսում: Նայում տեսնում ես, որ ահա այս եղբայրական միութենից մի կանոնաւոր դետակ է կազմուել: Այդ դետակը ջուր է տալիս մարդկանց, կենդանիներին, թարմացնում ու զովացնում է դաշտերի ծարաւ բոյսերին, պտտացնում է ջրաղացների երկանները, կրում է իւր վերայ լաստեր և թեթեւաւիներ. իսկ նորա սառն գոհակների մէջ խաղում են ուրախ ձկները, փայլելով իրանց արծաթագոյն թեփերը:

4. Գետակը վազում է—խառնվում է ուրիշ գետակի հետ և միասին առաջ են դնում: Ճանապարհին նորանց հետ խառնվում են ուրիշները և այսպիսով կազմում են մի ահազին գետ, որը ունենում է բազմաթիւ վտանկեր և անցնում է մի թագաւորութիւնից միւս թագաւորութիւն. երբեմն միւսնոյն դետը անցնում է շատ մանր տէրութիւններով և նորանց ամենին էլ բաշխում է իւր առատ ջրից: Լողում են գետերի վերայ ծանր նաւեր, որոնք բարձած են լինում զանազան ապրանքներով: Անցնում են նորանց վերայով առաքատաւոր նաւեր, իսկ եղբայրների մօտ շինվում են արուեստագործուած գիւղեր և վաճառականական քաղաքներ, մինը միւսից հարուստ: Գետը մեծամեծ հարստութիւններ է տանում մէկ երկրից միւսը կամ դէպի հեռաւոր ծովեր և իւր լայն բերանով ոչ թէ փոքրիկ նաւակներ, այլ մեծամեծ նաւեր, թեւանման առագաստներով զարդարուած, ծովն է մտնում:

Գետերից շատ ջուր է թափվում ծովերի մէջ. բայց արեգակն էլ հանդարտ չէ մնում. նա նորանոր գոլորշիներ է բարձրացնում, ամպեր է կազմում և ամբողջ աշխարհին անձրև է բաժանում:

Գետերը դարերով թափվում են ծովերի մէջ և նորան երբեք չեն լցնում. արեւն էլ յաւիտեան գոլորշի է

բարձրացնում ծովերից, բայց երբէք նորան չէ ցամաքեցնում: Այսպէս ամենխմաստ կերպով է կարգադրել Աստուած այս բանը:

Կարգով սլատակեք, թէ ինչպէս է ճանապարհորդում ջուրը:

Մանուկն ու ջուրը:

Այդ վայրի սարիցդ ի վայր,
Ջուրն շէնի մէջ էր անցնում:
Մի թուխ մանուկ դուրս է եկել,
Ձեռքն ու երեսն է լուացել.
Դարձել է ջրին հարցրել.
«Ջուր, դու ո՞ր սարից կ'դաս,
Իմ պաղէկ ջրիկ, անուշիկ?»
— Ես այն սարիցը կ'դամ,
Որ հին ու նոր ձիւնն է վերան:
«Ջուր, դէպի ո՞ր առուն կերթաս,
Իմ պաղէկ ջրիկ, անուշիկ?»
— Ես դէպի այն առուն կերթամ,
Ուր բուսնում է փունջ մանուշակ:
«Ջուր, դէպի ո՞ր այգին կերթաս,
Իմ պաղէկ ջրիկ, անուշիկ?»
— Ես դէպի այն այգին կերթամ
Որ ճէրն մէջն է այգեպան:
«Ջուր, դու ո՞ր տունի կ'ջրես,
Իմ պաղէկ ջրիկ, անուշիկ?»
— Ես այն տունիք կը ջրեմ,
Որ տակը խոտ բերէ գառին.
Տակը խոտ բերէ գառին,
Ծառն խնձորի, հազար վարդին:

«Ջուր, դէպի ո՞ր պարտէզ կերթաս,
Իմ պաղէկ ջրիկ, անուշիկ?»

— Ես դէպի այն պարտէզ կերթամ,
Ուր բլուրը քաղցր կ'երգէ:

«Ջուր, դու ո՞ր աղբիւր կերթաս,
Իմ պաղէկ ջրիկ, անուշիկ?»

— Ես այն աղբիւրը կերթամ,
Որ գայ քոյրս ու ջուր խմէ.
Դէմ դամ, դունչը համբուրեմ,
Ապա սէրը վայելեմ:

Գիւղացիք և գետը:

Վտակները և գետակները սաստիկ վնասներ էին տալիս գիւղացոյց. նորանց վարուցանքը փչացնում էին իրանց յորդանալու ժամանակ, այնպէս որ խեղճ գիւղացիք էլ չ'կարողացան համբերել և գնացին գանդատուելու այն գետին, որի մէջ այդ վտակները և գետակները թափվում էին: Եւ շատ գանդատուելու բաներ կար, մի տեղ աշնացանն էր հեղեղը տարել, միւս տեղ ջրաղացն էր քանդել, քարուքանդ արել. շատ ու անթիւ անասուններ ջրի կերակուր էին դառել: Իսկ այն գետը, որի մօտ գանդատ էին գնում, թէ և փառահեղ, բայց հանդարտ առաջ էր հոսում. նորա մօտ շինած են շատ մեծամեծ քաղաքներ, բայց այդ քաղաքների մարդիկը ոչ մի անգամ նորանից չեն գանդատուել, որովհետեւ նա մարդկանց ոչինչ վնաս չէ տուել: Այսպէս մտածելով մեր գիւղացիք մօտեցան մեծ գետին: Բայց ի՞նչ . . . Իրբ որ գետին մօտկից նայեցին, տեսան, որ իրանց հարստութեան մեծ մասը նորա վերայ լողալով գնում էր:

Արաքսի արաաութը:

Մայր-Արաքսի ավերակ քայլամուր գնումեմ,
Հին—Հին դարուց յիշատակ ավեաց մէջը պըտումեմ.
Բայց նոքա միշտ յեղ յեղուկ պըղտոր ջրոյ եղերքին
Դարիւ դարիւ խրմելով փախչում էին լալաղին:
—Արաքս, ինչո՞ւ ձրկանց հետ խաղ չես բռնում մակական,
Դու դեռ ծովը չի հասած՝ սըղաւոր ես ինձ նման:
Ինչո՞ւ արցունք ցայտում են, քո սէգ, հըպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես այդ հարազատ ավերից:
Մի՛ պղտորիլ յատակդ, հանդարտ հոսէ խայտալով,
Մանկութիւնը քո կարճ է.—շուտ կ'հասնիս դէպ'ի ծով:
Վարդի թփեր թող բուսնին քո հիւրընկալ ավի մօտ,
Սոխախները նոցա մէջ երգեն մինչև առաւօտ:
Մըշտադալար ուռիներ, սառ ծոցի մէջ քո ջրին,
ձըկուն ոստն ու տերեւ թող թաց անկն տապ օրին:
Ափերիդ մօտ երգելու հովիւք թող դան համարձակ,
Գառն ու ուրը քո վճիտ ջուրը մրսնեն միշտ արձակ—
Մէջքը ուռցուց Արաքսը, վըրմուր հանեց իւր տակից,
Ամպի նըման գոռալով՝ էսպէս խօսեց յատակից.
—Դիզակ, անմիտ պատանի, նիրհըս ինչո՞ւ դարեւոր
վըրդովում ես, նորոգում իմ ցաւերը բիւրաւոր:
Դիւրեւի մահից յետ երբ ես տեսել, որ այրին
Ոտքից զըլուխ պըճնուի իւր զարդերով թանկազին:
«Որի՞ համար զարդարուիմ, որի՞ աչքը հրապուրեմ»,—
Հատերն՝ ինձ են ատելի, շատերին՝ ես օտար եմ:
Կար ժամանակ, որ ես-էլ շքեղազարդ հարսի պէս
Հաղար ու բիւր պըչրանքով փախչում էի ավերես.
Յատակըս պարզ ու վըճիտ, կոհականներըս ոլորուն.
Լուսաբերը մինչև այդ ջրիս մէջին էր լողում:

Դի՛նչո՞ւ մընաց այն օրից, որ ջըրամօտ դիւղերըս,
Ո՞րը իմ շէն քաղաքից, որ բերկրաւ տեղերըս:
Դժուրը ջրի ամեն օր իր սուրբ ծոցէն Արաաա
Մայրախընամ ինձ արնունդ պարգևում է լիառատ.
Դի՛նչո՞ւ ես այն սուրբ ջրերով, սուրբ-Ակօբի աղբիւրին
Պիտի ցողեմ արտօրայք իմ ատելի օտարին:
Կամ կենսատու իմ ջրով, ավերիս մօտ կըկըղած
Իւր նամազը կատարէ թուրք կամ պարսիկը հոտած:
Մինչ իմ որդիք—նվ գիտէ—ծարաւ, նօթի, անտէրունչ
Օտար աշխարհը յաճում են թոյլ ոտքերով, կիսաշունչ . . .
Դէռու, հեռու քըշցին բընիկ աղզը իմ Հայկեան,
Նորա տեղը ինձ տուին աղգ անկրօն, մոլեկան:
Դոցա համար զարդարեմ իմ հիւրընկալ ավերը,
Եւ կամ՝ դոցա՞ հրապուրեմ ճըպոտ, պըլած աչերը:
Դի՛նչո՞ւ որ իմ զաւակունք այսպէս կու մընան պանդուխտ,
Ինձ միշտ սըղաւոր կըտեսնէք, այս է անխաբ իմ սուրբ ուխտ:
Ել չի խօսեց Արաքսը, յորձանք տուեց ահաղին,
Օղակ օղակ օձի պէս առաջ սողաց մոլեղին:

Սագեր և կռունկներ:

Սագերը և կռունկները միասին արածում էին դաշ-
տումը: Հեռուից որսորդներ երևեցան: Թեթև կռունկները
բարձրացան և թռան, իսկ ծանր սագերը մնացին և որ-
սորդները նորանց կոտորեցին:

Սմառը դաշտումը:

Ուրախ և ազատ է լինում մարդ բնդարձակ դաշ-
տում: Մինչև հեռաւոր անտառի կապոյտ եփրաղիծը

բլրակների վերայով, կարծես օրօրունելով, տարածվում են դոյնդոյն արտեր: Ոսկեգոյն հաճարը ծածանվում է, ներս ծծելով կենսատու օդը: Կապտում է դեռահաս դարին, սպիտակում է ծաղկած սեմինդրը (եգիպտացորենը) դարձաբուլ կարմիր ցողունով և վարդակարմիր մեղրաբեր ծաղիկներով: Ճանապարհից փոքր ինչ հեռու կարծես թախ է կացել գանգրաւոր սիսեռը, նորա միւս կողմը տարածուած է բաց կանաչ վաշի արտը իւր կոլորիկ գլուխներով և կապուտակ աչիկներով: Բայց ահա ճանապարհի միւս կողմը տարածուած են ցորենի ձոխ արտերը և բարեկամաբար ողջունում են իրանց միւս եղբայրակիցներին:

Արտուտը դայլայլում է արտերի վերայ բարձրանալով, իսկ սրաթև արծուին իւր հեռանկատ աչերով նայում է երկնքից. նա տեսնում է շատախօս լորին խիտ արտերի մէջ և դաշտային մկանը, որը հատիկներ է կրում իւր բունը, որոնք արդէն հասած հասկերից թափվում են:

Ամեն կողմից հազարաւոր դմայլիկ ձայներ են լսվում, իսկ մեծ ճանապարհով, երկու ջուխտ եղը լծած, ճրճիւռալով առաջ է գնում չոր խոտով բարձած ուղղը և օդը լցնում է անուշահոտութեամբ:

Ա ը տ:

Իմ արտ, սիրուն արտ, Ծով ես ձեռացնում:
Դու արտ ոսկեզարդ, Քեզ վերայ երդելով
Արեւում ես հասնում, Արտոյան է թռչում.
Հասկերդ լցնում: Ամպը դռալով
Երբ հանդարտ քամին Վլսիցդ է անցնում:
Վերադ է փչում, Հասնում ես, կարմրում
Աջ, ձախ ձօճալով Հասկերդ լցնում:

Բայց քեզ ցանողի Կարկտաբեր ամպեր.
Հոգար չես դիտում: Աստուած, պահպանիր
Քանի, դու քշիր Մեր յոյսը—արտեր:

Ա ը ծ ի ւ:

Թխաթև արծիւը բոլոր թռչունների թաղաւորն է: Նա շինում է իւր բունը ժայռերի և մեծ կաղնիների վերայ: Նա շատ բարձր է թռչում, հեռու է տեսնում և արեւին նայում է, առանց աչքերը թոթափելու:

Արծուի կտուցը մանդաղաձև է, չանկերը կարթաձև, թևերը երկար են և սուր, կուրծքը հսկայական—դուրս ցցուած:

Արծիւը ամպերի մէջ է սլանում, և շատ բարձրից նկատում է իւր որսին: Նա յարձակվում է սրապոչ բադերի, կարմրաթաթ սաղերի և խաբեբայ կ'կունների վերայ, և միայն փետուրների ցրուելն ես տեսնում:

Համեմատեցէք արծիւը հաւի հետ:

Շահէն վանդակում:

Ողբում է, լաց է լինում երիտասարդ շառատ շահէն, նստած վանդակի արծաթէ թառի վերայ: Շառատ շահէն դանգատվում է իւր թևերի, իւր հիմնական փետուրների վերայ: Ե՛յ, դուք թևեր, իմ թևեր, իմ հիմնական փետուրներ, դուք ինձ պահպանեցիք քամուց ու փոթորիկից, ցրտից ու անձրևից, միայն, ո՛վ թևեր, դուք ինձ չ'ազատեցիք տխուր դերութիւնից—ոսկէ վանդակից, արծաթէ թառից:

Երաշտ:

Ամառը չորէին էր: Արեգակը օրէցօր բարձրանում էր պարզ երկնքի վերայ: Ճանապարհին թողը ամբի նման տարածվում էր: Երկիրը քարի նման պնդացել ու ճաք-ճք քոտել էր: Առուակները ցամաքել էին: Ծաղիկները տխուր-թեամբ կախել էին իրանց զլուխները: խոտերը դեղնել էին, նորահաս արտերը թառամել էին: Երկրագործը տխուր-թեամբ նայում էր իւր արտերին և ասում. «Ստուգած իմ, ինչոր ինձանից կախուած էր, արեցի, հողը որքան կարելի էր խոր ցեղցի, ուշադրո թեամբ փոցխեցի և ընտիր սերմով սերմեցի—այժմ թող լինի քո սուրբ կամքը:

Ի՞նչ արեց երաշտը:

Քոյսերի կերակուրը:

Պայծառ երկնակամարի վերայ ամպեր երևեցան, փոքր առ փոքր նորանք թանձրացան և սև կեղևով ծածկեցին կապոյտ երկինքը, իսկ երեկոյեան կենսատու անձրևը ջրեց արօտամարդերը և արտերը: Գաշտային թառամած բոյսերը զուարթացան, նորանք անտեսանելի կերպով ծծեցին իրանց բարակ արմատներով թաց հողի սննդարար հիւթը: Խոտը կանաչեցաւ. ծաղիկները բարձրացրին իրանց թառամած զլուխները, ծառերի փայլուն տերևները ազահաբար ներշնչեցին խոնաւ օդը: Ուրախ զուարթ տատանուիլ սկսեցին ցորենի, գարու և վարսակի արտերը և աւազ արազ լըրին իրանց քստալի հասկերի նիհար հատիկները:

Ի՞նչով են կերակրվում բոյսերը: Ի՞նչ հարկաւոր է նորանց անձրևը:

Տ ու ն ձ:

Կերթամ կ'տեսնեմ
Եւ կ'ուրախանամ,
Ինչոր Տէր Աստուած
Մարդկանցը տուաւ:
Գօտկիցս բարձր
Ցորենի արտը
Այս ու այն կողմը
Ճոճում է հասկը:

Կարծես հրեշտակը
Ամենայն կողմում
Ուրախ ու զուարթ
Ծիծաղ է շնորհում:
Քամին արտի վրայ
Մեղմիկ է փչում,
Այլքանման ձեմով
Առաջ է գնում:

Ով է քիթը ցից պահում:

Որդին ասաց հօրը. «Հայրիկ, խնդրեմ ասես ինձ, ի՞նչի մի քանի հասկեր կռացել են մինչև դետին, իսկ միւսները դէպի վեր են ցցուած:»

— Ինչ հասկ որ լիքն է, կռանում է դէպի դետին. իսկ որն որ դատարկ է, նա զլուխը վեր է պահում:

Թաժայ հաց:

Ախրակէի արևը ծածկուեցաւ անտառի յետև: Միւս առաւօտ զիւղացին իւր որդոց հետ դուրս գնաց դէպի դաշտը և ուրախ ուրախ նայեց մարգագետինների և արտերի վերայ: Մարգագետիններում կանգնած էին արդէն մեծամեծ խոտի դէղեր. իսկ արտերում դեռ տատանվում էին հասած ցորենի հասկերը: Գիւղացին խաչակնքեց և ասաց. «Օրհնե՛ք Աստուծուն, որդիք, այս տարի մեր տաւարը խոտ կուենայ և մենք էլ հաց:» Գիւղացին պոկեց մէկ հասկ, արորեց իւր ալի մէջ, նայեց և տեսաւ, որ հատիկները մզացել են, և տտամիտակը կոտրելով և տեսաւ, որ

տրաքում է: Պ'րդիք, ժամանակ է հնձելու. ձեր մայրը երեկ ամբարի վերջին ալիւրը մաղեց:»

Միւս օրը, թէ մեծ և թէ փոքր, բոլորը դուրս թափուեցան դէպի արտերը: Խուրձերը արագութեամբ շարուեցան միմեանց յետեւից. իսկ երեկոյեան արդէն բարձր տանեակներ և երեսնեակներ կարգով կանգնած էին արտումը:

Դեռ հունձը չէր վերջացել, որ կամը սկսեց պտուել կալի վերայ: Հայրը մի բեռը ցորեն տարաւ ջրաղացը և այնտեղից ջերմակ ալիւր բերեց: Մայրը խաշ ճարեց, խմոր հուեցեց, իսկ միւս օրը երեսայքը արդէն ուտում էին նոր ցորենից պատրաստուած անուշահոտ հաց:

Ինչպէս են իմանում թէ ցորենը հասել է եւ իմանալուց յետոյ ինչ են անում:

Վար ու ցանք:

Որդին տեսաւ, թէ ինչպէս է հայրը արտերը բարեւքում, ինչպէս է գետինը հերկում—ցելում, ցելը փոցխում, սերմում ու ցաքանում. յետոյ ինչպէս է ցանած արտը կանաչում, կանաչը բարձրանում, հասկ դցում: Հասկը ինչպէս է ծաղկում և պտուղ տալիս: Յետոյ երբ ժամանակը գալիս է, ցորենը հասնում է. հասած ցորենը հընձում են մանգաղներով, չիններով: Հնձած ցորենը խուրձեր են կապում, տանեակներ և երեսնեակներ են կազմում, յետոյ սայլով կրում են ու կալապանի տակ դէղում: Գիւղացիք առաջ կալը քաղհանում են, ջրում են, ապա մաքուր կալում հաշանք փռում են, կամներով կալում, եղանով եղանում, մղանով մղանում, կալալով սրբում ու կալի մի անկիւնում սարի նման թեղ են դնում: Աւ-

րախալի է տեսնել, ինչպէս աշխատասէր դիւղացիք, թեղի վերայ բարձրացած, հինգ մատանի հոսելիով թեղը քամում են—դարմանը ցորենից ջոկում են: Գիւղացին դարմանը ածում է մարաղը իւր տաւարի համար, իսկ ցորենը լնում է իւր հորերը և ամբարները: Ինչքան իրան ամբողջ տարին հարկաւոր է, գիւղացին վերցնում է, իսկ մնացածը ծախում է:

Պատմեցք, թէ ինչպէս են մշակում արտը եւ պատրաստում ցորենը:

Ամառը անտառում:

Անտառում այն ընդարձակութիւնը չ'կայ, ինչորդաշտումը, բայց ամառուայ շոգ օրերին անտառը շատ աստիճանի է: Եւ ինչ չ'կայ անտառում: Բարձր կարմրագոյն մայրիները կախել են իրանց փշոտ գագաթները: Լայնատերեւ և հսկայակազմ սօսիները իրանց կոծոծների և թաթածեւ տերեւների սօսափիւնով անցողի ուշքը գրաւում են: Մոխրագոյն բարդի ծառը շարժում է իւր փնջածեղ գագաթը, իսկ հաստարմատ կաղնին իւր վրանածեւ ճիւղերը տարածում է իւր շուրջը: Չորս կողմից բարձրանում են շատ հասարակ ծառեր. հացի, բոխի, թխկի, հաճարի: Այս չէ բոլորը: Շատ փոքրիկ բայց պտղատու ծառեր էլ կան անտառում. ահա հունը կարմրին է տալիս հեռուից, նոյնպէս վայրերի տանձ ու խնձորը զարդարում են ծառերը: Խոտերի միջից մորու սպիտակ ծաղիկն է փայլում, իսկ նորա մօտ արդէն կարմրել է գեղեցիկ համեղ պտուղը: Անտառային շուշանի սպիտակ զիւնները օրօրվում են կրկար ու հարթ տերեւների միջից: Միւս կողմից կարծրակտուց կոցահարը կտկրտում է ծառերը. սեւ սարեակները

Թնդարցնում են օգր իրանց երգերով, իսկ անտուն կ'կուն համարում է իւր կեանքի օրերը: Մոխրագոյն նապաստակը ահա Թփի տակը մտաւ, իսկ սկիւռը շարժեց իւր խաւոտ պոչը ճիւղերի միջեց: Ահա հեռուից էլ մի ձայնէ գալէս. մինը ծառերի ճղները ջարդում—փշրում է. սա Թաթեղ արջն է, որ իւր համար պտուղներ է պոճոկում:

Ի՞նչ բոյսեր, դազաններ և թռչուններ էր տեսած ինքներդ անտառում:

Ծառերի վէճը:

Ծառերը վիճեցին միմեանց հետ, Թէ նորանցից որն է լաւ: Կաղնին ասաց. ես բոլոր ծառերի Թաղաւորն եմ. իմ արմատս զետնի մէջ խորն է մտած, բունս հաստ է, գազաթս երկնքին է նայում. իմ տերեւներս կորրտուած, իսկ ճիւղերս կարծես երկաթից ծուլած լինին: Ես փոթորիկների առաջ չեմ խոնարհվում, կայծակների առաջ չեմ ընկճվում:

Սոսն ժպտաց այս խօսքերի վերայ. «Դատ ես պարծենում—ասաց նա—դու մոռանում ես, որ ինձ նման ծառ ողջ հայաստանումը չկայ. արմատներս անդունդն են հասնում, դազաթս ամպերի մէջ է խաղում: Ես հարիւրաւոր ճղներ ունեմ, ամեն մի ճիւղս քո բունիցդ հաստ: Իմ Թաթանման արեւներս նայիր, որոնց մօտ քո տերեւներդ այնպէս են, ինչպէս ճանձր ուղտի մօտ: Իսկ իմ բունս . . . նորա փչակում կարող են մարդիկ կարիք օրը տեղաւորուել: Համեստութիւն արեցիր, պտուղներդ է՛լ յիշեցիր. բայց նորանք էլ խողերին են քեզ մօտ հրաւիրում, իսկ իմ կոծոճներս Թէեւ անուցիչ չեն, բայց տերեւներիս հետ ձեռք ձեռքի տուած սօսելով, յողնած և արեւից տոչորուած

անցորականին իրանց ստուերի տակն են տունում—արեւից, անձրեւից պաշտպանում:

Խնձորենին լսեց այս երկուսի խօսակցութիւնը և ասաց. «Դուք երկուսդ էլ շատ էք հպարտանում, բայց ասացէ՛ք, դուք տալիս էք մարդկանցն այն, ինչոր նորանք ինձանից են ստանում: Նայեցէ՛ք իմ կարմրախառն խնձորների վերայ. նորանք մինչև անգամ Թաղաւորի սեղանն էլ զբոլորում են:

Սոււմ է մայրին, շարժում է իւր փշտո գլուխը և ասում է. «Սպասեցէ՛ք, շուտով կ'գայ ձմեռը և դուք ամենքդ էլ կ'մերկանաք, իսկ ինձ վերայ միշտ կ'մնան իմ կանաչ փշերը: Առանց ինձ ցուրտ երկիրներում ապրել չէ կարելի. ես նորանց վառարանները տաքացնում եմ, և նոքանք իմ փայտից իրանց համար խրճիթներ են շինում:

Համեմատեցէ՛ր կաղնին սօսի ծառի հետ, մայրին խնձորենու հետ:

Նապաստակի գանդատը:

Պողոթողում, լաց էր լինում մոխրագոյն նապաստակը Թփի տակը նստած. լաց էր լինում և ասում:

«Աշխարհումս իմ վիճակից վատ վիճակ չ'կայ: Եւ ո՛վ կայ, որ չ'սրի իւր ատամները ինձ վերայ: Որսորդները, շները, գայլը, աղուէսը և զիշատող Թռչունները. կորակտուց բազէն, խոշորակն բուն, մինչև անգամ յիմար տգռաւն էլ իւր ծուռ ճանկերով յափշտակում է իմ սիրուն ձագերին: Ամեն կողմից ինձ փտանգ է սպառնում, իսկ պաշտպանելու միջոց չունիմ. ես սկիւռի նման չեմ կարող ծառերի վերայ բարձրանալ. ճաղարի նման որջեր փորել զետնի մէջ: Յշմարիտ է, Թէեւ իմ ատամներս յաջողապէս կ'ստանան կաղամբը և արմատեղէնները, բայց նորանցով

ուրիշներին կծելու համարձակութիւն չ'ունիմ: Վաղելում ես վարպետ եմ և վատ չեմ թռչկոտում. բայց լաւ կ'լինէր, եթէ միշտ յաջողուէր ինձ ուղիղ դաշտի վերայ կամ դարիւր վաղել, բայց եթէ դարիւր վաղելու ստիպուեմ այն ժամանակ գլխիւայր եմ գալիս և գլորվում, որովհետեւ առաջին ոտներս կարճ են:»

Էլի մի կերպով կարելի էր ապրել, եթէ այս անիծած երկչոտութիւնը չ'լինէր: Հենց որ մի շնչոց եմ լսում, ականջներս դիւր են լինում, սիրտս տրոփ—տրոփում է. դուրսը չ'ծագած դուրս եմ փախչում թփի տակից, բայց էլի ուղղակի կամ թակարդի մէջ եմ ընկնում կամ փռվում եմ որսորդի ոտքի տակը:

Այն, վատ է խեղճ նապաստակիս վիճակը: Խորամանկութիւն ես անում, ծածկվում ես թփերի տակ, կաղամբի տակն ես պառկում, յետքերդ մոլորում ես, բայց էլի, վաղ թէ ուշ, փորձանքից չես ազատվում, և երկար ականջներիցդ բռնած խոհանոց է տանում քեզ խոհարարը:

Մի մխիթարութիւն միայն ունիմ, որ պոչս շատ կարճ է. շունը բռնելու տեղ չի ունենալ: Եթէ ես այնպիսի պոչ ունենայի, ինչպէս աղուէսը, ի՞նչ կ'լինէր իմ ձարը: Այն ժամանակ, անպատճառ, կերթայի և կ'սեղողուի:»

Համեմատեցէք աղուէսը նապաստակի կատուի հետ:

Սանահայր աղուէսը:

Սանահայր աղուէսի ատամները սուր սուր են, դունչը բարակ, ականջները դիւր դիւր, պոչը ուղղաձիգ, քուրքը տաք—փափրիկ:

Լաւ է զարդարուած մեր սանահայրը. բուրդը փափուկ է և ոսկիափայլ, կրծքին ունի լաւ կրծկալ, իսկ պարանոցին փողպատ ունի կապած:

Աղուէսը մանկ գալիս կամաց կամաց, կռանում է դէպի դետին, կարծես թէ քեզ գլուխ է տալիս. իւր բրդոտ պոչը զգուշութեամբ է պահպանում. նայում է քնքուշ կերպով. ժպտում է իւր սպիտակ ատամները ցոյց տալով:

Աղուէսը խելացի է. խոր խոր որջեր է փորում, նորանց մէջ շատ մուտքեր է պատրաստում, ներքնատուն և ննջարան է շինում և յատակը փափուկ խոտով ծածկում է:

Աղուէսը լաւ առն է կռաւարող կ'լինէր, եթէ փոքր ինչ գող չ'լինէր: Նա սիրում է բաղեր, վարպետութեամբ ծալում է չաղ սագերի պարանոցը և ճագարներին էլ չէ խնայում:

Համեմատեցէք աղուէսը նապաստակի հետ:

Արթուած արջը:

«Տղայք, տղայք, կանչեց մայրը. եկէ՛ք, արջին նայեցէք:»

Մանուկները դուրս վաղեցան սրահը. իսկ այնտեղ արդէն ժողովուած էին շատ մարդիկ:

Մարաւաւոր առն գիւղացին, մէկ մեծ երկաթե ցից ձեռքին, արջի շրթունքից շրթայ անցկացրած պարէր ածում. իսկ մի փոքրիկ տղայ էլ թմբուկ էր թակում:

— «Հապա, արջ, ասաց գիւղացին, ձրգձրգելով շողթայից. կանգնիր, բարձրացիր, այս ու այն կողմ տատանուիր, պատուելի պարոններին գլուխ տուր, շնորհքդ ամենին ցոյց տուր:»

Արջը մռնչաց, ականցից կանգնեց յետին թաթերի վերայ և սկսեց օրօրուելով առաջ գնալ, աջ ու ձախ գլուխ տալ:

— «Հապա, արջ, շարունակեց գիւղացին, ցոյց տուր,

Թէ փոքր երեխանները ինչպէս են սիսեռ գողանում. ուր որ չոր է փորագլ տուր, իսկ ուր չոր չէ. չոքեչոք գնահ:

Արջը սողաց, փորի վերայ վայր ընկաւ, Թաթով զլուխը քորեց, մազերից քաշեց, իբր Թէ սիսեռ է պոկում:

— Այժմ, ցոյց տուր, Թէ պառաւները ինչպէս են դործի գնում:

Արջը գնում է, գնում ու էլի գանգնում, դէպի յետ նայում, Թաթով ականջի տակը քորում, մտածում:

Մի քանի անգամ արջը զայրացաւ, գոռաց, չ'ուզեց վերկանգնել. բայց շղթայի երկաթէ օղակը, որ անց էր կացրած նորա շղթունքի մէջ և գիւղացու ձեռքի երկաթէ ցիցը խեղճ դազանին ստիպում էին հնազանդուիլ: Նրբոր արջը իւր բոլոր հնարազիտութիւնը ցոյց տուեց, դիւղացին ասաց:

— Նայա՛, արջ, երկու ոտիդ վերայ առաջ գնա՛, պատուերն պարոններին զլուխ տուր. միայն մի՛ ծուլանար, ցած խոնարհուի՛ր. զլսարկդ վերառ, եթէ հաց գնեն մէջը, ինքդ կուտես, իսկ եթէ փող—ինձ կ'երես:

Արջը զլսարկը վեր առած, յետին ոտների վերայ օրորուելով առաջ գնաց, մէկ մէկ անցկենալով բոլոր նայողների առաջով:

Երեխաները զլսարկի մէջ կապէկանոցներ գցեցին. բայց նորանք շատ խղճացին արջի վերայ. խեղճի շղթունքներից արիւն էր կաթկաթում:

Նստալստակը և ողնին:

Սպիտակ քնքուշ նստալստակը ասաց ողնուն. «Ն'դ բայր, ինչ ծակծրկող ու տգեղ զգեստ ունես:» — Ճշմարիտ է—պատասխանեց ողնին—բայց իմ ծակծկող փշերը ազատում են ինձ շան և դայլի ատամներից. նոյն ծառայութիւնը անում է քեզ քո գեղեցիկ մուշտակը:

Կտցահար:

Խոր անտառի մէջ սև կտցահարը ծառերի վերայ հիւսնութիւն է անում. Թըխի-Թըխի-Թըխի, չանկերով պինդ կաշում է, պոչը դէմհար է տալիս, կտուցով Թըխի-Թըխի կանգնում և միջիւններ ու միջատներ է դուրս քշում կեղևի տակից, բնափայտի չորս կողմնէլ արագութեամբ պլտոյտ պտոյտ է անում և ոչ մէկ միջատի աչքից չէ դրջում: Միջատները վախեցան. այս լաւ բան չէ, ասացին: Նորանք երկիւղեց խոր մտան, լաւ պահուեցան կեղևի տակ և չ'կամեցան դուրս գալ: Կտցահարը սկսեց. Թըխի-Թըխի-Թըխի. ծառի կեղևը ծակեց, երկար լեզուն ներս մտցրեց և միջիւններին ձկների նման դուրս քաշեց:

Համեմատեցէք կտցահարը արծուի և հաւի հետ:

Կկու:

Մոխրագոյն կկուն անտուն և ծոյլ Թռչուն է. նա ինքն իրան համար առանձին բուն չէ շինում. ուրիշները ներումն է ձու գնում, իւր զաւակները ուրիշն է յանձնում անդելու և հեռու կանգնած նորանց վերայ ծիծաղում է ու հպարտ հպարտ կրկնում իւր որձակի առաջ. հա՛, հա՛, հա՛, նայի՛ր, սիրելի ընկեր, ես զրախտապանի համար ձու եմ ածել: Պիտի նորա հպարտ արուն ծառի վերայ նստած՝ իւր պոչը չռեց, Թռերը ցած Թողեց, վիզը ձգեց, զլուխը այս կողմն, այն կողմը շարժեց և սխեց երգել—իւր օրերը համարել:

Համեմատեցէք կկուն կտցահարի հետ:

Մայր. լեզ. բ. տ. Ն. Տ.—Ղ.

Արձականք:

Թէ գաղանն է անտառի մէջ մռնչում,
 Թէ եղջիւրը — կամ ամպերը որոտում,
 Թէ այս կամ այն կողմերից երգ են երգում —
 Ամեն ձայնի
 Իւր արձականքը ընդարձակ օղում
 Կ'պատասխանի:

Մանկական յիշողութիւնից:

Օգոստոսին.

Շատ ժամանակէ ևս իմ յիշատակարանումն ոչինչ
 չեմ գրել. ամբողջ ամառը ես դորա համար ժամանակ
 չ'ունէի: Այժմ մենք էլ այնքան չենք խաղում, որովհետեւ
 շուտ շուտ անձրեւում է և աշնան հոտ է գալիս:

Այսօր, Աստուածածնայ վերափոխման տօնին, մեծ
 ուրախութեամբ եկեղեցի են տանում այգիների և արտերի
 պտուղները: Աստուածածնին պտուղները օհրնում են: Գիւ-
 ղական փոքրիկ եկեղեցին լիքն էր մարդկանցով: Բարի գիւ-
 ղացին ջերմեռանդութեամբ վերառաւ մի փոքրիկ խաղողի
 ճիւղ և մի բուռը ցորեն: Խաղողը նա կերաւ, պասը լու-
 ծեց, իսկ ցորենը տարաւ, իւր սերմացուի հետ խառնեց:
 Հայրս և մայրս այսօրից սկսեցին պտուղներ ուտել, իսկ
 մենք վաղուց լուծել էինք:

Դաշտերում արդէն շարուած են ցորենի տասնեակները.
 շուտով գիւղացին կ'երէ նորանց իւր կալը, որ անձրեւների
 տակը չմնան: Ահա աշխատասէր գիւղացին ջանասիրութեամբ
 կալում է. իսկ նորա փոքր որդին խուրձն է կրում հնձա-
 տեղերից:

Խուրճը կրկնեց յետոյ նա պարտաւ չէ ֆաշու. ա-
 րեղակի տարութիւնը պակասում է. երկինքը շուտ շուտ
 ամպում է և անձրեւներ է գալիս. գիւղացու ցեղերը փափ-
 կացել են. շուտով ցաքը կ'սկսուի: Ճանձերն էլ սխել են
 զգալի կերպով կծել. երեւում է, որ ամառը վերջանում է:

Ճանձ:

Շատ զեղեցիկ է ճանձը խոշորացոյց աղակու տակ,
 այնպէս չէ. նորա թւերը հիւսած են չափազանց ճար-
 տարութեամբ և ծիածանի գոյնով փայլում են: Նորա
 զլնի վերայ կայ երկու մեծ աչքեր, բայց իւրաքանչիւր
 աչքը կազմուած է բաղձաթիւ փոքրիկ աչերից: Բրդոտ ոտ-
 ների ծայրերին մաճուցիկ մաշկ կայ, որը օգնում է ճան-
 ձին մանդալ կոկ ապակու և առաստաղների վերայ:

Ճանձը ձու է ածում խոնավ տեղերում, աղբի մէջ:
 Միւս օրը ձուերից որդեր են դուրս գալիս (թրթուր),
 երկու շաբաթից յետոյ որդը կոկոն է դառնում. էլի երկու
 շաբաթ անցնում է և կոկոնից դուրս է գալիս փոքրիկ
 ճանձ: Այս ճանձը միւկնոյն տարին կարող է ձու ածել.
 բայց որովհետեւ ճանձը տարին չորս անգամ է ձու ածում
 և ամեն անգամ 80 կամ 90 հաա, ապա մոգածեցէք, թէ
 ինչքան կ'ընդմանային, եթէ նորանց ցուրաք, թռչունները
 և արաւելապէս սարդերը չ'հոտորէին:

Նկարագրեցէք ճանձը և նորա կերպարանափոխումները:

Ա. Ճ. Ո. Ի. Ն.

Աշնան նշանները:

Ծառերի կանաչ տերեւների մէջ զեղնազոյն տերե-
 ներ են շողջողում մանգաղն իւր գործը վերջացրել է ոս-

կիանման արտելում. միւս կողմը հեռուից կարմիրն են տալիս հովիտների երբեմն կանաչ գորգերը. ստուերախիտ այգիներում հասած պտուղները կախուած են:

Աշնան նշանները ամեն կողմից մարդու աչքի են ընկնում. այնտեղ, արևի տակ փայլելով, տատանվում է սարդի ոստայնը, այստեղ, արտերի տեղը երևում են մերկ ծղոտներ, իսկ այգիներում որթը իւր տերեւագուրկ ոստերի վերայ սև, սպիտակ և կարմրախառն ոխոյզներն է կախել. հնձած խոզանները տրխրացնում են դաշտերը, իսկ աշնացանը զմրուխտի նման փայլում է: Կալերում հնձուած հացաբոյսերը կալւում են. մէջը առաւօտեան սպիտակ քաթանի նման ծածկում է կապոյտ լճակը:

Ամբողջ օրը սայլերը ձանչում են. նորանք դաշտերից խուրճ են կրում կալը: Կալերում կամների չըխկ-չըխկոցը հեռուից լսվում է. կռուներների խումբերը շղթայաձև թռչում են բարձրից, զարդարելով բնութիւնը իրանց ներքաշնակ կրուկալով:

Ի՞նչ նշաններից էր իմանում դուք, թէ աշունը սկսվում է:

Ս տ ր դ:

Սաստիկ տաք ամառ էր. անթիւ ու անհամար մոծակներ, ձանձեր ու մթեղներ էին ժողովուել. նորանք սկսեցին մարդկանց կծել, նորանց տաք արիւնը ծծել: Այս բանը իմացաւ սարդը — վաղեմի զօրականը. նա սկսեց իւր ոտիկներով նիւթել, լարեք արձակել և այն ձանապարհները կտրել, որտեղից մոծակներ ու մթեղներ էին անցնում:

Նորա ոստայնի մէջ ընկաւ լալկան ձանձը. սարդը յարձակուեցաւ և կամենում էր սպանել նորան: Այն ժաժանակ ձանձը աղաչեց. «Պարոն Սարդ, դու ինձ մի տալա՛

նիր. ինձանից յետոյ իմ որբերս անտէք կ'մնան»: Սարդը խղճաց ձանձի վերայ և նորան ազատեց: Ձանձը թռաւ, հեռացաւ, բղղացրեց և ասաց. «Ե՛, դուք լալկան ձանձեր, մոծակներ ու մթեղներ, իմացէ՛ք՝ սարդը լոյս է ընկել. նա սկսել է ոտիկներով նիւթել, լարեր արձակել և ուղում է ձեզ ամենքիդ էլ սպանել: Թռան—փախան մոծակները և մթեղները, մտան տաշտերի տակ և սուտամեռնուկ տուին»:

Սարդը շատ սպասեց, բայց երբ տեսաւ, որ ոչոք իւրան մօտ հիւր չէ գալիս, այն ժամանակ գտաւ բնխաւոր բղէզին և ասաց նորան. «Ա՛յ բղէզ, գնա՛, թմբուկդ զարկիր և ամեն գեռուներին յայտնիր, որ սարդը վախձանուել է. նորան տարել են քաղաք և գլուխը կտրել են տուել»:

Բղէզը գնաց, թմբուկը զարկեց, բարձրացաւ տաշտի վերայ և բարձր ձայնով գոչեց. «Ի՞նչ էք դուք այդ տեղ մեռածի նման վերթալիւ. չէ՞ որ սարդն էլ կենդանի չէ. նորան քաղաք են տարել ու գլուխը կտրել տուել»:

Մոծակներն ու մթեղներն ուրախացան, դուրս եկան տաշտի տակից և ընկան սարդի ցանցի մէջ: Իսկ նա, աւազակը, ուրախացաւ, սկսեց խեղտել նորանց և խեղտելիս էլ ասում էր. «Ի՛նչ մանր էք դուք: Ի՞նչի ինձ մօտ շուտ շուտ չէք հիւր գալիս, ես ձեզ շատ եմ սիրում»: Այս ասելով՝ ամենքին խեղտոտեց և միայն կաշիները թողեց:

Փորձանքից պրծան, պատուհասի մէջ ընկան:

Գիւղացին ցորեն էր տանում ջրաղացը: Զուալը ծակ էր և մի քանի ցորենի հասիկներ թափուեցան ձանապար-

Հին: Ծտերը խնդրեն ցած եկան և օկանուտեղ: Հատիկ
ները, բայց աքաղաղը մօտ վազեց և ծտերին հալածեց:
Ծտերը զանգատուեցան ցինին: Յինը իւր օրէնքով դատեց
նորանց, առաջ պատրուեց աքաղաղին, խակ յետոյ խեղ
տուեց ծտերին:

Պաշտեցի մուկը:

Վախկոտ մոխրագոյն գազան,
Հատ մեծ է քո երկիւղը.
Ոտներդ զգոյշ ես, փոխում,
Սիրտդ սաստիկ է շարժվում:
Բիւ վախեցիր.
Ես չար մարդ չեմ,
Քեզ չեմ հալածիլ,
Միամիտ կացիր:
Դու գող ես, բայց ինչ անես,
Խելած, ինչով պիտի ապրես,
Ի՞նչով կեանքդ ապահովես.
Քանի մի հասկ որ վերառնես
Իբրեւ պաշար
Չմեռուայ համար,
Ի՞նչ կ'լինի, երբ դաշտերում
Նոքա առատ են վայրթափվում:
Ի՞նչ խրճիթդ քար ու քանդ եղաւ,
Եւ հողի հետ հաւատարուեցաւ:
Դու նոր հողը պիտի փորես,
Փափուկ մամուռ պիտի ճարես,
Նոր առն շինես,
Մէջը սարես:

Չորս կողմեր փռող քամուց,
Խիտո ներգործող սառնամանուկ
Աղաւ լինես:

Մանկական յիշողութիւնից:

Երեկ ես շատ ուրախ էի մեր այգին քաղում էինք:
Առաւօտեան շատ վաղ մեր բոլոր ընտանիքը հաւաքուե-
ցան այգին. խաղողի գեղեցիկ ողկոյնները փայլում էին տե-
րեւթափ որթերի վերայ:

Այսօր մեր այգին իւր առաջին գեղեցիկութիւնը
չունի, միայն տեղ տեղ երևում են մի մի հատ պտուղներ
կամ ճիւղեր:

Կանաչ անտառներն այժմ փայլում են զանազան
դոյնով. բարդենին կարծես ոսկեզօծուած դողդողում է.
քամին պոկում է ծառերի դեղնած տերեւները. ամեն բան
փոխվում է. դաշտերի խոտերը թաղամած են. բնութիւնը
զրկվում է իւր կանաչ զարդարանքից, առաւօտները երկիրը
ծածկվում է սպիտակ եղեւմով, որը արեւի ճառագայթ-
ների տակ անդամանդի պէս փայլում է:

Զինձաժ արտ:

Աշունն սկսուեց, ծիծառն թռաւ.
Անտառն է դատարկ, դաշտը մերկացաւ.
Միայն դաշտումն անհուն մնացած
Տխուր ու արտում մի արտ կայ կանդնած:
Կարծես հասկերը առում են միմեանց,
Ի՞նչպէս միմեանց մենք այս ցրտի տակ:
Հատ տխրալի է գեպին խոնարհուել
Եւ ատօք պտուղն հողում թաթախել:

Ամենայն զիշեր մեզ մօտ իջնում են
Անցնող թռչուններն ու մեզ ուսում են.
Գազաններն տրորում, քամին մեզ ծեծում:
Ո՞ւր է մեր տերը, ի՞նչ է սպասում:

Քամին տալիս է նորանց վատ համբաւ.

Մահը ձեր տիրոջ երկրից վերառաւ:

Այո՛ւն:

Երեկոյեան վերջալուսին

Ծիծեռնակները չքացան.

Սարեակները խումբեր կազմած

Մեր կողմերիցը հեռացան:

Ամեն բան հանդարտ քնած է.

Դուրսը խաւար է տիրում.

Զոր տերերը խշշում է,

Եւ քամին դուռը ծեծում:

Մանկական յիշողութիւնից:

Դեկտեմբերին.

Այսօր մենք զարթեցանք և տեսանք, որ մեր սենեակը
շատ լոյս է, թէև դեռ արեգակը չէր դուրս եկել: Մենք
վազեցինք դէպի լուսամուտը և ուրախութիւնից աղաղա-
կեցինք:

Փափուկ փայլուն ձիւնը հաստ կեղևով ծածկել էր
մեր բազը, տան կտուրները, հաւանոցը, սրահը — բոլորը
ձիւնով ծածկուած էր: Իմ հօրեղբայրս վեր առաւ հրա-
ցանը և դնաց հանդը, իսկ մեր փոքրիկ շունը դուրս վա-
զեց խոհանոցից և թաթիկներով հաստ ձիւնը ճղելով
վազվազում էր:

— Չմե՛ռ, ձմե՛ռ, աղաղակեցինք մենք և ծափահարե-
ցինք. շուտով հագնուեցանք, շուտով նախաճաշիկ արինք,
խսկոյն վազեցինք դուրս և սկսեցինք ուրախ ուրախ ձնա-
գունտ խաղալ:

Կախարդ ձմեռը:

Եկաւ կախարդ ձմեռը,

Սկաւ, աշխարհս բռնեց,

Ծառերն բխրեղով պատեց,

Դաշտերում գորգեր սփռեց —

Ողջ աշխարհս ծերացրեց:

Գետի ափին ու երեսին

Միօրինակ սաւան ծածկեց:

Յուրտն սկսեց:— Մենք ուրախենք,

Ծերուկ ձմեռը կրտսերնք:

Սիրուն ու սպիտակ կաւով,

Ծածկուել է գետը սառուցով:

Երեխայքը շատ ուրախ են,

Սղղաններով միշտ սղղում են:

Փայլում է նոր ձիւնն ու թափվում

Ասաղի նման, աշխարհ լցնում:

§ 4. Քանոնը ուղղել է, իսկ գերանդին . . . Լաւ
թուղթը կոկ է լինում, իսկ վատը . . . Մեղրամամը փա-
փուկ է, իսկ երկաթը . . . Արծիձը ծանր է, իսկ փետուրը
. . . Թրթնջուկը թթու է, իսկ օշինդրը . . . Պողպատը
ջել է, իսկ ատակին . . . Խոտը կանաչ է, իսկ երկինքը
. . . Ոսկին դեղին է, իսկ արծաթը . . . Կաթը սպիտակ
է, իսկ թանաքը . . .

§ 5. Խնձորն երբ լինում է ն. (ձեռն կող-
մից) կորը կամ երկարաձեռն (գոյնի կողմից) դեղին, կանաչ,
սպիտակ, կարմիր, վարդագոյն, (պնդութեան կողմից) պինդ,
փափուկ, փուխը. (Համի կողմից) թթու, քաղցր, թթուաշ:
Ինչպէս է լինում տան ձը ձեռն, գոյնի, պնդու-
թեան և համի կողմից:

Ինչպէս է լինում կեռասը ձեռն, գոյնի և համի
կողմից:

Ինչպէս է արծաթ փողը ձեռն, գոյնի, պնդու-
թեան և ծանրութեան կողմից:

Ինչպէս է հինգ կոպէկ անոցը ձեռն, գոյնի,
պնդութեան և ծանրութեան կողմից:

§ 6. Պատիկ է, բայց ճատիկ է:—Անբանը
քան շինելիս հիւանդ է, հաց ուտելիս առողջ:—Ան-
հունար մարդու լեզուն միշտ երկար է լինի:—Խել օ-
քին մին, յիմարին քանի կողմէ:—Խօսքը մեծին,
ջուրը պատիկին: Սուտ առողի տունը կրակ ըն-
կաւ, ուղը չհաւատաց:—Փիս մարդը դատկին էլ փխկը-
լինի:

Մարդիկ լինում են. բարձրահասակ և
կարճահասակ, նիհար և պարարտ, վայելչակազմ և կորա-
կազմ, ուժեղ և թույլ, տուող և հիւանդ, երիտասարդ
և ծերունի, հեռանկատ և մերձանկատ, ազքատ և հա-
րուստ:

Մարդիկ պէտք է լինին. բարի, արդարացի,
ազնիւ, ջանասեր, քաղցրասարկ, քաղաքավարի, կարեկից,
համբերատար, խնայող, առատ, ճամբորտասու, համարձակ,
ներողամիտ, խոնարհ:
Մարդիկ պէտք է լինին. չար, խաբէբայ,
հպարտ, կռուարար, վեճիկներ, ազահ, ժլատ, յամառ,
երկչոտ, ծոյլ:

§ 7. Հակառակ յատկութիւններ: Գով-
հանէտը ջանասեր է, իսկ Մկրտիչը ծոյլ: Վարդուհին
հնազանդ է, իսկ Մանուշակը . . . Հայիկը համարձակ է,
իսկ Արշակը . . . Գովհանէտը և Մկրտիչը բարի են, իսկ
Մանուշակը և Գրիգորը . . . Չ'պէտք է ծածկամիտ լինել,
այլ . . . Թող հարուստը մասը տայ . . . (նւմ): Փոք-
րերը պիտի պատիւ տան . . . (նւմ). Չ'պէտք է լինել
շռալ, այլ . . . Չ'պէտք է լինել ժլատ, այլ . . . Չ'պէտք է
լինել կոպիտ, այլ . . . Մի լինիք երկչոտ, այլ . . .

§ 8. Քար է հացը, ցորեն հացի աղբատ եղ-
բայրն է: Փայտ է ամանով կերակուր չեն եփիլ: Քար է
տունը հիմնաւոր կ'լինի:

Ինչ ամաններ են շինում փայտից: Փայտից շինում
են փայտէ ամանեղէններ: Ինչ ամաններ են շինում
պղնձից և կաւից: Ինչ փողեր են կտրում ոսկուց, ար-
ծաթից, պղնձից: Ինչ շորեր են կարում մահուկից: Ինչ
պատիներ են հիւսում ծաղիկներից: Լուսամուտի վերայ
ինչ շքանակներ և ինչ փեղկեր կան:

§ 9. Էսորուա յիւշը, էգուցուա յիւշը:
—Էսորուա զործք վաղուան մի՛ գցիր:—Առաւօ-
տուա շառը լաւ է, քանց իրիկուա խէրը:—Ձին
ընտանի կենդանի է, իսկ արջը վայրենի զապանէ:

Մայր. լեզ. բ. տ. ն. 8.—Ղ.

Այսօր դու ո՞ր օրուան դասերդ ես սովորում: Ես սովորում եմ վաղ ուշադասերդ: Ի՞նչ դաս պատրաստեցիր դու երեկ: Ո՞ր օրերն են երկար լինում և որո՞նք կարճ: Որ գիշերներն են աւելի ցուրտ լինում և որո՞նք տաք: Ի՞նչ կենդանիներ է պահում գիւղացին: Գիւղացին պահում է ընտանի կենդանիներ: Ի՞նչ կենդանիներն են զգուշանում գիւղացին: Ո՞ր թռչուններն են տանը ապրում և որո՞նք դուրսը:

§ 10. Երկաթը ծանր է, իսկ արծիձը աւելի ծանր է: Զին բարձր է, իսկ ուղտը . . . Սկիւռը խորամանկ է, իսկ աղուհն . . . Արծաթը թանկ է, իսկ ոսկին . . . Պղինձը պինդ է, իսկ երկաթը . . . Թելը բարակ է, իսկ մազը . . . Թուղը հաստ է, իսկ քոշը . . . Եղենին պինդ է, իսկ կաղնին . . . Տանձը քաղցր է, իսկ մեղրը . . . Մեղուն փոքր է, իսկ ձանձր . . . Կաթը հեղուկ է, իսկ ջուրը . . . Դանակը սուր է, իսկ ածելին . . . Գետը խոր է, իսկ ծովը . . . Մենք ունինք մեծ այգի. դուք ունիք աւելի մեծ այգի. նորանք ունին ա մեծ այգի: Ես ունիմ զեղեցիկ զիրք. դու ունիս . . . Նա ունի . . . Դուք ունիք սպիտակ թուղթ. մենք ունինք . . . Նորանք ունին . . .

§ 11. Ի՞նչ է լինում առաւօտը. Արեգակը դուրս է գալիս, լուսանում է: Թռչունները արթնանում են, թռչում են, կերակուր են զանում և բուն են շինում: Գիւղացիք վեր են կենում, հագնվում են, արթնում են, նախաձաշիկ են անում և զնում են բանելու: Տանտիկիները հնոցները վառում են և կերակուր են եփում: Երեխայք վեր են առնում իրանց զբոսը և զնում են ուսումնարան:

Ի՞նչ եղաւ երեկ առաւօտ. Ի՞նչ կ'լինի վաղը առաւօտեան:

§ 12. Ի՞նչ է զաւերելի երեկոյ. Արեգակը մայր մտաւ: Թռչունները լռեցին և իրանց բները մտան: Տաւարը և ոչխարը յետ դարձան գիւղը: Գիւղացիք դորձերը թողեցին և գնացին տուն: Երեխայքը քնեցան:

Ի՞նչ է լինում այսօր երեկոյեան. Ի՞նչ կ'լինի վաղը երեկոյեան:

§ 13. Այժմ դարուն է: Զիւնը հարվում է: Գետերը բացվում են: Նոր խօտը բռնանում է: Տաւարը զնում են արածելու: Գիւղացիք արօրը պատրաստում են: Ի՞նչ եղաւ անցեալ գարնան. Ի՞նչ կ'լինի ապագայ գարնան:

§ 14. Ի՞նչ է զաւանցեալ ամառ: Օրերը երկարեցան, տաքացան: Արտերը հասան Գիւղացիք հունձ արին: Երեխայքը գնացին անտառը պտուղ քաղելու:

Ի՞նչ է լինում այս ամառ. Ի՞նչ կ'լինի եկող ամառ:

§ 15. Այագ աշուն: Աշունը կ'գայ, օրերը կ'կարճանան, գիշերները կ'երկարեն: Մեղմ անձրևներ կ'գան և ցրակը կ'լինեն: Գիւղացիք ցորենը կ'աղան, կանայք թել կ'մանեն: Լուսամուտները ու դռները կ'պնդացնեն: Վառարանները կ'վառեն: Հաստ շորեր կ'հագնեն:

Ի՞նչ են անում ներկայ աշնան. Ի՞նչ արեցին անցեալ աշնան:

§ 16. Այժմ ձմեռ է: Ցրտերը սկսվում են: Երկիրը ձիւնով ծածկվում է, իսկ գետերը ծածկվում են սառուցով: Մարդիկ հագնում են մուշտակներ և քուրքեր: ձանապարհներին կարաւանները շարժվում են: Մանուկները ձնագունտ են խաղում:

Անցեալ ձմեռը. Ապագայ ձմեռը:

§ 17. Ասե՛ք են անուտութիւն և ոչ թէ անուտ կուլ:—Բանն արա՛յ, յետոյ պարծեցի՛ր:—Գուռդ փակ պահի՛ր, հարեանիդ գող մի բռնի՛ր:—Երեխին բան դի՛ր, հետը գնա՛:—Իմաստունի հետ քար կ'ըլ՛ի, յիմարի հետ փլաւ մի՛ ուտի՛ր:—Ընձ տե՛ս, քեզ լաց, որտեղ որ ես, զայիմ կ'աց:—Ի՞նչ տեղ հաց, էտեղ կ'աց:

Ան ծուլանար, աշխատիր: Յերեկը գործիր, իսկ զիշերը . . . Քո ունեցածը պահպանիր, իսկ ուրիշն ունեցածի վերայ աչքդ մի' . . . Մանգալու ժամանակ մանկի, գործի ժամանակ գործդ . . . Շուտ վերկացէք, ձեռքերներդ և երեսներդ լուացէք, մտքներդ . . . Աստուծուն . . . զասներդ . . .

Ի՞նչ է հրամայում հինգերորդ պատուիրանը. ի՞նչ է հրամայում երրորդը. ի՞նչ վեցերորդը:

§ 18. Որ գործդ չի նեւ, միշտ կ'վարձատրուես: Քանի փոքր ես աշխատիր, որ մեծանաս չ'զղջաս: Որ ծերանաս, ծերի պատիւը կ'իմանաս: Ինչ որ ցանես, այն կ'հնձես: Ինչ որ աշխատես, այն կուտես: Ազաւին որ մ'նայ, իրան ձագից սիրունը չ'կայ:

§ 19. Յովհաննէսը կտրեց մէկ ծառ: Գիւղացին կտրատեց շատ ծառեր: Ես մի կտոր հաց կտրեցի և կերայ: Մայրս կտրատեց հացը և դարսեց սեղանի վերայ:

Հայր ուներ երկու ընկոյզ. նա մինը կտրեց: Ես իմ բոլոր ընկոյզներս կտրատեցի: Ես աշխատում եմ չ'պատռել իմ տետրակը, աշակերտները պատըռաւում են իրանց տետրակները:

Գայլը ընկաւ հօտի մէջ և բոլոր ոչխարներին խեղատոտեց:

§ 20. Բարձր սար: Բարձր սարը հեռուից տեսնվում է: Չմեռը . . . (ի՞նչ) գլխին շատ ձիւն է լինում: Ես տեսայ . . . (ի՞նչ): Ուրախալի է նայել ձիւնապատ . . . (ի՞նչին):—Շատ աղբիւրներ բղխում են . . . (ի՞նչից):—Գծուար է անցնել . . . (ի՞նչով):—Մեծմեծ ծառեր չեն բուսնում . . . (որտեղ):

Հայաստանում կան շատ բարձր սարեր: Բարձր . . . (ի՞նչերի) ձիւնը ուշ է հալվում: Ես տեսել եմ շատ . . . (ի՞նչեր): Գարնանը ուրախալի է նայել ձիւնապատ . . . (ի՞նչերին):—Շատ աղբիւրներ բղխում են . . . (ի՞նչերից):—Մեր երկիրը լեքն է . . . (ի՞նչերով):—Վայրենի այծերը ասլորում են . . . (ի՞նչ փեղերում):

§ 21. Գեղ եցի և կեղեցի: Մեր քաղաքումը կայ գեղեցիկ եկեղեցի: Գեղեցի . . . կտուրը ծածկուած է քարով: Ես տեսել եմ մէկ գեղեցիկ . . . Պապս մէկ ջահ ընծայեց . . . Այսօր առաւօտեան շատ մարդիկ դուրս եկան . . . Մոտ մի երդուիր . . . Ես աղօթում եմ . . .

Եկեղեցիներ: Եկեղեցիները ունին սեղաններ . . . սեղանները զարդարուած են պատկերներով: Մեր պապերը շինել են շատ . . . հորանք շատ ընծաներ են տուել . . . Գիւղերում . . . (ինչերից) բարձր տներ չկան: Մեր աշխարհը լեքն է գեղեցիկ . . . Մարդիկ աղօթում են . . .

§ 22. Շուտ շուտ մտակերկնդանի է: . . . հաւատարմութիւնը ամենին յայտնի է: Իմ հօրեղբայրս ունի որսի . . . Ես այդ . . . շատ լաւ է կերակրում: Որսի ժամանակ այդ . . . քաջը չկայ: Այդ . . . հօրեղբայրս շատ կենդանի որսեր է բռնել: Այդ . . . երկիւղ ասած բանը չկայ:

§ 23. Գոհարից թանկ է իմ . . . (ի՞նչը)-Երկու ունքեր ձգուած են . . . (ի՞նչ) վերելք: Ամենից աւելի պահպանիր քո . . . (ի՞նչը):—Պէտք է հաւատամ իմ . . . (ի՞նչին): Տրտմութեան ժամանակ արատաւքը թափվում է իմ . . . (ի՞նչից):—Ես տեսնում եմ . . . (ի՞նչով):—Արատաւքի կաթիլներ նկատուեցան նորա . . . (ինչում):

§ 24. Հին դարաւորն է: իմ ձեռքիս վերայ կան
հինգ մատներ: Գիշուար է մարդուն առանց . . . Սաստիկ
ցուրտը մնաս է . . . Հիւսնը կտրեց իւր . . . իմ . . .
մէկը երկար է միւսից: Ես շատ բան եմ շինում իմ . . .
Ամենեկն մնասուածը չ'կայ իմ . . . (*)

§ 25. Վարեց: (Ո՞վ) Գիւղացին վարեց: (ի՞նչ) Գիւղացին վարեց օրավարը: (ի՞նչով) Գիւղացին
օրավարը վարեց արօրով: (Ո՞րտեղ) Մեւրտան յե-
տեւը գիւղացին օրավարը վարեց արօրով: (ե՞րբ) Երեկ
մեր տան յետեւը գիւղացին օրավարը վարեց արօրով:
(ի՞նչպէս) Երեկ մեր տան յետեւը գիւղացին օրավարը վա-
րեց սաստիկ ջանասիրութեամբ:

Փորեց: Ո՞վ. ի՞նչ. ո՞ւր. ե՞րբ. ի՞նչով. ի՞նչպէս:

Կ'կտրէ. ո՞վ. ի՞նչ. ո՞ւր. ե՞րբ. ի՞նչով. ի՞նչպէս:

Գրում է. ո՞վ. ի՞նչ. ե՞րբ. ի՞նչով. ո՞ւր վերայ:

§ 26. Փորոտեցաւ. ի՞նչ. ո՞ւր. ե՞րբ. ի՞նչով. ի՞նչպէս:

Կտրվում է. ի՞նչ. ո՞ւր. ե՞րբ. ի՞նչով. ի՞նչպէս:

Կ'գրուի. ի՞նչ. ո՞ւր. ե՞րբ. ի՞նչով. ի՞նչպէս:

§ 27. Ման է գալիս. ո՞վ. ո՞րտեղ. ե՞րբ. ի՞նչով. ի՞նչպէս:

Իջնում է. ո՞վ. ո՞րտեղ. ե՞րբ. ի՞նչով. ի՞նչպէս:

(*) §§ 23 և 24 թուական անունների համար է գրած, որի մի
պէտք է ուսուցիչը իւր հարցերը ուղղի այնպէս, որ թուական-
ները եւ գոյականի հետ պատասխանեն: Դասական թուականի
կրթութեան համար ուսուցիչը հարցնում է. որոնք են քս մատ-
ներդ, համարիր . . . Ո՞րն է առաջին մատը . . . երկրորդը և այլն:

Կ'գալ. (ձիով) ո՞վ. ո՞րտեղ. ո՞ւր. ե՞րբ. ի՞նչով.
ի՞նչպէս. ի՞նչի. ի՞նչպիսի ձիով:

Վարըն է. ի՞նչ (սնձորը). ի՞նչպիսի. ե՞րբ.
ո՞ւր. ի՞նչից. ի՞նչի վերայ:

§ 28. Կարում է. ո՞վ. ի՞նչ. ո՞րտեղ. ո՞ւր հա-
մար. ի՞նչից. ի՞նչով:

Կօշկակարը կարում է. ի՞նչ. ո՞րտեղ.
ո՞ւր համար. ի՞նչից. ի՞նչով:

Որմն աղիւր ենք շինում են. ի՞նչ. ո՞ր-
տեղ. ի՞նչից. ի՞նչպէս: (*)

§ 29. Սեղան. ի՞նչ բան է սեղանը. ո՞վ է շին-
ում սեղանը և ի՞նչից: Ի՞նչ կայ սեղանի տակին: Ի՞նչ
կայ սեղանի երեսին: Ի՞նչ են դնում սեղանների վերայ:

§ 30. Գրչահատ. ի՞նչ բան է գրչահատը:
Գրչահատի լեզուակը ի՞նչից է շինած: Ո՞րտեղ են շինու-
մ գրչահատը: Ի՞նչ են անում գրչահատով:

§ 31. Տուն. ի՞նչ բան է տունը: Ի՞նչից են շինում
տները: Ո՞վ է շինում փայտէ տունը և ի՞նչից: Տան վերևը
ի՞նչ կայ: Կողքերին ի՞նչ կայ: Տան պատերում ի՞նչեր են
լինում:

§ 32. Հաց: Ո՞վ է թխում հացը և ի՞նչից: Ի՞նչից
են շինում խմորը: Ո՞վ է աղում այլերը, ո՞րտեղ և ի՞նչից:
Ո՞րտեղ են աճում հացահատիկները և ե՞րբ: Ո՞վ է մշա-
կում արտերը և ի՞նչով: Ի՞նչ է հարկաւոր ցորենի աճելու
համար:

(*) Այս բոլոր կրթութիւնները §§ 25, 26, 27, 28,
պէտք է փոփոխել այլ և այլ թուերով եղակից յոգնակի, յոգնա-
կիկից եղակի և ընդհակառակն. կարելի է փոփոխել նոյնպէս ե-
ղանակներով և ժամանակներով:



§ 33. Գրեցէ՛ք նոյնպէս սեղանի, քարետախտակի և
դրատախտակի մասին: Գրեցէ՛ք, [Թէ ի՞նչ է անկում դասա-
տանը: Ի՞նչ է անկում տանը և այլն (Առաջ հարցերը
գրեցէ՛ք, յետոյ նորանց պատասխանները):

§ 34. Գրեցէ՛ք նմանապէս կատուի, շան, ձիու և
կովի մասին. գրեցէ՛ք բաղի մասին: Նկարագրեցէ՛ք այգին,
պարտէզը, ձեր տունը և այլն:

§ 35. Գրեցէ՛ք ծառի և դեղձանիկի մասին: Գրեցէ՛ք,
[Թէ դուք ի՞նչ արիք դասատանը: Գրեցէ՛ք, [Թէ ի՞նչ էք
մտադիր անելու վաղը: Գրեցէ՛ք, [Թէ ի՞նչ արիք դուք ան-
ցնալ ամառը: Գրեցէ՛ք ձեր ընկերին, [Թէ ի՞նչպէս անցկաց-
րիք դուք զատիկը. ի՞նչպէս անցկացրիք ծնունդը: Գրե-
ցէ՛ք ձեր հօրը, [Թէ ի՞նչով էք պարապում դուք զա-
ստանը:

Վ Ե Ր Զ





Գինն է 33 կօպ,

Տասից աւելի գնողներին 33 կ. հարկւրով գնողներին 30 կ.

Մայրենի լեզուի ք. տարուայ դեռ առաջին տպագրութիւնը ընդունուած էր այն բոլոր ուսումնարաններում, որոնք յիշուած են Մ. Լ. ա. տարուայ կազմի վերայ:

4576

2013



